

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԼԻԱՆԱ ՍՄԲԱՏԻ ՍԱՆԹՐՅԱՆ

**ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ
ՄԻՋԻՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
(2-րդ լրամշակված հրատարակություն)**



ԼԻԱՆԱ ՍՄԲԱՏԻ ՍԱՆԹՐՅԱՆ

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
(2-րդ լրամշակված հրատարակություն)**



ՍԵՖԱՆԱԿԵՐՏ - 2022

ՀՏԴ 811.19(07)
ԳՄԴ 81.51g7
Ս 191

Տպագրվել է Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
գիտխորհրդի 09.12.2021թ. N1-09/21/8 որոշմամբ

Գրախոսներ՝ Բ.Գ.Թ., դոցենտ Հ. Ղազարյան
Բ.Գ.Թ., դոցենտ Շ. Մինասյան

Խմբագիր՝ Բ.Գ.Թ. Կ. Առաքելյան

**Նվիրում են նահատակ ուսանողներին
պայծառ հիշատակին**

Սանթրյան Լիանա Սմբատի
Ս 191 Ժամանակակից հայոց լեզու. գործնական աշխատանքների ձեռնարկ
միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար (2-րդ
լրամշակված հրատարակություն).- Ստեփանակերտ:
«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ, 2022.- 116 էջ:

Ձեռնարկն ընդգրկում է ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանություն,
բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն, ոճաբանություն,
տեքստագիտություն բաժիններին վերաբերող վարժություններ: Գիրքը նախատեսված
է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների համար:
Այն կարող են օգտագործել նաև ավագ դպրոցի աշակերտները:

ՀՏԴ 811.19(07)
ԳՄԴ 81.51g7

ISBN 978-9939-1-1422-4

© «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ, 2022

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սույն ձեռնարկը միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների համար 2014 թվականին Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից հրատարակված «Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար» գրքի երկրորդ լրամշակված հրատարակությունն է, որի նպատակն է տեսական դասընթացը գործնական աշխատանքներով համալրելը:

Ձեռնարկը կազմվել է ժամանակակից հայոց լեզվի բոլոր մակարդակների (հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն, ոճաբանություն, տեքստագիտություն) թեմատիկ ընդգրկմամբ:

Փորձել ենք ապահովել կապը հայոց լեզվի և հայ գրականության միջև և աշխատանքում ներառել ծրագրային որոշ հեղինակների ստեղծագործություններն ամբողջությամբ կամ հատվածաբար՝ լրացուցիչ հնարավորություն ստեղծելով դրանք ընթերցելու: Քիչ չեն նաև ճանաչողական և դաստիարակչական բնույթի տեքստերը:

Ձեռնարկը բաղկացած է 6 բաժնից:

I բաժինը՝ հնչյունաբանությունը, վերաբերում է տառերի և հնչյունների հարաբերությանը, հնչյունների տեսակներին, հնչյունափոխությանը, վանկերին, շեշտին, ուղղագրությանը:

II-ը՝ բառագիտությունը, ընդգրկում է բառիմաստները, բառաշերտերը, բառակազմությունը, դարձվածներն ու բառարանների տեսակները:

III բաժինը՝ ձևաբանությունը, վերաբերում է խոսքի մասերին, դրանց հատկանիշներին ու քերականական կարգերին:

IV-ը՝ շարահյուսություն բաժինը, ընդգրկում է նախադասության տեսակներն ըստ հնչերանգի, ըստ կազմության, նախադասության գլխավոր և երկրորդական անդամներն ու դրանց տեսակները, դերբայական դարձվածով, գեղջված անդամով, ներդրված միավորներով նախադասությունները, բարդ նախադասության տեսակները, նախադասությունների փոխակերպումները, կետադրական նշանների կիրառությունը:

V՝ ոճաբանություն բաժնում, տեղ են գտել խոսքի պատկերավորման և արտահայտչական միջոցներին, գործառական ոճի տեսակներին վերաբերող առաջադրանքներ:

VI բաժինը՝ տեքստագիտությունը, վերաբերում է պարբերությանը, տեքստի համառոտմանն ու ընդարձակմանը, տեքստի կազմությանը, տեքստի վերլուծությանը և տեքստային այլ առաջադրանքների:

Սույն լրամշակված հրատարակությունում մասնակի կամ ամբողջությամբ փոփոխվել են առաջադրանքները, ավելացվել նոր առաջադրանքներ և նոր բաժին՝ տեքստագիտությունը:

Ձեռնարկը կարող է օգտակար լինել նաև ավագ դպրոցի աշակերտների համար:

Հեղինակ

ՀՆՁՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տրված բառերում որոշել հնչյունների և տառերի քանակը:

Ա. Հետզհետե, մտադրություն, եղկելի, առերևույթ, մարտակարգ, զորագլուխ, մահասարսուռ, անկշտում, արևահամ, սրարշավ, լուսնկա, շնորհագեղ, հուրհրալ, լուսաժպտուն, ոսկեվառ, հրաբողբոջ, լուսատերև, մխրճել, շքեղահյուս, ձյունապսակ, զմրուխտահավ, քնքշություն, սրտմտել, խռովահույզ, բուրաստան, նրբակերտ, խորհրդավոր, ողջակիզել, տխրադալուկ, ժպտադեմ, քմահաճ, խայտանկար, ուրվագծել, ժրաջան, արևավառ, մխաշաղախ, զնգզնգալ, արհամարհանք:

Բ. Կարմրածուփ, խստաբարո, սրբագործել, ոլորապտույտ, անհրապույր, գգվանք, տխրատեսք, մխիթարել, դեղնակարմիր, ոսկեդեղձան, խշխշալ, պարսպապատ, կտցահարել, ճանապարհորդ, կարոտակեզ, հարստություն, զրահապատ, նարնջագույն, որբևայրի, արևազօծ, պղնձագույն, ջրախոտ, հրդեհաձիգ, անդնդախոր, ժամանակաշրջան, որովհետև, մտահոգություն, պատսպարել, շնորհակալություն, խորախորհուրդ, պճնազարդ, ճրագալույց, սրտապատառ:

2. Քանի՞ ձայնավոր ու բաղաձայն հնչյուն կա տրված հատվածներում:

Ա. Բախտիդ ճակատը պիտի համբուրես
Եվ շնորհակալ պիտի լինես դու
Երջանիկ ու մեծ քո տառապանքից,
Որ հոգուդ վրա կնճիռներ չունես
Եվ խղճիդ վրա չունես ոչ մի բիծ: (ՀՍ)

Բ. Հայոց լեզուն անպարտելի Թուր-Կայծակին է հայոց,
Անմահության բաժակ դառած՝ միշտ շրթունքին է հայոց,
Ժամանակի աղորիքը ասորիքներ կուլ տվեց,
Հավերժությունն հայոց լեզվով հուր նժույգ-ձին է հայոց: (ՀԾ)

3. Վանկարել տրված բառերը հնարավոր բոլոր ձևերով:

Ա. Ստեղծագործություն, խստահամբույր, երևակայություն, ցնորք, հարթաքանդակ, թյուրիմացություն, զգացմունք, շքահանդես, փրփրադեզ, կրթաթոշակ, գարեջրատուն, հանդուրժողականություն, կասկածամիտ, համագյուղացի, սովերախիտ, երդմնազանց, քննադատ, գնդակահարություն, մենաստան, լուսանկարիչ, ջրանցք, ժամանակագրություն, խարտյաշ, գրասենյակ, ծխնելույզ, թղթապանակ, փոխադրամիջոց, ճարտարագետ, ինքնապաշտպանություն:

Բ. Զբոսանավ, ելևեջ, լեռնաշխարհ, ժայռակոփ, շարժում, հողագունդ, ստրուկ, սպեղանի, առանձնասենյակ, առաքինություն, պլանային, ցրտաշունչ,

թովույ, անձրևաջուր, ադամանդագլուխ, բազեավարժություն, էական, գեղագրություն, դժխոյություն, ուղղամիտ, դպրոցաշինություն, պղնձագործություն, դոնփակ, էլեկտրամագնիսական, մակերևութորեն, յուրօրինակություն, նախագգուշացում, նախաթոփչքային, պիտանիություն, սքանչելագործ, վաճառունակություն, վաղօրյա:

4. Որոշել բաց և փակ վանկերի քանակը:

Ա. Պատժարան, թափառական, բացակայություն, բեռնատար, հուշարձան, խորհրդավոր, լեռնաշխարհ, հուշահամալիր, արևադարձային, երկրամաս, հյուրընկալ, գագաթնակետ, ոսկեծոյլ, անուշահոտություն, ստվերախիտ, սպարապետ, պահակազոր, չարաճճի, սրտամաշ, չքնաղագեղ, խորասույզ, հայրենակից, հաշտություն, ճշմարտախոս, ծնողասեր, գթառատ:

Բ. Խորհրդատու, ցուցանիշ, դրամատիրական, այլաբանություն, բախտավոր, օտարական, խմբագիր, մեծաքանակ, արժանապատվություն, համաշխարհային, բազմավաստակ, սրբատաշ, նահանգապետ, ճառագայթ, գրասենյակ, լուսամուտ, վարագույր, թեթևաշարժ, թիկնապահ, նախասենյակ, ողջամիտ, բարեգործություն, կալվածատեր, դյուրահավատ:

Գ. Ինքնապաշտպանություն, մագաղաթ, անսահման, հայրենադարձ, մառախուղ, նորաստեղծ, հավերժություն, մայրաքաղաք, հանապազօրյա, իմաստուն, երկնականար, ներդաշնակություն, բազմություն, օվկիանոս, ահեղագոչ, վաղնջական, տիեզերախույզ, մարդասիրական, գաղափարակից, մաքրություն, նահապետական, կտցահարել, բնություն:

5. Ո՞ր բառերում վերջին ձայնավորը չի շեշտվում:

Ա. Ընթերցասեր, Երեմիա, օձագալար, որերորդ, պանդուխտ, ինչ-որ, ճառագայթ, միթե, քարքարոտ, ընդհակառակը, գոնե, բարեվայելույ, Լեոնարդո, բանաստեղծ, հինգերորդ, դուրս գալ, սանդուղք, երբևէ, հավերժական, քանիերորդ, երկիրը, միջօրե, ներս կանչել, գուցե, վիթխարի, մանավանդ, որևիցե, հնչերանգ, մարգարիտ, հիշողություն, տասներորդ, նամանավանդ, վաճառասրահ, օպերա:

Բ. Իսկապես, ինչ-որ երգի ինչ-որ հնչյուններ հասան մեզ և հանգան... Մենք նայեցինք միմյանց և լռությամբ որոշեցինք եղածը համարել խաբկանք ու հայլուցինացիա... Ի՞նչ կար զարմանալու. գուցե այն, որ առաջներում նա չէ՞ր աղոթում և հիմա՞ է փորձում կապ հաստատել աստծո հետ... Մեծ դժվարությամբ «ճապոնացին» կարողացել էր զգուշությամբ, հաղթահարելով դժվարությունները, հասնել տեր հորն ու կռացած, շշուկով պատմել իր երազը: (ԳՄ)

Գ. Աղջկա ներս մտնելուց մի կարճ ժամանակ հետո մայրը վեր կացավ, ինչ-որ փսփսաց նրա ականջին և, ներողություն խնդրելով մեզնից, դուրս գնաց: Սառան

նրան ճանապարհ դրեց մի երկար, անհաշտ հայացքով: Պարզ երևում էր, որ ատում էր մորը և ամենևին չէր ծածկում այդ բանը: (ՆԴ)

6. Շեշտադրել տրված բառերն ու հատվածները:

Ա. Զորագլուխ, նամանավանդ, ուամիկ, մարտավարություն, քանիերորդ, շարժում, վրիժառու, դուստր, ինչևէ, միթե, վեհագույն, գուցե, ասպանդակ, ոգեկոչել, գոնե, օրհասական, գիսակ, սաղավարտ, ուշակորույս, օրապահիկ, վեհափառ, փոքրահասակ, ձյունածածկ, վեր կենալ, այրուձի, ռադիո, Իռլանդիա, հնագետ, պղպջակ, թեյաման, թիկն տալ, քարափ, մանուշակ, հողակտոր, ձայն տալ, միգուցե:

Բ. Նրա հայրենիքը եղել է քարոտ Սասունը, այդ խուլ երկրի ամենախուլ անկյունը, որտեղ ձորերը դառնում էին կիրճեր և լեռների գագաթները՝ ապառաժներ: Տաք կիրճերում, լեռնային վտակների ափերին, կանաչում էր վայրի խաղողը և նրա որթը մագլցում էր ժայռերի վրա: Աճում էր և վայրի հոնը, երբեմն թուզը: Իսկ բարձրերում, որտեղ քարափների վրա ցրված էին նրանց աղքատ հյուղակները, ցանում էին կորեկ և վաղահաս ցորեն: Երբ հասնում էր կորեկը, ձորերից բարձրանում էին գազանները: Մարդիկ արտերի եզրին խարույկ էին վառում, որպեսզի արջերը չտորոեն կորեկը: (ԱԲ)

Գ. Կայծակը լեռան հասակը չափեց,
Եկավ կանգ առավ խարսխի վրա:
Լեռան թիկունքը կայծակը չափեց,
Կանգ առավ ամպի պարսպի վրա:
Կայծակը լեռան քնքշանքը չափեց,
Եկավ կանգ առավ ամրության վրա,-
Որձաքարի գուղձն ատամին խփեց
Եվ ադամանդի բեկորը նրա: (ՀՍ)

7. Լրացնել բաց թողնված տառերն ու երկհնչյունները:

Ա. Խոր_ուրոր_, ար_ել, հեղ_ուցիչ, Անան_ա, Սա_վել, թար_ման, սանդու_ք, կա_կա_ուն, դափն_արդ, ազ_ազ, զը_ալ, խո_կոր, հանապազ_րդ, եղերեր_, շա_գամ, ովևից_, գիշեր_թիկ, ջրօր_նեք, Ռաֆա_ել, ճեպ_նթաց, լաբորատոր_ա, Ամալ_ա, Նապոլ_ն, եր_ն, թ_րտալ, սրտմաշու_, Մա_վել, աղ_ան, օ_ան, մտա_ածին, ելև_ջ, գեղ_, հանապազ_րյա, ոսկեզ_ծ, ովև_, պանթ_ն, Օթե_ո, ֆել_տոն, Եղ_ազար, Օ_սեն, վայր_ջք, հ_դս ցնդել, ճ_նակյաց, ջրար_ի, իդ_ալ, փաս_ան, Սոֆ_ա (քաղաք), Բարդուղիմ_ս, Ա_ղանստան, կմա_ք, խոնար_ել, ա_բասիր, խոչ_նդոտ, գ_ել, մ_մուռ:

Բ. Գիշերուզ_ր, ռել_եֆ, հն_աբան, մարմար_ոն, հա_շտապ, անդամալույ_, ճրագալույ_, առօր_ա, առօր_ական, մեղմ_րեն, մանր_, գա_ա_, փ_ախտ, Ազար_ա, որ_կալ, հա_ճապակի, ա_բարիշտ, ա_բարտավան, զվար_, լվա_ք, դժո_ք, մեղմ_րոր, թերմա_ք, ծեծկ_տուք, տրտմաշու_, փսփսու_, Երեմ_ա, Արաքս_ա, բա_բա_

Վիկտոր_ա (անձնանուն), քամել_ոն, ըն_իմություն, ռեժիս_ր, Օֆել_ա, միջ_րե, մում_ա, չ_նկծվել, Մար_անա, համբ_ր, դող_րոցք, զի_ել, գո_ի, սպանա_, դ_խեմ, Սուք_աս, սիրե_, բր_ել (մանրացնել), միլ_ոն, փայծա_, փղ_կալ, ու_ածիգ, օ_լան:

Գ. Ջար_, վշտա_ուկ, զար_նել, խեղ_ուկ, բազմատա_, մ_կածուփ, արհամար_ել, անշնոր_ք, աման_ր, ա_ցան, հաղար_, օրեց_ր, ճի_ք, տրտմ_րոր, թխվա_ք, պ_նանք, պ_րանք, կտրի_ (քաջ), եր_իկ, հար_ (դարման), հոր_ (վարար), սի_ֆոնիա, ս_րթնել, փ_ել (ծաղկել), է_ուց, եր_ալ, թր_ել (թացացնել), առ_ջ, պախուր_, չ_գնել, խա_շիկ, խա_ուսիկ, գո_գո_ալ, թ_թուր, կե_ե, ամբ_ն սյու_, սու_, հա_շտակել, սպր_ել, ա_բարտակ, Սոն_ա, էլ_նորա, զմրու_տ, Շահանդու_տ, ու_ճանալ, ոսկ_որել, աս_ալտ, բաղար_, կ_կտուր, համբար_ում, բաց_թյա, շողոքոր_, խարխա_ել, խա_անել, ա_խազ:

8. Անհրաժեշտ տեղում գրել մեծատառով:

Ա. փոքր մասիս, «գրական թերթ», նոր տարի, մեծ բրիտանիայի և հյուսիսային իռլանդիայի միացյալ թագավորություն, անանիա շիրակացու մեղալ, շախմատի համաշխարհային ֆեդերացիա, մեծ եղեռն, սուրբ հովհաննես եկեղեցի, աշոտ երկաթ, եռյակ դաշինք, սևանա լիճ, անի-կամախ, իվան ահեղ, միավորված ազգերի կազմակերպություն, մայր թերեզա, հարուն ալ ռաշիդ, սուրբ մինաս, գայլ վահան, ջորջ Նոել գորդոն բայրոն, անվտանգության խորհուրդ, սեն գոթարդ, ձենով օհան, բուենոս այրես, նար-դոս, սահակ պարթև, ֆրանսիայի ազգային ժողով, աֆղանստանի իսլամական պետություն, կիմ իր սեն, ալեքսանդր սերգենիչ պուշկին:

Բ. օսեթ-ալանիայի հանրապետություն, եղիշե արգարի սողոմոնյան, արա գեղեցիկ, ադիս արեբա, ձախորդ փանոս, հեռավոր արևելք, մեծ արջ, սուրբ ստեփանոս, անդրեա դել սարտո, վիլիելմ ֆոն հումբոլդտ, լա մանշ, նոր արեշ, ժաննա դ'արկ, մուլնու սուրբ գևորգ, առյուծաձև միեր, սողոմոն իմաստուն, նյու յորք, ծիր կաթին, վասպուրականի մոկաց սուրբ մինաս, «ամբոխները խելագարված», արդ էլ քերիմ, լե կրեզո, նոբելյան մրցանակ, հարյուրամյա պատերազմ, զատկի տոն, կիևյան փողոց, պատվո լեգեոնի շքանշան, «մենք ենք, մեր սարերը», բարձր հայք, հրազդանի ծոր, հո շի մին, տիգրան երկրորդ, հին հունաստան, մասիս սար:

Գ. մառ ցգեղուն, մխիթար սպարապետ, քաջ նազար, վերին արտաշատ, յասնայա պոլյանա, սուրբ աստվածածին, բելառուսի հանրապետություն, արաբական միացյալ ամիրայություններ, հակոբ մելիք-հակոբյան, անբան հուռի, իսիկ կուլ, նիժնի նովգորոդ, ընծայից սուրբ աստվածածին, բողոեն դե կուրտենե, շառլ դը գոլ, իլ դը ֆրանս, լա պլատա, մարտիրոս սարյան, մշո սուրբ կարապետ, արիության մեղալ, թոնդրակյան շարժում, թարգմանչաց տոն, տյառնընդառաջի տոն, թարթառ գետ, ծաղկազարդի տոն, փարիզյան կոմունա, պարսից ծոց, հյուսիսային սառուցյալ օվկիանոս, խրիմյան հայրիկ, սեն պիեռ, ռիո դե ժանեյրո, փոքր ասիա:

Դ. գամառ-քաթիպա, պլինոս ավագ, քաջ նազար, գերմանիայի դաշնային հանրապետություն, միկիտան սաքո, հին հայաստան, արցախի հանրապետություն, կրիվոյ ռոգ, խութ-բոնաշեն, հին արևելք, միներալնիե վոդի, փոքր արջ, սուրբ սարգիս, օմար խայամ, միրզո թուրսուն-գադե, խաղաղ օվկիանոս, օ՛նիլ յուզին, վինսենթ վան գոգ, արայի լեռ, մուշի գավառ, գեղամա լեռներ, քենտի կոմսություն, հիմալայան լեռներ, բագրատունիների թագավորություն, «անհաղթ աքլոր», «մայրական փառք» շքանշան, մեծ պաս, ռազմաօդային ուժերի օր, «զինվորի մայր» կազմակերպություն, լա կրոզ մաթյուրեն վեյսիե, դարաշամբի սուրբ ստեփանոս, անբան հուռի:

9. Անհրաժեշտ տեղում գրել մեծատառով:

Ա. Հայաստանի երվանդականների թագավորությունը միակ պետությունն էր, որն իր մեջ միավորեց հայկական բոլոր հողերը: Ալեքսանդր մակեդոնացու արշավանքների նախօրյակին կամ գավգամելայի ճակատամարտից հետո հայաստանի տարածքում ծնունդ առան մեծ կամ փոքր հայքի թագավորությունները, որոնցից առաջինը գոյատևեց մինչև 428 թ.: Արտաշես ա-ի օրոք մեծ հայքի թագավորությունը դուրս եկավ կասպից և սև ծովերի ափերը, տիրացավ արևելյան վասպուրականին և ուրմիա լճի արևելյան առափնյա մասին, ինչպես նաև մինչև տիգրիս գետն ընկած հողերին: Որոշ բացառություններով այդ կացությունը պահպանվեց մինչև մեծ հայքի թագավորության 387 թ. բաժանումը:

Բ. Աշխարհի 213-րդ և ամերիկայի 124-րդ տիեզերագնաց, բժիշկ, ճարտարագետ, հայազգի աստղանավորոջ ջեյմս Ֆիլիպի բաղյանը ծնվել է 1952 թվականին, Ֆիլադելֆիայում: Նրա պապը՝ գևորգ բաղյանն արցախցի էր: Հայրը՝ Ֆիլիպ բաղյանը, եղել է օդաչու հարյուրապետ, որ երկրորդ աշխարհամարտի ժամանակ արժանացավ «արծաթյա խաչ» շքանշանի: 1978 թ. ջեյմս բաղյանին ընդգրկում են նասա-ի աստղանավորողների թեկնածուների ցուցակում, իսկ 1980 թ. հուլիսին նա արդեն աստղանավորոջ էր: 1981 թվականին որոշվեց, որ նա տիեզերական թռիչքի պիտի մեկնի մի ուրիշ հայի՝ խորհրդային միության քաղաքացի, աշտարակցի յաշա գևորգյանի հետ, բայց թռիչքը չկայացավ:

10. Փակագծերում տրված բաղադրիչը հանելով՝ բառերը գրել միասին, անջատ, գծիկով:

Ա. Դույզն (ինչ), ուտել (խմել), լիտր (վայրկյան), մուգ (կարմիր), տուն (թանգարան), 10 (ական), փոխ (չեմպիոն), Շահ (Աբաս), չորս (հինգ), հինգ (դոլարանոց), Նար (Դոս), Դավիթ (Բեկ), նոր (քարեդարյան), սերնդե (սերունդ), ութից (տասը), Հեռավոր (Արևելք), թղթակից (անդամ), դրամա (իրային), հեռավոր (արևելյան), Տեր (Գաբրիելյան), թուրք (թաթարական), Դուրյան (Արմենյան), մեջք (մեջքի), հարավ (արևելք), գնալ (գալ), պարապ (սարապ), Խոսրով (բեկ), զույգ (զույգ), մեծ (բրիտանական), եգիպտա (սիրիական), բաց (դեղին), փոխ (գնդապետ),

չին (տիբեթական), Միրզա (Ավագյան), փոքր (ինչ), ոնց (որ), գույն (գույն), ասել (խոսել):

Բ. Կողք (կողքի), մանր (մունր), ուսանող (ուսանողուհի), մարդ (օր), Էլզաս (Լոթարինգիա), Մելիք (Մուսյան), ինժեներ (մեխանիկ), բառա (քերականական), ռուս (ճապոնական), հյուսիս (արևմտյան), գեներալ (մայոր), ձեռք (ձեռքի), տասից (տասներկու), իբերո (կովկասյան), ռազմա (ծովային), բրոնզե (դարյան), կաս (կարմիր), աղբյուր (հուշարձան), սև (սպիտակ), հեռու (մոտիկ), Լոռի (Փամբակ), ինչ (ինչ), 50 (ամյակ), Հաջի (Մուրադ), ՀՀ (ուճ), նետ (աղեղ), մելիք (Օհան), զուգել (զարդարել), հաստ (ու) բարակ, դուրս (բերում), ի (շահ), ի (սպառ), ժամ (առ) ժամ, հիմն (ի) վեր, մուգ (կապույտ), թույլ (տալ), աղմուկ (աղաղակ):

Գ. Սևան (Հրազդան), ինչ (որ), Մելիք (Շահնագարյան), գիշեր (ցերեկ), ել (ու) մուտ, բուք (բորան), ծիլ (ու) ծաղիկ, Սայաթ (Նովա), տուն (առ) տուն, աշխարհից (աշխարհ), լույս (ընծայում), ԱՄՆ (ից), վեր (ու) վար, հարավ (արևելյան), առ (և) տուր, դեղ (դարման), թև (թևի), խոսք (տալ), ի (սկզբանե), Ալմա (Աթա), Սան (Ֆրանցիսկո), բաց (կանաչ), ձեռք (սեղմում), լաց (լինել), երկրե (երկիր), պատն (ի) վայր, ահել (ու) ջահել, աչքով (ունքով) երգիչ (երգչուհի), ցուցահանդես (վաճառք), կիլոմետր (ժամ), 4 (րդ), լեփ (լեցուն), գյուղից (գյուղ), գրող (հրապարակախոս), Հարուն (ալ) Ռաշիդ, չորս (հինգերորդ), բերնե (բերան), Խնկո (Ապեր), (ց) կյանս, (չորս) բոլորը, (ըստ) իս:

11. Վերականգնել անհնչյունափոխ ձևերը և բացատրել հնչյունափոխությունը:

Ա. Որդեգիր, գետնաքարշ, բազմատարագ, քրդական, հովվական, սրնգահար, շիկասև, հնամաշ, տխրություն, կրկնապատկել, վիրավոր, ծամաճոռություն, գրաճանաչ, լրջություն, կցկտուր, նստել, պտտվել, նկարչական, գործնական, հմտություն, խստաբարո, հաշվառել, ծնկահար, ծածկել, սրբապատկեր, մտահոգ, ցուցամատ, ծննդավայր, համակրել, կարկտահար, նրբամտություն, հանդիպակաց, սառցամարդ, սրտառուչ, գնդակ, տգիտություն, մարդկային, արնակալած, բուրմունք, կորստաբեր, ջղաձգություն, պատժարան, տիրակալ, հավասարակշռություն, կոշկակապ, վարչություն, մարդասիրական, ձկնապուր:

Բ. Ընդմիջում, բարեխղճություն, երդմնազանց, գլխաքանդակ, հանդիսավոր, շնչահեղձ, մանկական, հուսահատ, անճշտություն, ուղղամիտ, մաքրագրել, լուրություն, փախստական, շրջափակել, ոսկրածուծ, թաքնագիր, տրտմություն, հավիտենական, համախմբություն, երկրամաս, վայրկենաբար, վճռական, կարմրատակել, հողաթմբեր, խուսափել, պնդակազմ, մրրկարշավ, աղմկահարույց, մրոտ, տպագիր, կծկել, զսպել, մտերմանալ, կուտակել, կուրանալ, խուզարկել, ծուլարան, կամրջակ, ծաղկազարդ, թռչնագիր, փշալար, մամռապատ, բրդապատ, վշտալլուկ, ջրարբի, թախծալից, շիրմաքար, խնդություն, նարնջագույն, հոգեպես:

Գ. Սրահար, սերնդաշար, ծխածածկ, դժնետեսիլ, իմաստնանալ, սանդղավանդակ, կապուտակ, կիսամեռ, ծլարձակել, փրփրադեզ, վրձնահարված, շրթներկ, ճամփեզր, դարբնել, ամրություն, հանգստանալ, մեղվապահ, քնքշորեն,

կշտանալ, սարսռալ, արարչագործ, արթնանալ, լցնել, կժաբերան, թխսամայր, վճռական, սիրահար, խնկարկու, կուտակում, զուգակցել, նշանակել, խորհրդածություն, հանրակացարան, ազատագրկում, կրթություն, փշանալ, հնագիտություն, մրգահյութ, խճապատ, մթամած, թոնրահաց, հրախաղ, խնդումներես, ճշմարտացի, տված, պատմություն, բազմալեզու, հոգեբույժ, տրտնջալ, խստություն:

Դ. Բարենպաստ, զրկանք, արտաշնչել, գունազարդ, սերնդակից, սգավոր, կրնկակոխ, գրքածածկ, դրվածք, տիրակալ, ոսկեկար, թրատել, փաղաքշական, անգթորեն, մեհենական, բրգածն, բլրակ, լլկանք, քինահարույց, կերակրող, թովչանք, երգչախումբ, հուզառատ, շիրմաքար, սննդակարգ, մշտահնչուն, միգամածություն, պանդխտել, աղմկոտ, զրուցարան, ժողովրդական, ստախոս, խորհրդավոր, քրքջալ, մսակեր, սրճագույն, զսպաշապիկ, քթանցք, թվաբանություն, անասնաբուժական, չրանոց, դրսեցի, առևտրական, մատուցարան, թղթակցություն, բոնցքամարտ, խնդրագիր, շրջակա, գիրանալ, ծռություն:

12. Գտնել հնչյունափոխ արմատները և վերականգնել անհնչյունափոխ ձևերը:

- Ա.** Ու վառվում է խավարակուռ հոգիներում նրանց անգայթ
Կետը այդ մուգ, որպես հեռու, հրաբոսոր մի ճառագայթ:
Սուր մխվել է նրանց սրտում, որպես մի թեժ, կարմիր բևեռ-
Թույն է լցնում ու բորբոքում ու երազներ աշխարհավեր. . . .
Աղմըլում է նրանց սրտում մորմոքը հին, հազարամյա-
Տենդ է սփռում ու խլրտում նրանց անգայթ սրտում հիմա: (ԵԶ)
- Բ.** Ես մանկուց կրծքով նորն ընդունել,
Մեջքով հենվել եմ հնությանը:
Ձգտել եմ և ի՛նձ նման լինել,
Եվ նման լինել բնությանը:
Մթնում կանաչել, ծաղկել միգում,
Դիմանալ ցրտի քնությանը,-
Ընդօրինակել ամեն ինչում
Վարպետաց վարպետ բնությանը: (ՀՍ)
- Գ.** Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես մնաս բարով.
Բորբ արևին իմ բոց սրտում ասում եմ ես մնաս բարով:
Ոսկեշղթա իմ հուշերին, իմ գիշերին, իմ փշերին,
Արտույտներին ոսկի արտում ասում եմ ես մնաս բարով:
Ծաղիկներին դեռ չբացված, դեռ չկիզված հոգիներին,
Մանուկներին վառ-խլրտուն ասում եմ ես մնաք բարով: (ՎՏ)

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

13. Գտնել բազմիմաստ բառերը և բացատրել դրանց արտահայտած իմաստները:

- Ա.** Արևի ոսկե մատները իջան
Ու գուրգուրեցին հեռուները թաց:
Հավիտյան վազող ու միշտ ժրաջան՝
Խոտերի միջից առվակը խնդաց:
Եվ թեթև՝ նետած սլաքի նման
Դեմից մի թռչուն անցավ սրընթաց:
Ախ, այդ դաշտերի հեռո՛ւն ոսկեգույն,
Այդ երկինքների կապո՛ւյտը պայծառ. . . (ԵԶ)

Բ. Սևանը: Լազվարթ այդ տարածությունը, որ քամին տեղ-տեղ ավլում էր, թվում էր անվերջանալի: Երկու կողմից ափերը գնալով լայնանում էին և կորչում: Շատ հեռուն ամպերին խառնված բարձրաբերձ լեռների ստվերներ էին երևում և հորիզոնի ետև խոժոռ և եղերավոր մի աշխարհ ուրվագծում:

Ծով էր: Ժայռի կտորը, որի վրա նստել էր, մեկ կողմից սահում էր դեպի լիճը և մյուս կողմից այն աստիճան թեքվում բլուրի լանջերին, որ նա մի րոպե կարծեց, թե գտնվում է ուղղությունը որոշելու համար կես ճանապարհին կանգ առած նավի հրամանատարական կամրջակի վրա: Սիրտը սեղմվեց և աչքերը ծովային թռչունի աչքերի նման կլորացան: (ԿԶ)

14. Ընդգծել փոխաբերական իմաստով գործածված բառերը և բացատրել փոխաբերության հիմքը:

Ա. Այդ հին երկրում արևը ճչում է մրգի հատիկներով, հողը շնչում է անսպառ խոտով, առվակները կարկաչում են, բացվում են մեծ առավոտներ, և իջնում են հրաթև վերջալույսներ, բարձրանում և կապույտում շողում է մի թաս՝ մեջը լիքը նոր կթած կաթով, տիեզերանում է գիշերն աստղահինչուն, ծառերը սլանում են դեպի երկինք, և բոլոր ծաղիկները սարսռում են ու շշնջում: (ՎԹ)

- Բ.** Երկինքն առվի մեջ սաղմոս էր կարդում,
Սարը մատյանն էր կարդում երկնքի:
Մեր տան երդիկից երկինք էր կաթում,
Երկինք էր գնում ծուխը երդիկի:
Ջուր էր շաղ տալիս արտերի վրա
Եվ ջուր էր խմում երկինքը ձորից,
Ձորն ի վար քայլում թաթերի վրա
Եվ քարայրներում քնում էր նորից:
Իմ երազներում երկինքը վարել,

Եվ արևներ եմ հնձել արտերից,
Հողի խորհուրդը երկինք եմ տարել,
Հողին օրհնություն բերել աստղերից: (ՀՍ)

Գ. Թվաց՝ ամպերն են բացխուփիկ խաղում,
Թվաց՝ երկինքն է կապույտ ծիծաղում,
Թվաց, թե շոգը հանկարծ կոտրվեց,
Թվաց, թե մի հին երդում կատարվեց. . . .
Հետո ժպիտը սկըսեց հալվել
Ու հետզհետե անհետ վերացավ,
Մինչդեռ աչքերի թացն ավելացավ,
Թացն ավելացավ ու ավելացավ. . . (ՊՍ)

15. Ո՞ր բառերը չեն համապատասխանում իմաստային շարքին:

Ա. Բարդի, սոսի, Սոչի, սզնի, թեղի, հոնի, բոխի, ոզնի, գիհի, կենի, կաղնի, թխկի, կեչի, նոճի, սոճի, եղևնի, մորթի:

Բ. Դեղձանիկ, թուրաջ, խաճկտիկ, գիհի, կակադու, կոցար, ձկնկուլ, մրրկահավ, պիրուլ, մերինոս, շամփրուկ, ջրածիճառ, սերինոս, ուլար, թանթովենի, քաջահավ, մանգաղաթև:

Գ. Հասպիս, հասմիկ, շափյուղա, սուտակ, հակինթ, սաթ, սկահակ, զմրուխտ, դահանակ, ավմաստ, շողակն, մարգարիտ, բուստ, մարջան, մառան, գոհար:

Դ. Գայլիկոն, շաղափ, գամ, շառափ, աքցան, ձողակարկին, ունելի, մամլակ, մլակ, մանեկադարձիչ, կծաքցան, հարթաշուրթ, հարթաթաթ, խարտոց, հղկաթուղթ, պտուտակ, մանեկ:

Ե. Կեռնեխ, անձեղ, էմու, ժակո, սաքսաուլ, կազուար, կոնդոր, կրետակեր, կվենի, ճախրուկ, ճայեկ, ճուռակ, մարաբու, որոր, տառեղ, առյուծագի, վարուժնակ, սրակտուց, հավփալ:

Զ. Ագավա, ազատքեղ, բերենիկե, զաֆրան, սուտակ, դժնիկ, իլենի, լաստենի, դահանակ, ծորենի, ծիածետ, մրտենի, նշդարենի, շափյուղա, սնդրուկ, սրոհունդ, փիճի:

16. Բացառել փրված համանունների իմաստները և գործածել նախադասությունների մեջ:

Ա. Բազուկ	անարգել	վարել
ժամ	անել	ակ
մեկնել	անձուկ	շրջել
աղոտ	դաս	բուն

թթվասեր սեր գունդ հարկ	շուք միակնություն փող այր	հոտ եղանակ սուր բազմակնություն
---------------------------------	------------------------------------	---

Բ. Ափ լալ ակնարկ կետ բարակ գոլ դող	տոն քանոն համար տուն խոզուկ շահ կաթ	դատել մարտ թոռ ծաղիկ հանդերձ դարման զատիկ
---	---	---

17. Բացատրել տրված հարանունների իմաստները և գործածել նախադասությունների մեջ:

Պահպանել-պաշտպանել տեղական-տեղային բարակ-բարաք վարկ-վարք-վարգ ոգի-հոգի տեղի տալ-տեղիք տալ սովորություն – սովորույթ համրել-համարել ավանդություն-ավանդույթ	մեղկ-մեղք հասկացություն-հասկացողություն ցուցում-ցուցմունք պատրաստականություն- պատրաստականություն օրավուր-օրավար այգաբաց-այգեբաց գործառնություն-գործառություն զեկուցում-զեկույց
--	--

18. Գրել տրված բառերին իմաստով մոտ (հոմանիշ) երկուական բառ:

Ա. Սոված անողոք բազմերանգ կարմիր գունատ աշխույժ անխոռվ մեգ թուխ զանազան	Բ. Երիտասարդ երջանիկ փոքր ալարել տխուր մոայլ արարել ահաբեկել աղաչել աղմուկ	Գ. Աղոտ ամբարտավան գաղտնի դաժան անօրեն աշխատել գթառատ անտուն բազմաթիվ կապույտ	Դ. Անգութ անգործ գույն բերրի գագաթ գաճաճ նվաճել երերուն գարշելի թաց
---	--	---	---

Ե. Աներկբա տանջանք բախտավոր բաղձանք բացահայտել Ժլատ իմաստուն տեղյակ պարարտ	Զ. Գթալ երկյուղ զայրանալ թառամել խարդախ խելագար կշտամբել կոպիտ կարճ	է. Թշվառ ունայն խոհեմ լրաբեր խարտյաշ կորով ըմբոստ ունևոր եղեռն	Ը. Բորբ ուշիմ տամուկ անձկալի հավետ ճախրել գովել զեփյուռ լալ
---	--	---	--

19. Տրված հատվածներից դուրս գրել հոմանիշները:

- Ա.** Իմաստուն խոսքեր սովորեցի ես,
Որ հրապուրեմ զորությամբ մթին,
Հոգիդ կախարդեմ ու հմայեմ քեզ,
Ինձ այրող հուրը նետեմ քո սրտին:
Բայց բոլոր խոսքերն իզուր են արդեն,
Թալիսմանները մեռած և անուժ,
Հմայք և դյութանք անզոր են քո դեմ. . .
-Արդյոք ո՞վ գիտե անունդ անուշ. . . (ՎՏ)
- Բ.** Գորշ, տաղտկալի ու խելագար երգ է կարծես այս կյանքը մի,
Ինչ-որ մեկի սրտում բացված- վերք է կարծես այս կյանքը մի,
Եվ ո՞ւմ համար- էլ ո՞ւմ համար կարոտակեզ երգե հիմի
Սիրտս՝ լցված տարիների սեղմ արճիճով ու կապարով:
Բայց շուրջս թող որքան կուզե աշխարհը այս խնդա, ցնդի-
Ես-հաշմանդամ ու խելագար ու հավիտյան վտարանդի՛
Դեպի երկինք պիտի գնամ, դեպի եզերքը Ամենտի-
Իմ բարձր, հին ու աստղային երազների ճանապարհով. . . (ԵՉ)

20. Գրել տրված բառերին իմաստով հակառակ (հականիշ) բառեր:

Ա. Կարճ թեթև հաստատուն բարակ թարմ հաղթանակ մայրամուտ ֆիզիկական հրաժեշտ անջատել	Բ. Վերջին մեծ ծուռ հարց անշարժ արագ անորակ լրիվ տխուր նույն	Գ. Խոնավ անորոշ առողջ թանկ կենդանի ազատ դրախտ խորթ սխալ դեռ	Դ. Միշտ կառուցել մթնել միամիտ վայրի բարձր ծանր ազատ կապել գրագետ
--	---	---	--

Ե. Անհամբեր քնքուշ արթնանալ հոգնել օգնել համարձակ ներշնչել անդորր չաղ ալևոր	Զ. Թանձր առողջ տաքանալ հեռու պարզ մոռանալ մերժել խրթին արգելել պառակտել	Է. Ողորկ խոշոր պայծառ վտիտ բոթ դուրեկան թախժոտ անջրդի նզովել կարծր	Ը. Զարթնել վճիտ գոց հիշել չքմեղ հակիրճ բիրտ բերկրանք երկչոտ գրոհել
---	---	--	--

21. Տրված հատվածներից դուրս գրել հականիշները:

Ա. Հազար անգամ ապրել ու մեռել եմ,
Խոռովել եմ, հաշտվել ու ներել եմ,
Չափել եմ բարձունքներն ու վիհերը,
Եվ ատելն եմ փորձել, և սիրելը . . .
Բաժանել եմ, բաշխել և առել եմ,
Ուր որ պետք է եղել համառել եմ . . .
Եվ հանել են նեղից, և նեղել են,
Անթեղել են, հետո ինձ պեղել են . . .
Հազար անգամ ընկել, բարձրացել եմ,
Ու վերջապես մի բան հասկացել եմ . . .
Հիմա դառնամ ասեմ կյանք եղբորս,
Ապա դառնամ ասեմ մահ եղբորս .
- Թող որ վկա լինեն այս լեռները,
Ոչ ապրելն էր մի բան, ոչ մեռնելը . . . (ՀՍ)

Բ. Բարին լինե՛ր, չարը չգա՛ր . . .
Բայց թե լինես միայն մի բուռ,
Դու սի՛րտ լինես՝ չորս կողմդ՝ քա՛ր,
Չարը՝ հզոր, իսկ դու՝ տկար,
Աղո՛թք անես թե խաչհամբո՛ւյր,
Չարի ձեռքից պրծում չկա . . . (ԳԷ)

22. Գրել տրված բառերին իմաստով մոտ (հոմանիշ) և հակառակ (հականիշ) բառեր:

Ա. Հրապուրիչ անորոշ տաք	լուսավոր կարծր ծույլ	Բ. Շառագունել ապօրինի աներկբա	արտասովոր տգեղ թեժ
--------------------------------------	----------------------------	--	--------------------------

լեցուն քնքուշ	ապերախտ հաստիկ	կարճիկ վեհերոտ	ծածուկ ուղղամիտ
Գ. Գործունյա շուտափույթ հոծ գունեղ հուսաբեկ	երկրպագել մոլեգին ինքնաբերաբար ապիկար թանձր	Դ. Վեհաշուք ուժեղ խրթին կազդուրվել աջակցել	հորդ հմայիչ շողալ համառ մաքրագրել

23. Գրել տրված բառերի նույնարմատ հականիշները:

Ա. Համախոհ ներգաղթ լավատես պիտանի անարժան	շատակեր անբնակ կուշտ անջրդի շքեղ	Բ. Ծանրաշարժ այլաձև հայտնի արդար հնաոճ	դուրեկան բացակա մերձակա անաչառ վայրընթաց
Գ. Անվճար պատեհ վարժ սրամիտ հնարավոր	անորակ դժբախտ ծանոթ մեծահոգի փորձառու	Դ. Աներեր ամոթխած անկեղծ բարձրահասակ արի	անճարակ անփույթ բախտավոր տհաճ տխրադեմ

24. Գրել տրված բառերի տարարմատ հականիշները:

Ա. Խաղաղ հեռանալ ընդունել վտանգավոր վերելք	արևածագ սառը վերջ բաց թախճոտ	Բ. Բոթաբեր հզոր լույս երկար առավոտ	բաժանել կրտսեր երկչոտ զվարթ թավ
Գ. Առատաձեռն բարձրանալ ամպամած ուժեղ ավետիս	չքնաղ մերժել օրհնել գրոհել քաղցր	Դ. Սիրելի չար վեհ փայլել գեր	անճարակ երբեք դեռ թշնամի առատ

25. Տրված հատվածներից դուրս գրել հնարանությունները և բացատրել դրանց իմաստները:

Ա. Մարգպետունի Գևորգ իշխանը հագած էր այդ օրը տոնական զգեստ և զրահավորված ամբողջապես: Նա ծածկած էր պողպատյա, արծաթազարդ սաղավարտ, սպիտակ ցցունքով և նախարարական զինանշանով. հագած էր

պողպատյա վերտ, պղնձյա, փայլուն լանջապանակով և նույնպիսի բազպաններով, սրունքներին ամրացած երկաթահյուս զանգապաններ և ոտքերին՝ կարմիր, երկաթագամ կոշիկ: Ծանր, ոսկեպատ սուրը, որ քարշ էր ընկած նրա կողքից, լրացնում էր իշխանի զինվորական զարդարանքը: Եվ այդ ամենի մեջ նա բարձր ու թափանցող հայացքով, հպարտ ու շնորհալի շարժվածքով երևում էր ավելի հրապուրիչ, քան ուրիշ օրերին առհասարակ: (Մ)

Բ. . . . Քաղաքի քառակուսի հրապարակը շրջապատող ցածրիկ կրպակներում առավոտից մինչև երեկո աշխատում էին ամեն արհեստի վարպետներ՝ ճոներ, որ ոչխարի, գառան մորթիներից և եղջերուի ու այլ կենդանիների կաշիներից կարում էին բազմատեսակ գդակներ, հանդերձակարներ, որ պատրաստում էին պես-պես կապաներ թե՛ քաղաքացիների ու շինականների համար և թե մուշտակներ ու թիկնոցներ՝ նախարարների ու սեպուհների համար. մաշակարներ՝ ամեն ձևի կոշիկ և հունական սանդալ-հողաթափեր. բրուսներ, որ շինում էին բազմազան կավե ամաններ՝ վիթխարի մեծափոր կարասներից սկսած մինչև ջրի փոքրիկ գավաթներ ու գինու կթղաներ, որ թրծում էին հենց այդտեղ՝ քուրաների վրա, իսկ թամբագործներն արդեն իրենց արհեստանոցների դռների վրա թամբերի հետ միասին մեծամեծ կեռ մեխերից կախում էին ամեն տեսակ փոկեր, սանձեր, պախուրցներ, կաշվե գոտիներ և բոժոժների շարեր. . . Հրապարակում հատկապես աչքի էին ընկնում զինագործները, որ կռում-կոփում էին բազմատեսակ զենքեր՝ նիզակներ, տեգեր, աշտեններ, նրաններ, նաև բազպաններ ու զանկապաններ և որսորդական իրեր ու գործիքներ. . . (ԱԶ)

26. Բացադրել տրված նորաբանությունների իմաստները:

Ա. Վերոգրաֆիա, բլոգ, մոդերատոր, անձնագիր (profile), փոստաղբ (spam), օգտատեր (user), զննարկիչ (browser), ներթիկետ (netiquette), սմարթֆոն, առցանց (online), ավատար (avatar), գերիզում, դոմեն (domain), կայք, կցորդ (attachment):

Բ. Միջերես (interface), սմայլ (smiley), ֆորում (forum), նեթբուք (netbook), վիքիբառարան, պորտալ, համակարգչահեն (հաքեր), սոցցանց, վիքի, ֆլեշմոբ (flash-բռնկում, mob-ամբոխ), ֆանմոբ, սմարթ հեռուստացույց:

27. Բացադրել տրված նորակազմությունների իմաստները:

Ա. Օգտատեր, քարտապան, ցանցահեն, լրաքաղ, տեսազանգ, վստահորդ, տեսահսկում, քարոզչամեքենա, սպասազանգ, տեսակապ, հարցախույզ, հետարկել, ներբեռնել, գիտելիքահենք, ինքնաբացարկ, քարտապանակ, երթուղիչ:

Բ. Նախադիտում, ուսանողակենտրոն, կրիչ, ընթերցիչ, հետազոտահենք, տեսահանդիպում, լրաճարակ, էկրանապատկեր (screenshot), դիմավահան, քայլուղի, զինավան, լավարկում, հակիրճակ, օգտահաշիվ, տեղեկապատկեր, վերբեռնել:

28. Գրել տրված օտարաբանությունների հայերեն համարժեքները:

Ա. Ատեստատ, ֆորմատ, բալանս, դիվիդենտ, ինվեստիցիա, լեգիտիմ, մենեջմենթ, մենթալիտետ, պոզիտիվ, ռեյտինգ, սանկցիա, ֆեյք, դեդլայն, գրանտ, լիբերալ, լոկալ, կարկաս, մեմորանդում, ֆակտոր, ֆիասկո, պատենտ, էքսպերիմենտալ, կոնսոլիդացիա, ինֆրաստուկտուրա, պերմանենտ:

Բ. Ստատուս, դիստրիբյուտոր, արեզենտացիա, էպիզոդ, էֆեկտիվ, իմիտացիա, տրանզիտ, լիցենզիա, էմբարգո, էտալոն, մոտիվացիա, այլանս, բաններ, բեյջ, ռեսթայլինգ, կոնվերսիա, սկեպտիկ, վերբալ, պացիֆիստ, սուվերեն, դոմինանտ, կոնսուլտացիա, նյուանս, նոստալգիա, պրոպագանդա, պրովոկացիա, տրանսֆորմացիա:

Գ. Ֆորմալ, էքսկյուզիվ, ինստրուկտոր, լիմիտ, կոնստրուկտիվ, կոնֆիդենցիալ, կուրատոր, սպեցիֆիկ, վոլոնտյոր, տոլերանտ, օնլայն, օֆլայն, էմոցիոնալ, իմպուլս, մոդեռնիզացիա, սերտիֆիկատ, դիվերսիֆիկացիա, մանիպուլյացիա, մենյու, շաբլոն, շոփինգ, սիմպոմ, ստենդ, դիսիդենտ, էքսցենտրիկ, կոմպլիմենտ:

Դ. Ռեպրեսիա, սինխրոն, սոլիդար, դիսկրիմինացիա, էքստրեմիստ, ինվենտարիզացիա, ադմինիստրացիա, ռեաբիլիտացիա, անտիպատիա, դեպրեսիա, ինֆոդեմիա, չելենջ, ադեկվատ, աուդիտ, կոռուպցիա, կոնֆրոնտացիա, մարգինալ, ինստանցիա, ստերեոտիպ, պրիվիլեգիա, ստեպլեր, մոնիթորինգ:

29.Տրված հատվածները ենթարկել բառակազմական վերլուծության:

Ա. Իմ երգերը դեռ ձեզ անծանոթ են,
Նրանք քարոտ են, քարանձավոտ են,
Խոնավ ու խոնարհ հովտից են նրանք,
Հողոտ, հողահոտ ու դաղձահոտ են:
Իմ երգերը դեռ ձեզ անծանոթ են,
Անանձնական են և անձնամոտ են,-
Ծուպ-ծվեններն են ձեր թաքուն ցավի,
Դրա համար էլ մի քիչ ցավոտ են: (ՀՍ)

Բ. Երիտասարդներից մեկը՝ հաղթանդամ, բարձրահասակ, խոշոր կազմվածքով և փառահեղ դեմքով մի տղամարդ էր, որի կերպարանքի մեջ մեծությունը այն աստիճան սերտ ներդաշնակցություն էր կազմում վայելչության հետ, որ ներկայացնում էր գեղեցկությունը յուր վսեմ, այրական ձևի մեջ: Երկրորդը, ընդհակառակն, ավելի կարճահասակ կարելի էր համարել, քան թե միջահասակ, և ավելի նրբակազմ, քան թե հաղթանդամ: Իսկ այդ քնքուշ կազմվածքի վրա բնությունը, կարծես, սխալմամբ դրել էր մի շնորհալի գլուխ, որին մի հարուստ, հոյակապ մարմին ավելի պատշաճ կլիներ: Կրակոտ աչքերի մեջ նշմարվում էր եռանդ ու դյուրաբորբոք բնավորություն: (Ը)

Գ. Ճանապարհի ափերին հազարաբայր ու հազարաթայր ծաղիկները բյուր-բյուր ձևերով՝ պճնազարդել էին բուրաստանները: Երազանման թիթեռների բույլերը ճախր էին առնում կանաչի ու կակաչի մեջ Լիլիթի շուրջը: Պուրակներում բանաններն ու անանասները բոլորել էին լճակները, ուր ցուլացայտ ձկներն էին խայտում նունուֆարների ու լոտոսների հույլերի մեջ:

Սաղարթախիտ ստվերների տակ արծաթյա և ծիածանավառ սիրամարգերն էին ճեմում զմրուխտահավերի և ծիրանահավերի հետ: Մարգից մարգ ոստոստում էին դրախտահավերն ու քնարահավերը:

Ոսկետերև ծառերից կախված էին հեշտագրգիռ պտուղները՝ կախարդիչ գույներով ու ձևերով: (ԱԻ)

30. Տրված հատվածներից դուրս գրել բարդ բառերն ու որոշել դրանց արմատները:

Ա. Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սագի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բույրը վառման,
Ու նաիրյան աղջիկների հեզաճկուն պարն եմ սիրում. . . .

. . . . Ուր էլ լինեմ-չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չեմ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սո՛ւր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր-
Էլի ես որբ ու արնավառ իմ Հայաստան-յա՛րն եմ սիրում: (ԵՉ)

Բ. Տեսե՛լ եք սֆինքսն անապատախոս լուռ Եգիպտոսը,
Լսե՛լ եք դարե՛ր, որ հավերժալուռ սֆինքսը խոսի,
Քարակերտ մարդը, հսկան քարակոփ, ժայռաբիրտ արքան,
Նա, որ անխորհուրդ լռությունն ինքն է, աշխարհի նման. . . .

. . . . Այդպես էլ աշխարհն՝ ինչպես ժայռալուռ շուրթը սֆինքսի,
Տեսավ աշխարհը հայոց եղեռնը ահեղազարհուր՝
Տեսավ քարաչյա, մի ձայն չհանեց՝ սֆինքսի պես լուռ,
Թնդանոթագոռ մի խոսք էլ չասավ ու լուռ է դեռ. . . . (ՀՇ)

31. Տեղադրել բարդությունները համապատասխան սյունակներում:

Թանաքաման, առևտուր, սար ու ձոր, հեռագիր, մայրամուտ, գլուխ տալ, խումբ-խումբ, հացթուփ, գիշեր-ցերեկ, բառ ու բան, խորդուբորդ, առաջ քաշել, ճյուղակոտոր, թերխաշ, դեղ-դարման, դրկից, քաղաքամայր, ծաղկեպսակ, մանր-մունր, հալ ու մաշ, ետ բերել, ծամկալ, տեղատարափ, սև-սև, ինքնահավան, օր ու գիշեր, կուլ տալ, ելևէջ, հրձիգ, քարտաշ, ծյունապատ, արևկող, մեկ-երկու, աչքով անել, ման տալ, դես ու դեն, արև-աշխարհ, դեն գցել, ձեռք ու ոտք, ջրկոտեմ, ջրաղաց, քարակոփ, արևկող:

Վերլուծական բարդություններ			Համադրական բարդություններ	
Հարադրավոր	Կրկնավոր	Բաղիյուսական	Հոդակապով	Անհոդակապ

32. Սյունակներից ընտրել մեկական արմատ և կազմել բարդ բառեր:

Ա. Ձայն	փոշի	Բ. Լույս	աթոռ
ուղի	խոտ	խաչ	հանդես
ծաղիկ	զուրկ	ճոճել	եղբայր
սեզ	գորգ	զորք	երես
Գ. Արդար	ախտ	Դ. Թույլ	հավել
լույս	ճառ	երկինք	ոսկոր
ժանտ	դատ	փիղ	սնել
բաժակ	աստղ	ծեռք	կամք

33. Տրված հարվածներից դուրս գրել ածանցավոր բառերը և բացատրել դրանց կազմությունը:

Ա. Եթե հայկական նախանձի չափ զորավոր լիներ հայ մարդու թրքատյացությունը, այլ կլիներ հայության և Հայաստանի ճակատագիրը:

-Երբ նախանձում է հայը, նա նախանձելի մահն է ցանկանում:

-Ժողովուրդ, քո պատմության բոլոր դարերի անունով երգվեցնում եմ սերունդներիդ-չներել, չներել՝ թուրքին, անգամ եթե մի օր նրան տեսնես անկյալի վիճակում: Այո՛, ներում են թշնամուն, բայց ոչ իր կեսին սպանիչին, ոչ էլ նրան, որը մի օր փորձեց գոյության գրքից քո անունը սրբել:

Գարեգին Նժդեհ

Բ. Լեզուն ժողովրդի հոգու, բնավորության արտահայտիչն է: Կուլտուրականության առաջին պայմանը զարգացած, հարուստ ու ճկուն լեզուն է: Շքեղ շենքերը, պալատներն ու տաճարները այնքան ցայտուն կերպով չեն ցուցնում ժողովրդի կուլտուրան, որքան լեզուն: Տնտեսական, տեխնիկական և քաղաքական-իրավական ձևերը կարելի է վերցնել, ընդունել դրսից, յուրացնել, բայց լեզուն պետք է ստեղծագործել: Այստեղ ամենից ցայտուն կերպով է արտահայտվում ժողովրդի ստեղծագործական զորությունը: (ՎՏ)

34. Տրված վերջածանցներով չորսական բառ կազմել:

Ա. -արան	-ային	Բ. -ական	-որդ
-ավոր	-ուստ	-իչ	-եղեն

-ակ	-ենի	-ոյթ	-ատ
-ուկ	-ուն	-ավետ	-ովի
-ք	-արդ	-ուկ	-ուհի

35. Տրված նախածանցներով չորսական բառ կազմել:

Ա. Գեր-	նախ-	Բ. Հակ-	ստոր-
տար-	ընդ-	փոխ-	ներ-
մակ-	բաց-	արտ-	չ-
վեր-	համ-	ենթ-	առ-

36. Տրված բառերի արմատներին ածանցներ ավելացնելով՝ ստանալ նոր բառեր:

Ա. Աշխարհ, գիր, կիրթ, կշիռ, քաղաք, դաս, ցանկանալ, ոտք, շիրիմ, ձույլ, օրենք, գիծ, օդ, ջինջ, դնել, գյուղ, ժամ, երակ, զգալ, կենալ, անցնել, առնել, հայտնել, քննել:

Բ. Երկիր, մարտ, լսել, հսկել, լեռ, ճանաչել, սահման, կրոն, գետին, շնորհ, ձեռք, տեսնել, նեխել, մաշկ, բախտ, ազգ, շնչել, բուն, երես, կորչել, հասնել, հարգել, կարգ, ընթանալ:

37. Տրված հապավումներն արտահայտել ամբողջական բառերով:

Ա. ԱԱՀ, ԱԳՆ, բուհ, ՀԱՊԿ, ԵԱՀԽ, ԶՈՒ, ՀՅԴ, ՀՕՊ, ՃՏՊ, ՆԳՆ, ՊԲ, ջէկ, ՌՌ, ՍՊԸ, ՏՏ, ՓԲԸ, ԵՄ, ԱՀ, ՀՀ, ԱՄՆ, ՌԴ, ԽՍՀՄ, ՍԴ, աէկ:

Բ. ԱԺ, ԱՄԷ, ԲԲԸ, ԳԱԱ, ԵԽ, ԶԼՄ, հէկ, ՀՕՄ, ՃՊԾ, ՄԱԿ, ՄՕԿ, ՆԱԵԿ (ՕՊԵՔ/ՕՊԵԿ), ՊԱՏ, ՊՊԾ, ՀՆԱ, ԱԶ, ԲՈԿ, ԵԲ, ՀՕՖ, ԼՂՀ:

38. Հերկյալ օտարաբանություն-հապավումներն արտահայտել ամբողջական բառերով:

Զազա (ՅԱԴՇ), ԺԷԿ (ՅՅԿ), ՅՈՒՆԵՍԿՕ (UNESCO), ՆԱՏՕ (NATO), ՅՈՒՆԻՍԵՖ (UNISEF), ՆԱՍԱ (NASA), ՍՕՍ (SOS), ՕՄՕՆ (ՕՄՕՆ), ՖԻԴԵ (FIDE), ՖԻՖԱ (FIFA), ԲԻԲԻՍԻ (BBC), ԴԻՎԻԴԻ (DVD), ԷսԷմԷս (SMS):

39. Բացարդել հերկյալ դարձվածների իմաստները:

Ա. Այլուրը մաղել, մաղը կախել	Անպոչ գդալ
Ախ քաշել	Երկինք գնալ
Աստղը թեքվել	Իրար կոկորդ կրծել
Ականջը զգել	Աշխարհի բերանը զգել
Առյուծ կտրել	Աչք ածել
Արևը խավարել	Բամբակ դառնալ

<p>Բ. Ականջ դնել Աչքերը արյուն կոխել Արյունը արյունով լվանալ Բերանը փակել Բլբուլ կտրել Գլխին շան լափ թափել</p>	<p>Երես առնել Աչքին թոզ փչել Բառերը քամուն տալ Իրեն հավաքել Իր էջը թշել Լայն ապրել</p>
<p>Գ. Աչքի չափով Ականջը ծանր Կատու դառնալ Սեղան նստել Սև կատու անցնել միջով Կաշին հաստ</p>	<p>Գլխին վայ տալ Ծաղիկ հասակ Երեսի վրա թողնել Լեզուն կծել Կատարը դատարկ Բերանի ծամոն դառնալ</p>
<p>Դ. Աչք դնել Գլխին փորձանք գալ Բեղից ընկած բրինձ Բերանը ջուր առնել Լեզուն ատամների տակ Լու քերթող</p>	<p>Կաշվից դուրս գալ Կատու կտրել Հալումաշ լինել Ձայնը գլուխը գցել Ձեռք քաշել Մատը կծել</p>
<p>Ե. Աչքերի լույսից զրկվել Աչքը բաց Ձայնը փորը գցել Յուղ լցնել կրակի վրա Պատի ծեփ դառնալ Սևը սպիտակից ջոկել</p>	<p>Ջուր ծեծել Սիրտը դող ընկնել Ստի տոպրակը բացել Վիզ առնել Յեխը կոխել Ոտքը կախ գցել</p>
<p>Զ. Տակն ու վրա անել Լեզվին տալ Դանայան տակառ Մաղով ջուր կրել Հերոստրատի փառք Մետաքս դառնալ</p>	<p>Գորոյան հանգույց Ռուբիկոնն անցնել Մորփեոսի գիրկն ընկնել Լուն ուղտ դարձնել Ձեռքերը լվանալ Երեսուն արծաթ</p>

40. Տեղադրել համապատասխան բառը:

1. Արևից շողում էին ——— մազերը:

ա) դերձան բ) դեղձան

2. Մ. Սարյանը մեծ ————— ունի հայ կերպարվեստի մեջ:

ա) երախտիք բ) երախտագիտություն

3. ————— սպասում է:

ա) հուսով բ) հույսով

4. Հիվանդությունն ————— էր վերջույթները:

ա) ախտահանել բ) ախտահարել

5. Նա ————— է վատ սովորություններից:

ա) զուրկ բ) զերծ

6. Գլխարկը ————— է:

ա) հովհարով բ) հովարով

7. Դատարանի որոշմամբ գումարը ————— է:

ա) բռնագանձվել բ) բռնագրավվել

8. Ճանապարհ ընկանք —————:

ա) այգեբացին բ) այգաբացին

9. Տոնակատարությանը մասնակցելու ————— ենք ստացել:

ա) հրավերք բ) հրավեր

10. Աչքերը ————— էր հեռուն:

ա) հառել բ) հառնել

11. Դասընթացը լինելու է —————:

ա) հեռահար բ) հեռավար

12. Բժիշկները խորհուրդ են տալիս հաճախակի ————— ձեռքերը:

ա) ախտահանել բ) ախտահարել

13. ————— եմ ամեն ինչ կարգին է:

ա) Հուսով բ) Հույսով

14. Հայ սերունդները ————— են հիշում Մ. Խորենացուն:

ա) երախտիքով բ) երախտագիտությամբ

15. Նա ————— է ունեցվածքից:

ա) զերծ բ) զուրկ

16. Շոգի պատճառով — ձեռքից բաց չէր թողնում:

ա) հովարը բ) հովհարը

17. Գույքը ——— են:

ա) բռնագանձել բ) բռնագրավել

18. Բոլորը պատրաստ են ——— դիմավորելու:

ա) այգաբացը բ) այգեբացը

19. ——— բոլորը մասնակցել են:

ա) հրավերքին բ) հրավերին

20. Կոթողը ——— է քաղաքի կենտրոնում:

ա) հառում բ) հառնում

21. Գրողը հետաքրքիր ——— է ստեղծել:

ա) կերպար բ) կերպարանք

22. Անց է կացվում ——— մրցույթ:

ա) հրձիգների բ) հրաձիգների

23. Նա ——— և պետք է դատվի:

ա) մեղա է եկել բ) մեղանչել է

24. ——— համաձայն վանքն այստեղ է եղել:

ա) Ավանդույթի բ) Ավանդության

25. ——— մարդ է երևում:

ա) Հավակնոտ բ) Հավակնորդ

26. ——— դժբախտությունները մոռանալ տվին ամեն ինչ:

ա) Վերահասու բ) Վերահաս

27. ——— գրագրությունը վարվում է հայերենով:

ա) Պաշտոնական բ) Պաշտոնեական

28. ——— աղբյուրի ջուրն անմահական է:

ա) Ականակիր բ) Ականակիտ

29. Այդ մարդը հաճելի զրուցակից է և հյուրասեր ———:

ա) տանուտեր բ) տանտեր

30. Նրա ——— տեղեկություններ չունեն:

ա) վերաբերյալ բ) վերոբերյալ

31. *Խոսքը* ——— է *ձեր վարքագծին*:
ա) վերաբերվում բ) վերաբերում
32. ——— *կյանք է վարում*:
ա) Ասպնջականի բ) Աստանդականի
33. ——— *կառուցել է Տիգրան արքան*:
ա) Ոստայնը բ) Ոստանը
34. *Հայտարարվել է* ——— *տեղերի մրցույթ*:
ա) թափուր բ) թափոր
35. *Լուրերը* ——— *են*:
ա) հերկվել բ) հերքվել
36. ——— *կյանքով է ապրում*:
ա) Մեղք բ) Մեղկ
37. ——— *մուշտակ է հագել*:
ա) Սամույրե բ) Սամումե
38. ——— *գլխին ծածանվում է դրոշը*:
ա) Աշտանակի բ) Աշտարակի
39. ——— *անցքեր էր բացում*:
ա) Շաղափով բ) Շառափով
40. *Դանակի* ——— *սուր է*:
ա) շեղջը բ) շեղբը
41. *Կապոցն* ——— *տակ՝ անցնում էր փողոցով*:
ա) ակուֆի բ) անուֆի
42. *Խեցեղենը պատված էր* ———:
ա) նկանակով բ) ջնարակով
43. *Ըմպելիք մատուցում էին* ———:
ա) սկահակներով բ) ստահակներով
44. *Ճաշն* ——— *էր սրացվել*:
ա) ալանի բ) անալի
45. *Արտադրության ընթացքում առաջանում է* ———:
ա) խարան բ) խարամ

46. *Խոտրի խուրձը կապել էր* ———:

- ա) երասանով բ) առասանով

47. ——— *մարդ էր, ձեռքից ոչինչ չէր գալիս:*

- ա) Ապիրատ բ) Ապիկար

48. *Գինին խմում էին* ———:

- ա) կխտարներով բ) կթղաներով

49. ——— *կարծիք ունես նրա մասին:*

- ա) Թույր բ) Թյուր

50. 5 ——— *հող ունի:*

- ա) օրավուր բ) օրավար

51. *Մարտերի ընթացքում օգտագործվել են* ——— *թնդանոթներ:*

- ա) հեռավար բ) հեռահար

52. ——— *արևը դեռ չէր ջերմացնում:*

- ա) Վաղորդայն բ) Վաղորդյան

53. *Դատարանի որոշմամբ գույքը* ——— *է:*

- ա) բռնագրավվել բ) բռնագանձվել

54. *Գարնանը սկսվում են* ——— *աշխատանքները:*

- ա) այգաբացի բ) այգեբացի

55. ——— *նուղարկվել է բուրդին:*

- ա) Հրավերքն բ) Հրավերն

56. *Աչքերը* ——— *էր նորակառույց հուշարձանին:*

- ա) հառել բ) հառնել

57. *Ժամանակի հետ նրա* ——— *աղոթացել էր:*

- ա) կերպարը բ) կերպարանքը

58. ——— *պատասխանատվության կկանչվի գույքը վնասելու համար:*

- ա) Հրձիգը բ) Հրաձիգը

59. *Գիտակցել է իր մեղքը և հիմա* ———:

- ա) մեղա է գալիս բ) մեղանչում է

60. *Տնօրհների* ——— *վաղ ժամանակներից է գործում:*

- ա) ավանդույթը բ) ավանդությունը

61. Մեղալի ——— հինգն են:
 ա) հավակնոտները բ) հավակնորդները
62. Նա ——— է անցուդարձին:
 ա) վերահասու բ) վերահաս
63. ——— դիրքը չարաշահելու համար պարասխանաբարության է կանչվել:
 ա) Պաշտոնեական բ) Պաշտոնական
64. ——— մութը խոչընդոտում էր գործը:
 ա) Ականակիր բ) Ականակիտ
65. ——— կեղը քննարկման ենթակա է:
 ա) Վերաբերյալ բ) Վերոբերյալ
66. Մենք իրար լավ ենք ———:
 ա) վերաբերում բ) վերաբերվում
67. Գյուղում հայտնի էր որպես ——— մարդ. միշտ հյուրեր էր ունենում:
 ա) ասպնջական բ) աստանդական
68. Ջուլիակը ——— էր հյուսում:
 ա) ոստայն բ) ոստան
69. ——— դանդաղ առաջ էր գնում:
 ա) Թափուրը բ) Թափորը
70. Լուսնի ——— չէր երևում:
 ա) մահիկը բ) մահիճը
71. Անապարային ——— վնասներ էր հասցնում ցանքատարածություններին:
 ա) սամույրը բ) սամումը
72. ——— մի քանի մոմ էր վառվում:
 ա) Աշտանակին բ) Աշտարակին
73. Արևի ——— գունավորել էր լեռները:
 ա) շաղափը բ) շառափը
74. Յորենի ——— աչք էր շոյում:
 ա) շեղբն բ) շեղջն
75. ——— մի քանի փայտ ավելացրեց:
 ա) Ակութին բ) Անութին

76. Ներկաներին ——— բաժանվեցին:

ա) նկանակներ բ) ջնարակներ

77. Այսօր ——— շափացել են:

ա) սկահակները բ) ստահակները

78. Ընկույզով ——— շափ է սիրում:

ա) ալանի բ) անալի

79. Հանցագործներին ——— դաջում էին:

ա) խարամով ա) խարակով

80. Ձիու ——— նոր էր:

ա) առասանը բ) երասանը

81. Իշխանի ——— մասին բոլորը գիտեին և վախենում էին:

ա) ապիկարության բ) ապիրատության

82. Դաշտում հազար ——— ծաղիկ էր աճում:

ա) թույրի բ) թյուրի

83. ——— վիճակը վատանում էր:

ա) Օրավար բ) Օրավուր

84. Բանկը նոր ——— է իրականացնում:

ա) գործառություններ բ) գործառնություններ

85. Ճաշից հետո ——— է մաքուցվել:

ա) աղանդներ բ) աղանդեր

86. Հողը վաղուց ——— էր:

ա) հերքված բ) հերկված

87. Քարերը միացվում էին ——— :

ա) շաղափով բ) շաղախով

41. Ըստ բերված բառահոդվածների որոշել բառարանների տեսակները:

Ա. ԱՀԱՋԱՆԳ, ի, եր, գ. 1. Աղետի մասին ազդանշան տալու զանգ: 2. Տագնապի ազդանշան: 3. **փխբ.** զգուշացում, նախազգուշացում:

Բ. ԱՆԲԱՍԻՐ, ա, 1. Անպարսավ, անպարսավելի, անբասրելի, անկշտամբելի, անքննադատելի, անբիծ (որևէ վատ գիծ՝ հատկություն չունեցող, որևէ պարսավելի բան չարած): 2. Տե՛ս **Ազնիվ** (1):

Գ. ԱՍՏՈՒԱԾ հին և ընտիր բառ, որից ունինք մի քանի հարիւր ածանցներ. հնագոյններից յիշենք հետևեալները. **աստուածաբարբառ** Ագաթ. Վեցոր. Կորին **աստուածաբեր** Կորին Ագաթ. **աստուածագէտ** Ոսկ. Ագաթ. . . .
=Փոխառեալ է փոփոգերէնից. . . .

Դ. ՏԻԳՐԱՆ, ար. < իրանական անուն է, իբր հայրս. Tigrāna

Ե. ՏԸՀ տարածքային ընտրական հանձնաժողով
Իսկ ՏԸՀ ղեկավար պաշտոնների բաշխման ժամանակ մի քանի տեղամասերում ՀՅԴ-ն խախտել է ձեռք բերված պայմանավորվածությունը: Օր, 27.08.02

Զ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆ *n.* University, academy. –ի գահերեց *n.* Dean of the university. Արտոնյալ –ի *n.* Licentiate

Է. ԲԱՐԵՎ ԲՈՆԵԼ- Ի նշան հարգանքի ձեռքերը որոշակի դիրքով բռնել, պատվի առնել: **Դավիթ սեպուհը վեր կացավ և բարև բռնած մոմռաց խեղդված ձայնով ու զայրալի: (ԴԴ)**

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

42.Տրված հատվածներից դուրս գրել գոյականները և որոշել դրանց տեսակները:

Ա. Հայոց աստվածները հավաքվեցին և խորհուրդ արին, թե ինչ անեն, որպեսզի հայերին տոկուն ազգ դարձնեն: Խելք խելքի տվեցին, ապա որոշեցին, որ յուրաքանչյուրն իր էությունից մի պտղունց ավիշ ներարկի լույս աշխարհ եկող բոլոր հայերին:

Աստվածահայր Արամազդը հայերին արարչագործություն պարգևեց, սիրո և գեղեցկության աստվածուհի Ասողիկը՝ սեր ու գեղեցկություն, դպրության աստված Տիրը՝ երազանք, ռազմի աստված Վահագնը՝ քաջություն, հյուրընկալության աստված Վանատուրը՝ ասպնջականություն, ողջախոհության աստվածուհի Նանեն՝ իմաստություն, արևի աստված Միհրը՝ բարություն ու ճշմարտություն:

Մնաց միայն սնուցող մայր՝ ոսկեծղի Անահիտը, որն այն ժամանակ ճանապարհորդում էր երկնային հեռաստաններում: Երբ նա տուն վերադարձավ, Արամազդը նրան հայտնեց, թե իր քույրերից ու եղբայրներից յուրաքանչյուրն ինչ է նվիրաբերել հայերին: Եվ ահա Անահիտը իր էությունից մեկի փոխարեն աշխատասիրության յոթ պտղունց պարգևեց հայերին: Իսկ երբ արյանդ մեջ մեկի

դիմաց յոթ բջիջ է խտղտում, հանգիստ մնալ չես կարող: Այդպես էլ աշխատասիրությունը մինչև այժմ շարունակում է եռալ հայի էության մեջ: (ՀԽ)

Բ. Ինձ շաղախեցիր մարդկային կավից
Սիրուց, զայրույթից, բերկրանքից, ցավից,
Ատելությունից, չարից ու բարուց,
Ըմբոստությունից, կույր վախենալուց,
Երազից, հույսից, անհուսությունից,
Քարեքար խփող խռով արյունից-
Ու դրեցիր այս սիրախանձ ճեղքում՝
Արագածի ու Մասսյաց արանքում. . . (ՍԿ)

43. Հեղկյալ բառերի արմատներից գոյականակերպ ածանցներով կազմել նոր բառեր:

Ա. Սրբազան, քաջարի, սրտատրոփ, մահախուճապ, հաղթապանձ, բարձրադողանջ, վարդաբույր, դանդաղաշարժ, մեծարժեք, նախանձահույզ, քառատրոփ, ծանրանալ, գաղտագողի, խայտանկար, հոգեթով, տխրատեսք, հեզաճկուն, գահագուրկ, բարձրաշառաչ, տեսակցություն, հարկահան, զորագունդ, շրջապատ, մեծատուն, շինական, ուղեկից, հարցուփորձ, պահվածք, եզրագիծ, անվանադիր, նորաստեղծ, խշշալ:

Բ. Լայնատարած, անտառապահ, տնամերձ, զբոսանավ, հյուրընկալություն, հավասարազոր, ձեռնափայտ, պարզամիտ, դիմանկար, գյուղատնտես, հեռագնա, գլուխգործոց, ազատաբաղձ, գիտակցություն, աշխատավարձ, մրցանակ, փայտակերտ, ծովափնյա, սրտակեղեք, ապրել, հնարամտություն, սխալվել, հավասարակշռություն, կոշկակապ, կարգապահություն, սրբատաշ, տքնաջան, ինքնատիպ, գրկախառնություն, ռազմադաշտ:

44. Կազմել տրված գոյականների հոգնակին:

Ա. Գնդակ, լեռ, ստուգայց, աստղ, կայսր, ստրուկ, երկրամաս, գորգագործ, ձուկ, ատամնաշար, վիպասք, վիպասան, նկարիչ, անձնանուն, սկյուռ, վագր, ոզնի, արշավանք, զորախումբ, անձրև, փառատոն, կնքահայր, մեծատուն, գինետուն, ձեռնասուն, վիթ, շուն, ռուս, բաղաձայն, հենասյուն, բարեխոս, սնդիկ, սկուտեղ, խմբագիր, հուշագիր, բարեկամ, անձ, մենակատար, բնորդ, եղբայր, պարագա, մարդ, վիշտ, հոգս, լու:

Բ. Դրամահատ, նիզակակիր, դրամագիր, արծակագիր, թոռ, գառ, շտաբ, պատշար, հարցաշար, գոյական, մայրաքաղաք, անգղ, սնդուկ, տղա, բուրդ, խանութ, երեկո, ձու, որբ, կոթող, ուղտ, դուռ, ձի, հաղթանակ, հարկահան, պատուհան, ճամփորդ, ալիք, շուրթ, մարգարիտ, ճեպանկար, կին, տղամարդ, այր,

հոգի, թիկնապահ, պահ, կույր, գերեզման, ցնորք, ծով, ճիգ, ճրագ, երագ, մարմին, զանգ, ճահիճ:

45. Կազմել տրված բառերի հոգնակիները և տեղադրել համապատասխան սյունակներում:

Փարոս, վիպերգ, վիպերգու, ծաղրածու, ածու, կրիչ, բեռ, կետ, կրետ, ծանոթ, առու, վաշխառու, ցեղ, ուսադիր, նստատեղ, կապոց, քարհանք, աշխատավարձ, դասախոս, թատերաբեմ, դեղագործ, վիրաբույժ, զոհ, ուսապարկ, լուսամուտ, թաղամաս, քաղաքացի, ծածկագիր, լեռնանցք, զրահատանկ, սառնամանիք, մարտահրավեր, լսափող, գործիչ, վայրկյան, իմաստ, երևույթ, տարի, թիվ, բարձունք, հողատեր, ծառուղի, օր, գագաթ, գիշեր:

Հոգնակի թիվ կազմում են -եր մասնիկով	Հոգնակի թիվ կազմում են -ներ մասնիկով
Վիպերգեր	փարոսներ

46. Դուրս գրել անհոգնական գոյականները:

Ա. Օրն այն ժամանակամիջոցն է, որի ընթացքում երկրագունդը մի լրիվ պտույտ է կատարում իր առանցքի շուրջը: Լուսնային օրը, այսինքն իր առանցքի շուրջը լուսնի պտտվելու ժամանակահատվածը հավասար է Երկրի շուրջը նրա պտտվելու ժամանակահատվածին՝ 27 ու մեկ երրորդ օրվա:

Օրը բաժանվում է երկու մասի՝ ցերեկվա և գիշերվա:

Հնում օրվա սկիզբ են ընդունվել տարբեր պահեր, որոշ ժողովուրդների համար սկիզբ է եղել արևածագը, մյուսների համար՝ արևամուտը, իսկ արաբների համար՝ կեսօրը: Այդ հեռավոր ժամանակներում հայերի համար օրվա սկիզբ է եղել արևամուտը: (ՀԽ)

Բ. Իրիկվա դեմ հասա գյուղի մարագներին, աչքս ընկավ ճամփի տակ բոստանին, ուր ամեն տարի, Ավա՛ն ամի, կարտոֆիլ էիր ցանում, սոխ, սխտոր: Բոստանի անկյունում, հին աղբի վրա կանեփ էր բուսել խիտ եղեգնուտի պես: Հավերն ամռան շոգին փախչում էին հավաբնից և կանեփուտում ծու ածում, երբեմն էլ թուփս նստում: Նանին տնքտնքալով կանեփի ցողուններն էր դես ու դեն հրում, հավերին կանչում: Հիմա նանին չկա, բայց կանեփուտի ստվերում հավերն առաջվա պես ննջում են: (ԱԲ)

47. Բացել փակագծերը՝ տրված բառերին ավելացնելով Ը կամ Ն:

Ա. Անտառահատների (ճամբար) գտնվում էր խորին տայգայում, չորս (կողմ) անտառ է, խեղդվող, ոչ մեծ բացատում՝ (ճամբար): Միայն մի ճանապարհ կա

տայգան աշխարհին կապող, այդ ճանապարհով են գալիս ու գնում (էտապներ), այդ ճանապարհով ամսվա ընթացքում մի քանի անգամ հռնդալով գալիս են իրար հետևից մի քանի բեռնատար մեքենաներ, անտառում պատրաստված և կալանավորների ուսերով դուրս նետված գերաններով բարձվում ու գնում: Կալանավորների ծանր (աշխատանք) ավելի ծանրացնում են, դարձնում անտանելի մժեղների (ամպեր): Նրանք, զգալով երևի մարդկային կենդանի շնչի (ներկայություն), հարձակվում են միլիոններով, լցվում աչք ու ականջ... (Կալանավորներ) խարույկներ են վառում, ծուխ բաց թողնում, հատուկ տրված ինչ-որ գարշելի հեղուկով օծում (դեմք), (ծեռներ)... (ԳՄ)

Բ. Հայկական ճարտարապետության յոթ հրաշալիքներից (մեկ)՝ Արցախի Դադիվանքի համալիրի Կաթողիկե (եկեղեցի), կառուցել է տվել Խաչենի մեծ իշխան Վախթանգ Խաչենցու կին (Արզուխաթուն) 1214 թվականին:

Արզուխաթուն (իշխանուհի) եղել է իր ժամանակի յոթ գեղեցկուհիներից (մեկ): Քնքշաբույր և գեղեցկաբույր էր նրա սիգաճեն (մարմին): Դադիվանքի պերճապաճույճ (տաճար) կառուցելու ժամանակ աշխատատեղում մի գահավորակ են դրել, որի վրա բազմել է (Արզուխաթուն) և իր գեղեցկությամբ (շրջապատ) լցրել երազային թովչանքով: (Քարագործներ) նայել են նրան, և ասես ընդօրինակելով իշխանուհու աստվածահաճ (արտաքին), կերտել տաճարի (քանդակներ): Բոլոր (քարագործներ) ու (գործավորներ) բանել են առանց ընդմիջման:

(Արզուխաթուն) միայն արտաքինով չէր գեղեցիկ և միայն իր արտաքինով չէր նախօրինակ ծառայում գեղեցիկ քանդակների համար: Այնպիսի ժանյակներ ու վարագույրներ է ասեղնագործել, որոնց (դիտող) կարծում էր, թե դրանց մարդկային ձեռք չի դիպել: (Քարագործ) նայել է Արզուխաթունի ձեռքով գործած (ժանյակներ) և ընդօրինակել: Դրա համար էլ այս իշխանուհուն անվանել են ասեղնագործության աստվածուհի: (ՀԽ)

48. Բացել փակագծերը:

1. Խանդը կայծակի պես փայլատակեց մռայլ հնձվորի (սիրտ): 2. Բոց էր բարձրանում խոր (թոնիր): 3. Լեռներից գյուղի վրա իջնում էին (այծեր) ու (ոչխարներ) հոտերը: 4. Իսկ Հազրոն պատմում էր, որ կյանքում ամենաձանր հարվածը եղել է (կին) մահը: 5. (Գիժ) պես աղմկում էր առուն: 6. (Եկեղեցի) խաչը թեքվեց, ճոճվեց, ինչպես ճյուղը: 7. Հյուրերը ժամանեցին (օր) երկրորդ կեսին: 8. Հիմա մեր գյուղում նման (մարդ) այլևս չկան: 9. Այդ խոսքերից (այրի) թախճոտ դեմքին մի խորհրդավոր ժպիտ երևաց: 10. Նա չէր ուզում կառչել որևէ (միտք): 11. Կայծակն սկսում է ակոսել (գիշեր) պես սև ամպերը: 12. Նույն ոգով նա դաստիարակել էր իր (դուատր): 13. (Երդում) արարողությունից հետո զինվորները անցան խորանի հետևը: 14. (Մարո) իսկական նպատակը ինձ համար մնում էր անհայտ: 15. (Գևորգ Մարգարետունի) (առաջնորդություն) հայերը հաղթանակ տարան: 16. (Բժիշկ) կցկտուր արտասանած բառերը ալեկոծեցին դեռատի (կին)

սիրտը: 17. Անտառում ուժեղ (քամի) այնպես են ճոնչում լորենիները, որ հեռվից լսելիս կարելի էր կարծել, թե (կացին) ծառ են կտրում:

49. Կազմել տրված գոյականների գործիական հոլովածևը և գործածել նախադասության մեջ:

Արյուն, մահ, սկեսուր, լուռություն, ուսում, դասընկեր, տիկին, ուրախություն, ծնունդ, կորուստ, կնքահայր, բազմություն, ծաղիկ, ձեռքբերում:

50. Առանձնացնել ներգոյական հոլով չունեցող գոյականները:

Հորեղբայր, ամիս, ընկերուհի, Վարդանանք, անձրև, քույր, ձուկ, կեսօր, շարժում, ծերունի, սուգ, գիրք, լույս, կորուստ, առավոտ, միտք, պատիվ, հագուստ, թերակղզի, խնդիր, սառցալեռ, տարի, սեր, նուռ, վայրկյան, ուսում, խնամք, երկիր, հեքիաթ, ձեռք, հայրենիք, զմրուխտ, գիշեր, դեմք, ականջ, քնար, բազմոց, գավաթ, զնագոց, կղզի, բժիշկ, իմպրեսիոնիզմ, վաշտ, նամականի, ակնեղեն, երամակ:

51. Առանձնացնել Ի արտաքին հոլովման ենթարկվող գոյականները:

Ձուկ, գինի, արցունք, քաջություն, ժողովուրդ, ձի, հատուցում, շարժում, թուր, աստղ, թիմ, խճուղի, տարի, լեռ, գալուստ, երկինք, օր, օդ, պատանի, դուստր, ծաղիկ, առու, կին, ծով, ընկեր, հոգի, ճանապարհ, Վեդունք, երամ, սնունդ, մտերիմ, թոռ, սերունդ, ծնունդ, մեջբերում, օձաձուկ, անկյուն, գիշեր, սյուն, ժամանակ, բանալի, մուկ, կույր, գառ, ավանդություն, դաշտ, եղևնի, դար, ժամ, ձոր, երկուշաբթի, քարափ, երջանկություն, հարգանք, ոզնի, կրիա, մանուշակ, գինի, տեգր, անկյուն, տալ, բանակ:

52. Դասակարգել բառերն ըստ հոլովումների:

Թուր, խոսք, ծաղկափոշի, տուն, բլուր, արյուն, քամի, հայր, պոչ, կնքամայր, թախիժ, շուն, նժույգ, տիկին, հորեղբայր, քեռի, լամպ, նախահայր, տիրամայր, ձյուն, հզորություն, հաղթություն, հանճար, թագուհի, ոգի, բազմություն, շաբաթ, Արամենք, ջութակ, զորք, սովորություն, ծով, ներկայություն, ավագ, հանգիստ, անտառ, աշուն, կաղնի, կղզի, լուսավորություն, երիզ, ծանրություն, հյուս, խավար, զարուն, մարդ, գունդ, աստղ, անկյուն, հունվար, կեռաս, կեչի, աղբյուր, ցանկապատ, արագություն:

<i>Ներքին հոլովում</i>	<i>Արտաքին հոլովում</i>
Տան	թրի

53.Տրված հատվածներից դուրս գրել ածականները:

- Ա. Եվ քարավանը Աբու-Լալայի աղբյուրի նման մեղմ կարկաչելով,
Հանգիստ, միաջափ քայլում էր առաջ հեզ լուսնկայի շողերի միջով. . . .

. . . Նիրհ էին մտել ծաղկունքը բուրյան՝ ադամանդներով, շքեղ գինդերով, Ծիածանաթև հավքերը իրար գուրգուրում էին քնքուշ մրմունջով. . . .

. . . Հովի գրույցին ունկն դնելով Աբու Մահարին խոսում էր անձայն,-
-Աշխարհն էլ, ասես, մի հեքիաթ լինի՝ անսկիզբ, անվերջ, հրաշք
դյութական. . . .

. . . Եվ քարավանը հյուսվում էր առաջ, և նրա վերև շողում էին վառ
Մանկան ժպիտով աստղերը ազատ, այն հավերժափայլ աչքերը գոհար:
Եվ կանչում էին նրան կաթոգին լույս թարթումները ոսկի աստղերի,
Եվ հոգին լցնում վսեմ դողանջով երկնքի հազար բյուրեղ զանգերի: (ԱԻ)

Բ. Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես մնաս բարով.

Բորբ արևին իմ բոց սրտում ասում եմ ես մնաս բարով:

Մնաք բարով ասում եմ ես, ընկերներիս մոտ ու հեռու,

Ոսոխներիս չար ու արթուն ասում եմ ես մնաք բարով:

Երկնի մովին, կանաչ ծովին, անտառներին խոր ու մթին,

Գարնան ամպին լույս ոլորտում ասում եմ ես մնաք բարով:

Ոսկեշղթա իմ հուշերին, իմ գիշերին, իմ փշերին,

Արտույտներին ոսկի արտում ասում եմ ես մնաք բարով:

Ծաղիկներին դեռ չբացված, դեռ չկիզված հոգիներին,

Մանուկներին վառ-խլրտուն ասում եմ ես մնաք բարով:

Գնում եմ ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, էլ չեմ գալու

Բարի հիշեք ինձ ձեր սրտում, մնա՛ք բարով, մնա՛ք բարով: (ՎՏ)

Գ. Գևորգ իշխանը, տեսնելով Գոռին, որ գլուխը մի կոճղի հենած՝ անուշ մրափում էր, ակամա կանգ առավ նրա առաջ: Լուսինը, որ սահում էր երկնականարի վրա, պայծառ շողերը ծառերի միջից թափանցելով՝ լուսավորել էր պատանու գեղեցիկ դեմքը, ուր հանգչում էր այդ ընկալի մի հանգիստ և խաղաղ ժպիտ:

Պղնձե գրահը, որ պատում էր նրա առողջ կուրծքն ու թիկունքը, ոսկեդրոշ սաղավարտը, որ ծածկում էր տակավին նրա գեղեցիկ գլուխը, բայց չէր կարողանում ամփոփել յուր մեջ նրա հարուստ խոպոպիկները, որոնք զարդարում էին պատանու ճակատն ու պարանոցը, և վերջապես, կմբավոր, արծաթազարդ վահանը, որ բռնած էր ձախ ձեռքում և որով, քնի մեջ անգամ, պաշտպանում էր նա յուր կուրծքը, փայլում էին լուսնի առաջ մեղմ ճաճանչներով: (Մ)

54. Խմբավորել ածականներն ըստ տեսակների:

Շքեղ, քարե, լեռնային, զվարթ, ծեր, մայրական, անհանգիստ, որբ, անթարթ, արծաթյա, ժայռակոփ, զինվորական, հրաշագեղ, սքանչելի, անհնազանդ, պղնձե, հողաբույր, կաթոգին, դրախտային, անգին, հինավուրց, քարաքանդակ,

ուսանողական, անխոս, դժգույն, վաղորդյան, մարդկային, պայծառ, խորհրդավոր, արքայական, ծիրանագույն, կարմիր, անհրապույր, տկար, աստղանկար, տաղտկալի, լուսավոր, վիշապաձայն, միհարկանի, տաքգլուխ, անհագ, քաղաքային, թավալգլոր, անիրական, գահագուրկ, հազարամյա, հանճարեղ, կարգապահ:

<i>Որակական</i>	<i>Հարաբերական</i>

55. Կազմել տրված ածականների բաղդարական և գերադրական աստիճանները:

Ազնիվ, սուրբ, հին, խոշոր, բերրի, պայծառ, վեհ, վսեմ, բարդ, խոր, հաստ, խիտ, մանր, ուշադիր, նուրբ, երջանիկ, գեր, թեժ, հզոր, բուր, բարձր, ծանր, թեթև:

56. Տրված ածականների հետ գործածել երկուական գոյական:

Խելացի, բալագույն, խորիմաստ, խորաթափանց, լուսեղեն, բազմիմաստ, դաշտային, սիգաճեմ, ամեհի, չքնաղ, անսասան, խորունկ, կրակոտ, խուլ, մարմանդ, վիթխարի, հորդաբուխ, հսկա, չարքաշ, խստաբարո, մեղմ, թեթև, նուրբ, զգայուն, գովելի, հազվագյուտ, խարխուլ, անծանոթ:

57. Առանձնացնել համեմատության աստիճան չունեցող որակական ածականները:

Չար, կույր, բարի, խորթ, ծեր, վեհ, շիտակ, ճշմարիտ, ազահ, հպարտ, պոչատ, մեղմ, հին, արդար, համր, կոնատ, լավ, ծանր, գող, հիվանդ, թանձր, խուլ, հզոր, շոայլ, հղի, մերկ, օտար, մեծ, ազատ, դժվար, արու, խենթ, խոշոր, կեղծ, փոքր, կարճ, անգլուխ, կապույտ, բոսոր, կաղ, անմիտ, խուլ, դժբախտ, ալ, անխիղճ, խոնարհ:

58. Առանձնացնել այն բառերը, որոնք արտահայտում են և՛ առարկայի, և՛ հատկանիշի իմաստ:

Մանր, խուլ, գարնանային, զինվորական, գող, վիթխարի, շարքային, թշնամի, սեգ, ծովային, խոպան, բանակային, երիտասարդ, հյութեղ, լեռնական, հարավային, բարբարոս, հանցագործ, նուրբ, կայուն, զորեղ, ապստամբ, վիրավոր, ավագ, վեհաշուք, գեղանի, առևտրական, հով, հսկա, մութ, համր, գիսավոր, թախծոտ, պալատական, ժանտ, խարդախ, համեղ, վիճահարույց, ավետաբեր:

59. Տրված գոյականներից կազմել ածանցավոր ածականներ:

Գիր, լույս, հուր, ադամանդ, քար, բախտ, գույն, ցավ, գլուխ, հող, ոսկի, սիրտ, դար, մայր, արճիճ, ծիծաղ, ազգ, համ, բույր, կյանք, ոճ, զինվոր, ընկեր, երեկո,

մարդ, գիշեր, բուրդ, փայլ, տուն, կարգ, ատամ, ջուր, փայտ, լուսին, բույս, հոտ, արծաթ, մետաղ, հոգի, հայ, փառք, խորհուրդ, օրհորդ:

60. Բայի հետ գործածված ածականներն ընդգծել մեկ, գոյականի հետ գործածվածները՝ երկու գծով:

Ա. Հայրենիքում իմ արնաներկ
Գիշերն իջավ անլույս ու լուռ,
Այնտեղ, ուր կար այնքան սիրերգ
Եվ վարդի բույր և սրտի հուր:
Ամեն մի միտք՝ հիմա մի վերք,
Ամեն հայացք՝ հատու մի սուր.
Արնոտ դիերն են համր ու մերկ
Նայում երկինք անզոր ու զուր:
Մի օր ինձ վա՛ն ծաղկեց մոգված
Մեր նաիրյան սիրտը բեկվա՛ծ,
Հրով որքա՛ն խորհրդավոր.
Ահա, որքան ծաղիկ թեքված,
Մեր հին հոգին համր ու մոլոր,
Ա՛խ, և անզոր, և անարգված. . . . (ՎՏ)

Բ. Քընքուշ լուսնի շուշան փոշին
Մաղեց հեզ գետի վըրա.
Մեղմիկ խշշաց ցորեն, ցողուն,
-Սիրտըս անդո՛րր կըծփա:
Լուռ կըծորե աստղը շողե՛ր
Ու ծըղրիդը կըծըղրա.
Քամին կերգե գաղտնի երգե՛ր,-
Միտքըս հեռու կըսլանա. . . .

Ուռիները նազա՛ն-ծածա՛ն,
Տերևները կըշնչեն,
Ծիտ ու ծիծեռ ճուղքի վըրան
Վառ երազում կընընջեն. . .
Լուսնակ անցավ,- մութը մըթին
Մաղեց հեզ գետի վըրա. . .
Ծանրը խըշշաց լացող ուռին,
-Սիրտըս տըխուր կըհկա. . . (ԱԻ)

Գ. . . . Մայր էր մտնում իրիկնային արևը՝ թեժ լույսով վառված:
Ու անվիատ կովում էին ամբոխները խելագարված:
Աչքերի մեջ՝ կարմիր մի հուր, ու սրտերում-կարմիր կրակ՝
Վերջին թափով մի ամրակուտ՝ անգայթ կովում էին նրանք:
Խենթ երգելով, կրակելով նրանք անցնում էին առաջ-
Ու թշնամին փախուստ տվեց՝ ահաբեկված ու վտարված:-
Մութ էր արդեն, մայր էր մտել արեգակի շողը վերջին,
Երբ գրոհով մի անվեհեր կայարանը գրավեցին. . . (ԵՉ)

61. Ընդգծել փոխանուն ածականները:

Ա. Իմ քաղցրանո՛ւն,

Իմ բարձրանո՞ւն,
Իմ տառապա՞ծ,
Իմ փառապա՞նծ:
Հների մեջ՝ դու ալեհեր,
Նորերի մեջ՝ նոր ու ջահել. . . . (ՊՍ)

Դահիճն եկավ ոտից գլուխ
Կարմիր հագած ու արյուն. . . .
. . . . Անցավ անտես ու աննման
Էն սիրունը աշխարհից. . . . (ՀԹ)

Բ. Նա է շունչ, հոգին իշխան Թաթուլի,
Նրա սիրովն է հարբած էն հսկան,
Նրա ժպիտն է քաջին ուժ տալի,
Որ դաշտն է իջնում առյուծի նման: (ՀԹ)

Աբու-Լալա Մահարին. . . .
. . . . Ապրեց փառքի և վայելքի մեջ,
Հզորների և մեծատունների հետ սեղան նստեց,
Գիտունների ու իմաստունների հետ վեճի մտավ. . . .
. . . . Տեսավ ու դիտեց մարդկանց ու օրենքները: (ԱԻ)

62.Տրված հարվածներից դուրս գրել թվականները և որոշել դրանց տեսակները:

Ա. Նյու Յորքի 2006 թ. աշնանային գեղարվեստական աճուրդների ընդհանուր արժեքը կազմել է 1,3 միլիարդ դոլար: Դա արվեստի գործերի հասարակական աճուրդների պատմության ընթացքում լավագույն արդյունքն է: Ամենաթանկ նկարը «Ադել Բլոխ Բաուեր 2-րդի դիմանկար»-ն էր՝ ավստրիացի էքսպրեսիոնիստ Գուստավ Կլիմտի գործը, որը վաճառվել է 88 միլիոն դոլարով: Արվեստի ստեղծագործությունների վաճառքի ընթացքում 19-20-րդ դարերում գնի նոր ռեկորդներ սահմանել են Պոլ Գոգենի, Էգոն Շիլեի, Լյուդվիգ Կիրենների ստեղծագործությունները:

Ետպատերազմյան արվեստի աճուրդները բերեցին արժեքի նոր ռեկորդներ այնպիսի նկարիչների համար, ինչպիսիք են Վիլլեմ դե Կունինգը (27,1 միլիոն դոլար), Էնդի Ուորհոլը (17,3 միլիոն դոլար), Ֆրենսիս Բեկոնը (15 միլիոն դոլար):

Ըստ Ալբերտ Փարսադանյանի

Բ. Հայկական լեռնաշխարհի վեցերորդ ծովակը Ծովք լիճն է, որն այժմ կոչվում է Գյոլջուկ: Այս լճից է սկիզբ առնում Արևմտյան Տիգրիսի արևմտյան բազուկը: Հնում մտնում էր Ծովք (Չորրորդ Հայք) նահանգի մեջ: Գտնվում է Հայկական Տավրոսի արևմտյան մասում, Խարբերդ քաղաքից 27 կմ հարավ-արևելք: Ծովի մակերևույթից

բարձր է 1155 մետր: Երկարությունը 18 կմ է, լայնությունը՝ 3,5 կմ, խորությունը՝ 70-90 մետր: Ջուրը վճիտ է, ընդունում և բաց է թողնում մի քանի վտակներ: Այս լիճը հայտնի է իր խտուտ կոչվող ձկներով: Ծովքը շրջապատված է Ծովուց կոչվող լեռներով: (ՀԽ)

63. Որոշել տրված թվականների տեսակները և լրացնել աղյուսակը:

Տասներորդ, վեց-վեց, մեկ երկրորդ, հինգական, չորրորդ, մեկական, վեց ութերորդ, տասնմեկերորդ, առաջին, ութունվեց հազար, հինգ միլիարդ, վաթսուներկու միլիոն, յոթ-յոթ, հինգերորդ, ութսունական, երկու երրորդ, տասական, հազար հիսունյոթ, ութ-ութ, հազարերորդ, քառասունութ, հարյուրական, հինգ հազար վեց հարյուր քսանչորս, երրորդ, չորսական, երեսունմեկերորդ, հազար հինգերորդ, հարյուր քսանութ:

Քանակական			Դասական
Բացարձակ	Բաշխական	Կոտորակային	

64. Տրված նախադասություններում թվականները գրել՝

ա) արարական թվանշաններով

1. Յոթերորդ դարի սկզբից մինչև տասնութերորդ դարի վերջը հայերը կերտել են շուրջ յոթ հարյուր հազար խաչքար, որից վեց հարյուր վաթսուն հազարը ծառայել է որպես տապանաքար, քառասուն հազարը՝ հուշարձան: 2. Քրիստոսի ծննդից առաջ առաջին դարում՝ ութսուներեք թվականից մինչև վաթսունինը թվականը, շուրջ տասնհինգ տարի, արքայից արքա Տիգրան Բ Մեծի օրոք, Հայաստանը միակ երկիրն էր աշխարհում, որը մեկի փոխարեն ուներ երեք թագավորանիստ քաղաք՝ երեք մայրաքաղաք, որոնք ունեին իրենց դրամահատարանները: 3. Սևանի ավազանը զբաղեցնում է չորս հարյուր ութսունհինգ հազար հեկտար տարածություն, որից երեք հարյուր վաթսուն հազարը ցամաքն է, հարյուր քսանհինգ հազարը՝ լճի ջրային հայելին: 4. Հայաստանի տարածքում կան մոտ ինը հազար չորս հարյուր ութսուն մեծ ու փոքր գետեր, որոնցից երեք հարյուր յոթանասունինը ունեն տասը կմ-ից մեծ երկարություն:

բ) հռոմեական թվանշաններով

1. Մ.թ.ա. չորրորդ հազարամյակի երրորդ քառորդից հասարակական առաջընթացը Հայաստանի տարածքում նոր փուլ է թևակոխում: 2. Առաջին ձիավորը հնագետ էր, երկրորդը՝ նկարիչ: 3. Շախմատում մրցանակային են համարվում առաջին տասը տեղերը, իսկ առաջին երեքը մեդալներ են ստանում: 4. Հյուսիսային Կորեան 2006 թ. դարձավ աշխարհի իներորդ ատոմային երկիրը: 5. Բյուզանդական կայսրությունը ստեղծվել է չորրորդ դարում և գոյություն ունեցել

մինչև տասնհինգերորդ դարի կեսերը: 6. Առաջինը բուն եգիպտական քաղաքակրթությունն է, որ տևեց չորրորդ հազարամյակից մինչև մ.թ.ա. չորրորդ դար, երկրորդը ետալեքսանդրյան, հելլենիստաքրիստոնեական, մ.թ.ա. չորրորդ դարից մինչև մ.թ. յոթերորդ դար, և երրորդը՝ մուսուլմանական, յոթերորդ դարից մինչև այսօր:

գ) հայերեն այբուբենի փառերով

Մ.թ.ա. վեցերորդ դարից մինչև 1930-ական թվականները, այսինքն՝ երկուսուկես հազարամյակում լիճը գտնվում էր ծովի մակերևույթից 1916 մետր բարձրության վրա: Մինչև ջրերի օգտագործումը Սևանա լճի մակերեսը 1416 կմ² էր, երկարությունը՝ 75 կմ, միջին լայնությունը՝ 19 կմ, առավելագույն լայնությունը՝ 56 կմ, միջին խորությունը՝ 41,3 մետր, ջրի ծավալը՝ 58,5 միլիարդ խորանարդ մետր:

65. Տրված հարվածների թվականներն արտահայտել փառերով:

Ա. Մխիթարյան միաբանությունը 1703-16 թթ.-ին գործել է Հունաստանի Մեթոն բերդաքաղաքում: 1732 թ.-ին Սբ. Ղազար կղզում միաբանները հիմնադրել են վարժարան: 1772 թ.-ին միաբանների մի խումբ կանոնադրության փոփոխման շուրջ առաջացած վեճի պատճառով թողել է Վենետիկը և 1773 թ.-ին հաստատվել Տրիեստում, իսկ 1811 թ.-ին տեղափոխվել է Վիեննա: Սբ. Ղազարում Մխիթար Սեբաստացին սեփական գրադարանի հիմքի վրա ստեղծել է մատենադարան: Վենետիկի մատենադարանի ներկայիս ձեռագիր ֆոնդը 5000 միավոր է, տպագիր ֆոնդը՝ շուրջ 100 000: Հայտնի է նաև Վիեննայի մատենադարանը, որտեղ պահվում է շուրջ 2600 գրչագիր մատյան:

Բ. Հայկական տպագրության հիմնադիրը Հակոբ Մեղապարտն է, ով 1512 թ.-ին լույս ընծայեց հայերեն I տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը»: II հայ տպագրիչն Աբգար Թոխաթեցին է: Նա 1560-ական թվականներին նախ Վենետիկում, ապա՝ Կոստանդնուպոլսում տպագրեց մի շարք գրքեր:

XVII դարում հայկական տպագրություն հիմնվեց նաև այլ քաղաքներում՝ Լվովում, Նոր Ջուղայում, Ամստերդամում: Նոր Ջուղայում գիտնական Խաչատուր Կեսարացին և նրա օգնականներն ինքնուրույն պատրաստեցին հայկական տառամայր ու մեքենա և 1638 թ.-ից սկսեցին հրատարակել մեսրոպատառ գրքեր:

Հատկապես կարևոր էր Ամստերդամի հայկական տպագրությունը: 26 տարվա ընթացքում՝ 1660-86 թթ.-ին, այստեղ տպագրվեցին այբբենարաններ, Վարդան Այգեկցու «Աղվեսագիրքը», «Արիեստ հարմարողության» I աշխարհաբար գիրքը, I տպագիր Աստվածաշունչը, որը 1222-էջանոց հսկա, պատկերազարդ գիրք է:

260 տարի հայկական տպագրությունը մնաց օտարության մեջ: Եվ միայն 1771 թ.-ին տպարան հիմնվեց Էջմիածնում և տպագրվեց I գիրքը Հայաստանում: 1820-ական թթ.-ի կեսերին հիմնվեց Շուշիի տպարանը: 1876 թ.-ին հայկական տպագրությունը մուտք գործեց Երևան և Ալեքսանդրապոլ (Գյումրի):

66. Տեղադրել համապատասխան թվականները:

Գիտուն աղվեսը ոտքով է թակարդ ընկնում:
Գիժը քար գցեց հորը, խելոք հավաքվեցին, չկարողացան հանել:
Լեզուն է խոսում, հացն՝ :
Արջը երգ գիտի, էլ տանձի մասին:
. . . . ծաղկով գարուն չի գա:
Մինչև չգա ետինը, չի հիշվի :
. . . . թել քաշի, կարկատան կթափվի:
. . . . կա արժե, կա չարժե:
. . . . ձեռքով ձմերուկ չես բռնի:
Ուզողի երեսն է սև, չտվողի՝ :

67. Գտնել փոխանուն թվականները:

Առաջին սերս ձնծաղիկի պես
Ձնհալի միջից մի անգամ ժպտաց. . . .
Երկրորդը խոնարհ մանուշակ էր մի.
Կանաչ թփի մեջ թաքուն ծիծաղեց. . . .
Երրորդը վարդ էր մի բոսորաթերթ,
Ծանոթ էր արդեն արևի ուժին. . . . (ՀՍ)

Ինչ էլ որ անես-հարյուրը՝ հարյուր,
Հազարն էլ հազար է մնում. . . (ՊՍ)

68. Տրված հարվածներից դուրս գրել դերանունները և որոշել տեսակները:

Ա. Ես չեմ որոնում:

Որոնում է նա,
Ով կամենում է ինչ որ բան գտնել:
Իսկ ես. . . չգիտեմ, թե ինչպե՞ս գտնեմ
Իմ ունեցածը ցույց տալու հնար:

Իսկ ինձանից
Ինչո՞ւ ես դու այդպես քաշվում և ամաչում,
Ի՞նչ է, մենք նո՞ր ծանոթացանք,
Իրար դեռ լավ չե՞նք ճանաչում:

Հազար անգամ դու ընկնելով՝ ինչպե՞ս ելար,
Ո՞նց ապրեցիր՝ հազար անգամ երբ դու մեռար:
Ի՞նչ հրաշքով չմարեցիր, ինչպես նրանք,
Որ մե՛ծ էին, հրդե՛հ էին, իսկ դու՝ կրա՛կ: (ՊՍ)

Բ. Ծովն էր, գիշերն էր, ես էի և դու.
 Չորս հոգով էինք, էլ ոչ ոք չկար,
 Թե իմանար մեզ ինչից է գրկում,
 Առավոտն ինքն էլ երևի չգար:

Եթե կա ինչ-որ գերեզմանատուն,
 Որտեղ հանգչում են նրանք սրբորեն,
 Յույց տուր ինձ, գնամ, հավիտենություն՝ն,
 Իմ ծնված օրվա շիրիմն համբուրեմ:

Եթե կա աստված, թող այնպես անի,
 Որ լինեմ վերջին մեռնողն աշխարհի:
 Եվ այնպես անի, որ ինձ հետ առնեմ,
 Աշխարհի բոլոր ցավերը տանեմ: (ՀՍ)

Գ. Եվ անձկությունով լցված նրա սիրտը ցանկաց նրան, որին ուղղված նամակը պահում էր գրպանում: Երբեք այդքան ծարավ չէր եղած սիրո համար, երբեք այդքան չէր սիրած սերը: Ու լաց եղավ որբը: Լաց եղավ այն մանուկը, որ յուրաքանչյուր մարդ կրում է իր մեջ. այն միամիտ և անպաշտպան էակը, որ թույլ ձեռքերը երկարում էր լրացուցիչ լույսին և ուզում է ամբողջանալ: Նրա ամբողջ կյանքը ֆիլմի արագությամբ անցավ աչքերի առաջից: Տեսավ ինքն իրեն: Ո՛վ ուներ այս աշխարհում, ո՛ւմ հետ էր սրտով, մտքով, հոգով կապված... Ահագին չարչարանքներով փորձել էր վերագտնել իր երկիրը, իր հայրենիքը... Ի՞նչ պետք է լիներ, եթե նավից էլ գրկեին նրան... (ԿԶ)

69. Խմբավորել դերանուններն ըստ տեսակների՝ լրացնելով աղյուսակը:

Բոլորը, միմյանց, քեզ, այսքան, մեկը, իրար, ինչ-որ, ոմն, ամեն մի, ոչինչ, մեկմեկու, քանի, ես, սա, որերորդ, երբ, որոշ, ինքս, նույն, որևէ, ուր, այդպես, ոչ մի, մի, յուրաքանչյուր, ով, նույնպիսի, ոչ ոք, ամբողջ, ողջ, սույն, մեկմեկի, համայն, ուրիշ, մյուս, ամենայն, ամենքը, այլ, փոքր-ինչ, ոչ մեկը, մենք, որտեղ, այստեղ, ոմանք, որ, դու, նույնպես, այսպիսի, միևնույն, մի քանի, ինչ:

Անձնական	Ցուցական	Փոխադարձ	Հարցա- հարաբերական	Որոշյալ	Անորոշ	Ժխտական

70. Բաց թողնված տեղում գրել

ա) անձնական դերանուններ

1. Եթե արևը չխոնարհվեր դեպի մայրամուտ, առանց հոգնության երկար կմնար այդ դիրքով: 2. մանկությունից ընկերներ էին, և սերը ծնվել էր

նույնքան աննկատ: 3. . . . մտքում դրել էի հետ որսի գնալ: 4. Ընկերս լռեց դեմքին տեսա երանության նույն ժպիտը, ինչպես առաջին անգամ, երբ դեռ բարձրանում էինք արահետով: 5. . . . հորինեցի մի դաս, երբ աշակերտները պատմում էին ընտանիքների մասին: 6. Հետո իմացա, որ դեռ չորս օր պառկել է: 7. Տանն ընտելացել էին , դառել էի մտերիմ մարդ: 8. . . . վազում եմ, ետևից, կանգնում եմ, էլ է կանգնում: 9. - Որ հետդ չես տանում՝ գործը չի:

բ) ցուցական դերանուններ

1. . . . էր ասում արդյոք նրա հայացքը, թե՞ հայացքի ազդեցության տակ ես էի նրա փոխարեն մտածում: 2. . . . մի քանի տարի առաջ հյուր էի գնացել հորեղբորս: 3. Նրա վերջին բարեհաճ ընդունելությունն ինձ համոզման բերեց, որ ամեն առավոտ ես նրան կհանդիպեմ տեղում: 4. -Ա՛խ, աղավնի՛ է,- շշնջաց ցավագին, որ իմ մեղքն էլ եկավ: 5. Բայց և այնպես զարմանքս մեծ էր, որ չկարողացա չհարցնել: 6. Որ է, ինչո՞ւ է ուզում քեզ կործանել: 7. Ո՞ր մեղքիս համար է, որ զցել են ինձ մենակ, անօգնական: 8. Պարսից թևը, որ թեթևացել էր, սկսեց ուժեղանալ մանր ջոկատներով: 9. . . . երևաց, թե ինչ կարող էին անել գեղջկուհիները, որ սկզբում համեստ ու լուռ եկել էին կռիվ:

գ) փոխադարձ դերանուններ

1. Հանդիպում էինք հաստաբուն ծառերի, որոնց ճյուղերն էին խառնվել: 2. Այն բարդիները աճում էին բավական հեռու: 3. Նրանք երբեք չէին տեսել չէին հետաքրքրվել : 4. . . . նկատմամբ ունեցած ատելությունը խզել էր ամեն մի կապ: 5. Նրանց հայացքները հանդիպեցին և ամոթից խոնարհվեցին: 6. Չէին զիջում , մահու պայքար էին մղում:

71. Դուրս գրել չհոլովվող դերանունները:

Մեկը, ուրիշ, իրար, սա, նա, այդ, այդքան, քանի, որ, ոմն, ինչ-ինչ, մի, այլ, մյուս, այսպիսի, նույնպես, սույն, դա, այդպես, ուր, երբ, որոշ, միևնույն, մի քանի, յուրաքանչյուր ոք, ոմանք, ինքս, ինքը, մենք, ոչ ոք, ոչ մի, ինչ-որ, այստեղ, ինչու, քանիերորդ, ոչինչ, նույն, այնչափ, ամենայն, ամեն մի, ամբողջ, բոլոր, որտեղ, ով, իրար, որքան, ամեն ինչ, ամեն ոք:

72. Լրացնել համապատասխան դերանունները:

Աղվեսի վկան պոչն է:
. . . . մարդու շապիկը մարմնին մոտ է:
. . . . ցանես, էլ կհնձես:
Ասա է ընկերդ, ասեմ՝ ես :
. . . . աշխատի, կուտի:
. . . . լեզու գիտես, մարդ ես:

Այլուրը մաղեցինք, փախլավան կերան:
. . . . շուն իր դռանն է հաչում:
. . . . աչքի գերանը չի տեսնում, աչքի շյուղն է տեսնում:
. . . . չկա թիզ ու կես, արարմունքը գազ ու կես:
Կուժ ասեմ, կուլա լսիր:
. . . . սայլը նստի, հորովելը կերգի:

73. Ընդգծել փոխանուն դերանունները:

Ա. Ուրիշներին լինեն բոլոր շքեղ կանայք. . . .
Իմը լինես լոկ դո՛ւ, իմ հայրենի՛ք քաղաք. . . .

Եվ թիվը նաև այն մանուկների,
Որ պիտի մերը լինեին կարծես,
Բայց մերը չեղան. . . .

Եվ ո՛չ մի գավթում մի՛ ընդունեք
Նրանց մատաղը,
Որ իրենցը չէ, այլ գողացված է:
Վերջի մասին թող մտածի վերջացողը:
Մերն սկիզբն է: (ՊՍ)

Բ. 1. Ակոսինի անունը Լաչին է, մյուսինը Ղարա է: Էն մյուսինը չգիտեմ, դուք դրեք: 2. Սակայն այդպիսիները բացառապես արհեստավորներ էին, որոնցից զուրկ էր Առաջինը: 3. Իսկ դուք կատարեցեք ձերը՝ դուք էլ արյունաքամեցե՛ք խոցված գազանին: 4. Եթե ոչ՝ Վարդանը վարում էր իրենը, նա պիտի գնար: 5. Տեսա՛ր, ջրի թոքերի բորբոքումն անցավ: Կանցնի և քո՛նը: 6. Ու վախվորա՛ծ-քաշվա՛ծ մրմնջում եմ հեռվից, Մրմնջում եմ արդեն ո՛չ թե սրան, Այլ այն մեկին՝ իմին, հեռավորին. . . 7. Ես ակամա ինձ դնում եմ ա՛յն դերի մեջ, Որ իմը չէ, Սակայն պիտի ճարահատյալ հիմա խաղամ դատարկ բեմում. . . : 8. Այն, որ ես էի, որ իմն էր առաջ, Արդեն չի հառնի և ոչ մի գրքում. . .

74. Տրված հատվածներից դուրս գրել բայերը և որոշել դրանց տեսակներն ըստ կազմության:

Ա. Կռունկ, հայոց մոխիրը կար քո թևերին,
Երբ չվեցիր.
Թրջված էր քո աչքը հայոց արցունքից,
Երբ չվեցիր.
Ասիր. «Չեմ գա էլ Հայաստան, մահ է այնտեղ
Եղեռն, ավար»:
Մեր երկրի պես ավեր բույնդ անտեր թողիր

Ու չվեցիր:

Ու չվեցիր՝ հայոց վշտի անձայր բանտից

Դու դուրս չեկար,

Ամեն ջրում, ամեն հողում մի հայ տեսար.

Ականջ դիր մեկի հարցին, քո բնի պես բույն չտեսար

Գնա՛, շրջիր երկրե-երկիր ու ետ դարձիր, բարո՛վ դառնաս

Կանչիր բոլոր պանդուխտներին ու ե՛տ դարձիր,

Բարով դառնաս,

Դարձիր այնպես, որ ո՛չ մի տեղ, ոչ մի պանդուխտ

Քեզ չսպասի,

«Կռունկ, ուստի՞ կուգաս» չասի ու չլացի,

Բարով դառնաս: (ԳԷ)

Բ. Եվ ծեր, ծովի պես ծանրացավ հոգիս:

Ու կատակ թվաց արած գործը մեր:

Բայց լուռ բարձրացա, քայլեցի նորից:

Թնդանոթները թնդում էին դեռ:

Լցվել էր հոգիս անբառ մի կսկիծ՝

Թվում էի ինչ մենա՛կ ու անտեր:

Հանկարծ կանգ առա ես ձորամիջին:

Այլանդակ մի դի փռված էր իմ դեմ:

Նրա մոտ ընկած վիրավոր մի ձի

Ջղաձգորեն մեռնում էր արդեն:

Հե՛յ, մի քիչ առաջ, հլու էր սանձին՝

Սա՛ էլ էր փախչում այս վայրից գեհեն: (ԵԶ)

Գ. ԱՄՆ-ում 2006 թ. մահացավ 95-ամյա Ջոզեֆ Բարբերան: Նրա կողմից ստեղծված «Ֆլինսթունների ընտանիքը», «Սկուբի Դուն», «Յոզին և Մաջիլա-Գորիլան» մուլտֆիլմերի կերպարները քաջ հայտնի են, բայց բոլորից վաղ հայտնի էին կատու Թոմն ու մկնիկ Ջերին: «Թոմն ու Ջերին» եթեր է դուրս եկել 1940 թվականին:

Բարբերայի հետ սերիալի վրա աշխատել է նաև նրա անփոխարինելի գործընկեր Ուիլյամ Խանը (նա մահացավ 90 տարեկան հասակում): «Թոմն ու Ջերին» դարձավ նրանց համատեղ աշխատանքի առաջին փայլուն արդյունքը, որը 14 անգամ ներկայացվեց Օսկարի մրցանակաբաշխությանը և ստացավ 7 արձանիկ:

Ըստ Ալբերտ Փարսադանյանի

75.Տրված բայերի հիմքերից ածանցման միջոցով ստանալ գոյականներ:

Երգել, գրել, ծնել, ուսուցանել, քայլել, վազել, խոսել, դողալ, բզզալ, փորել, նկարել, փախչել, սառչել, ֆշշալ, բռնել, խշշալ, ջարդել, կապել, աշխատել, զբաղվել,

ոյութել, շաչել, այրել, շոյել, հրճվել, մոլորվել, ապրել, զբոսնել, ծածկել, հուզվել, ընտրել, բախել, արբենալ, գովել, կրկնել, ընթանալ, քսել, նզովել, աղոթել, քամահրել, թարգմանել, հավատալ, պաշտել, քծնել, քրտնել, հրապուրել, մտածել, հնձել:

76. Քայերը խմբավորել ըստ կազմության:

Ասել, վախենալ, կաչել, հեռանալ, գնալ, խոսել, կոտրատել, կանգնել, մերձենալ, կովել, սառչել, փետրել, ճաքճքել, զատել, մոտեցնել, բոցկլտալ, մաքրել, նույնանալ, ցատկոտել, փշրտել, բարդել, հայտնագործել, ավելանալ, սպանել, ավարտվել, իջեցնել, շաչել, փակվել, զտել, տանել, լսել, հալվել, կարդալ, զեկուցել, սանրել, զուգվել, կտրատել, նստեցնել, զարմանալ, ելնել, գտնել, պաշտել, զարգանալ, հանդիպել, կամենալ, գրավել, հանձնվել, ամփոփել:

Պարզ	Ածանցավոր

77. Տրված ածանցներով բայեր կազմել:

ան	
են	
ն	
չ	
ադ	
ոդ	
կոդ	
դ	
ացն	
եցն	
ցն	
վ	

78. Հարադիր բայերի իմաստները բացատրել հոմանիշ բայերով:

Ձեռք տալ, մոտ գալ, ներս գալ, խոսք տալ, վազ տալ, ցույց տալ, լաց լինել, աղաչանք անել, մեջ ընկնել, ծափ տալ, խաբս տալ, բաց թողնել, ետ տալ, ձայն տալ, շուռ գալ, բաց անել, տակնուվրա անել, անց կենալ, շաղ գալ, միտք անել, թույլ տալ, պար գալ, կանգ առնել, զրույց անել, թաց անել, խրատ տալ, կախ տալ, սկիզբ առնել, լող տալ, խաղ անել, ձիգ տալ, աղոթք անել:

79. Տրված հարվածից դուրս գրել բայերը և որոշել դրանց սեռը՝ լրացնելով աղյուսակը:

Հոլանդիայում շատ են սիրում Ծովատառեխի տոնը: Նահապետական այս տոնը նշվում է հունիսի առաջին շաբաթ օրը: Գլխավոր տոնակատարությունը տեղի

է ունենում Հաագայի նավահանգստում: Այդ օրն այնտեղ է բերվում նոր որսի առաջին տառեխը: Նավահանգիստ մուտք գործած առաջին նավը դրամական մրցանակ է ստանում: Տառեխով առաջին տակառը նվիրաբերվում է Նիդեռլանդների թագուհուն, երկրորդը վաճառվում է աճուրդով: Տոնը ավանդական ավարտ ունի. գարեջուրն ու ծովատառեխը իրարից անբաժան են:

<i>Ներգործական</i>	<i>Կրավորական</i>	<i>Չեզոք</i>

80. Ներգործական կառուցվածքի նախադասությունները փոխակերպել կրավորականի:

1. Անձայր գործվր լցրեց Ադամի սիրտը: 2. Հազարաթույր ծաղիկները պճնազարդել էին բուրաստանները: 3. Լուսնյակի նուրբ շողերը ծրարել էին նրա դեմքը: 4. Վարդանը չհետապնդեց Մատյան գնդին: 5. Մի անհուն դառնություն ու կսկիծ ավերեց նրա չքնաղ օրը: 6. Վարդանը անշուշտ չափսի կարողանար հաղթահարել պարսից ուժերի կուտակումը աջ թևում: 7. Ձյունի սպիտակության վրա ես նշմարեցի փոքրիկ սև կետեր: 8. Վարդանը տվեց առաջին օրինակը: 9. Տուրտն ու արևը խանձել էին նրա դեմքը: 10. Վերջին նախադասությունը նա արտասանեց որպես մեղեդի: 11. Նա ձեռք բերեց այս բախտը խիստ թանկ վճարով: 12. Սարսափելի գույներով էր նկարագրում Ջինգոն անտառային աշխատանքները: 13. Լարիսա Սեմյոնովնան արդեն ինձ հաղորդել էր այդ տխուր լուրը: 14. Համախոհները շրջապատեցին տեր հորը գուրգուրանքով և հարգանքով: 15. Անհայտ բարձունքից լուրջությունը խոցոտում է անհայտ մի անտառային թռչուն: 16. Տանուտերը խուզարկել էր փախած զինվորների տները, մարագը, գոմը: 17. Խոր լուրջությունը պեղում էր հորիզոնը: 18. Կիսամութը սղոցում էր ձիավորի չոր ու ահազդու ձայնը: 19. Անձանոթը Արաբոն էր, որի անունը վառել էր իմ մանկական երևակայությունը: 20. Քամին շրխկոցով բացեց լուսամուտի փեղկերը:

81. Կրավորական կառուցվածքի նախադասությունները փոխակերպել ներգործականի:

1. Նույնիսկ հաստաբուն կաղնին էր խոնարհվում քամուց: 2. Վարդանը հետզհետե շրջապատվում էր թշնամու գնդերով: 3. Բոլորը ցնցվեցին նոր ուժի հարվածից: 4. Արևից ուրվագծվում էին հեռավոր լեռների կատարները: 5. Երբեմն-երբեմն այդ խաղաղությունը խախտվում էր շան կաղկանձից: 6. Խառնաշփոթ խորհրդածություններից երկար ժամանակ վանվում էր քունը օրիորդի աչքերից: 7. Աղքատիկ խրճիթը լուսավորվել էր կաթնագույն լույսով: 8. Լուսամուտի ճեղքից փչող քամուց մոմի թույլ բոցը թեքվում էր դեպի Ոստանը: 9. Ծերունու դեմքը պատված էր ցանցի նմանվող խորշոմներով: 10. Գիշերվա անակնկալ դեպքից ցնցվել էր Նոր Ջուղան: 11. Դեռ վաղ առավոտից սկսած՝ վանքի բակը լցվել էր խառնիճաղանջ ամբոխով: 12. Արևի վաղորդյան շողերից ոսկեզօծվել էր լեռան գագաթը: 13. Նրանց

տարերքից նավը ցնցվում էր: 14. Այդ մրցույթից հետո հանճարեղ երաժշտագետների շարքը համալրվեց մի նոր անունով: 15. Ձեյթունը շրջապատվեց թուրքական մեծաքանակ գորաբանակով: 16. Անսպասելի հարվածից փշրվել էր Ոսկանի հոգին: 17. Կապույտ սովերներով երիզվել էին եկեղեցու կորնթարդ գմբեթները: 18. Խաղերի մրցակարգը վաղնջական ժամանակներում կազմվել էր օրենսդիր Լիկուրգոսի կողմից: 19. Սրբազան ճանապարհը ծածկվել էր բյուրաբազում հանդիսականներով: 20. Սենյակներից մեկում, որ նման էր փոքրիկ մատուռի, հանճարեղ Նարեկացու կողմից արարվել է իր սքանչելի գիրքը:

82. Տրված հատվածներից դուրս գրել անկախ դերբայները:

Ա. Ու մարդը խորհեց և մառ դաշտերից. . . .

. . . . Պեղեց ծովերը, լեռները պեղեց,
Աստծո թաքցրած գանձերը գտավ
Ու մտքի ձեռքը աստղերին մեկնեց՝
Եվ լուսնի վրա մահեր նշմարեց. . .
Գտավ հյուլեի հոլովումն անմահ,
Զգաց, որ երկու անգամ չի կարող
Անցնել նույն ջրով նույն գետի՝ անցնող. . . .
. . . . Նա իր մեջ զգաց երազներ վսեմ,
Լույսը դարձնելով իր սպեղանին. . . .
. . . . Եվ տիեզերքում լոկ մարդը՝ անեղծ
Վշտին հաղթելով՝ դարձավ իմաստուն: (<Շ)

Բ. Դո՛ւ, կախարդ ուղի, հավիտյան անհայտ, հավիտյան դյուխող իմ նոր
հայրենիք,

Տար ինձ, իմ սիրտը՝ հավիտյան լացող՝ այնտեղ, ուր բնավ չեն եղել
մարդիկ. . . .

. . . . Բարեկամն ի՞նչ է- լավիդ նախանձող, քայլիդ խուզարկու, բամբասող
ագահ.

Ծանոթ շները չեն հաչում վրադ, ծանոթ մարդիկ են հաչում քո վրա. . . .

Եվ քարավանը, ճեղքելով վստահ մրրկապարը վայրագ ջինների,
Անշեղ ու անվախ ձգվում էր առաջ ղրղանջուններով հուզված զանգերի,
Իրենց աղեղի պարանոցները՝ ուղտերը լարած նետերի նման,
Զիլ վազում էին, և իրենց ետքից թողնելով փոշու անծայր քարավան:
Եվ ետ չէր նայում անցած ճամփեքին և չէր ափսոսում թողած անցածին.

Ողջույն չէր վերցնում, ողջույն չէր տալիս եկող ու անցնող քարավաններին:

(ԱԻ)

- Գ.** 1. Մի օր բլրակը բարձրանալիս ոտքս սայթաքեց, ընկա սառույցի վրա. . . . :
2. Վրաններից մի մարդ, մանգաղը գոտու մեջ խրած, գլուխը փաթաթած կեղտոտ

թաշկինակով, մահակին հենվելով, բարձրացավ բերդի քարափով և մոտեցավ ձիերի մոտ նստած պահակին: 3. Արահետով բարձրանալիս միշտ ետ էր նայում: 4. Հիշում էր մի քանի ամսից ի վեր յուր գործ դրած ջանքերը, անխոնջ աշխատությունները՝ բաժանված ու պառակտված ուժերը միացնելու, երկիրը՝ օտար բռնությունից, իսկ գահը կործանումից ազատելու համար: 5. Առավոտյան դեմ հալածողները ետ դարձան և զարմանքով տեսան, որ ամբողջ հովիտը ծածկված է թշնամու դիակներով: 6. Չքացող կյանքի վերջին զորավոր ցնցումն էր այդ, սպառված աղբյուրի վերջին կաթիլները, որ մի առանձին թափով էին ընկնում ցամաքած ավազանի մեջ: 7. Չեմ հիշում մի դեպք, որ խոսելիս հարցից շեղվի: 8. Պարսիկ զինվորները աղեղները լարած ետ ու առաջ էին ցատկոտում, չոքում՝ որոնելով ու նշելով թիրախները:

83. Կազմել գործել, հեռանալ, թռչել, մոտեցնել, հասնել, զբաղվել **բայերի դերբայական ձևերը:**

Անորոշ	Ենթակայական	Համակարգ	Հարակարգ	Անկարգ	Վաղակարգ	Ապակարգ	Ժխտական

84. Հոլովել առաքել և հիանալ **անորոշ դերբայները և դրանցով կազմել նախադասություններ:**

85. Կազմել տրված բայերի ենթակայական դերբայը: Առանձնացնել գոյականի բառական արժեք ձեռք բերած միավորները:

Նվազել, գրել, աղոթել, ընթերցել, ուտել, հավաքել, ծնել, բարձրանալ, մտածել, հանձնել, գրավել, հերքել, մատուցել, ամփոփել, շողալ, վաճառել, գնել, կառուցել, հարցնել, ասմունքել, ձուլել, ընտրել, ծոել, աշխատել, բերել, քերթել, զոդել, կանգնել, նվազել, ուրանալ, քծնել, խաբել, ծախսել, տաքանալ, աճել, դատել, զցել, խորովել:

86. Կազմել տրված բայերի հարակարգ դերբայը: Առանձնացնել գոյականի և ածականի բառական արժեք ձեռք բերած միավորները:

Ընկնել, քնել, ծաղկել, զինել, հասնել, շողալ, խորովել, կպչել, դիմել, նստել, թրծել, հինել, հոտել, ընկնել, քրտնել, հանգչել, փախչել, կորչել, ուշանալ, զայրանալ, հոգնել, զուգել, ծլել, պայթել, աճել, սառչել, լարել, աղալ, խուզել, անցնել, զտել, գժվել, բացել, ապրել, վառվել, թխել, զարմանալ, զարգանալ, քերթվել, հալել, մանել, զինվել:

87. Դուրս գրել փոխանուն դերբայները:

Մինչ տարին ունի տասներկու ամիս ու չորս եղանակ,
Տասներկու անգամ սա եղանակ է մի օրում փոխում:

Եթե դուք պետք եք և, դիցուք, նույնիսկ հաշիշ եք ծխում
Նա էլ է ծխում, որպեսզի հանկարծ . . . դուք չնեղանաք:
Ի՞նչ էլ նվագեն նա է պարողը,
Ի՞նչ էլ կարել տան՝ նա է կարողը,
Ո՛ր ծառն էլ ցույց տան նա է քաղողը:
Հարգո՞ւմ եք նրան:

Այս գավով էլ եկեք հարգենք
Եվ անթառամ հիշատակը
Կամար-կամուրջ քաշողների,
Սյուն ու խաչքար տաշողների,
Սանդ ու երկանք կտրողների,
Ելք ու ճամփա փնտրողների,
Վանք ու պալատ շինողների,
Կտրիճ զավակ ծնողների,
Աղբյուր-առու սարքողների,
Փող ու թմբուկ զարկողների,
Ինչպես նաև հիշատակը
Նրանց հիշող հարգողների. . .
Հպարտությամբ և անհատույց երախտիքով
Հիշենք բոլոր ընկածներին
Հերոսաբար հանգածներին
Հանուն լույսի
Եվ մե՛զ համար.
Հիշենք նաև նրանց ծնող,
Նրանց սնող
Նրանց զինող
Հայրենիքը հերոսամայր: (ՊՍ)

88. Տրված հարվածներից առանձնացնել կախյալ դերբայները (ձևաբայերը):

Ա. Ես նախանձում եմ հոսող ջրին,
Ինքն իրեն մաքրում և մաքրվում է,
Օրհնաբանենք այս օրենքը հին
Եվ ապրենք, քանի դեռ ապրվում է:

Քարից բուսել, աճել քարից,
Ես բերել եմ այն աշխարհից
Մի քարեղեն հուզում. . .
Եվ ամեն մի քարից ահա
Ես իմ բախտի այս մետաքսյա
Քնքշությունն եմ հյուսում: (ՀՍ)

Աշխարհի իմ, քեզանից
Մի բան եմ հարցնելու.
Ճի՞շտ է, որ քեզ մի օր
Դրախտ են դարձնելու: (ՀՍ)

Բ. 1. Օրիորդը, որ հուզմունքից շառագունել էր, արդեն նմանվում էր այդ վայրկյանին մի հրաշագեղ դիցուհու, որ իջնում էր երկնքից՝ յուր սիրած մահկանացուի անհրաժեշտ ճակատագիրը ջնջելու: 2. Թագավորն աչքերը հառած նայում էր իշխանի վրա, որը խոսում էր ինչպես մարմնացյալ հայրենասիրություն. նրա սիրտը հուզվում էր, նա կամենում էր գրկել և համբուրել այդ քաջին: 3. Ծաղիկ ես, ամեն գարնան ծաղկելու ես: 4. Երեսուն տարվա մեջ չէր կարելի խլել ժողովրդից այն, ինչ որ կազմվել էր նրա մեջ դարերի ընթացքում: 5. Օղի մեջ բուրում էր խիստ ախորժելի զովություն: 6. Սանձարձակ ծաղրում էին, զրպարտում, հայիոյում քաղաքի առաջին միլիոնատիրոջը, սակայն միայն հետևից: 7. Գիշերից բավականին անցել էր. առավոտյան աստղը ծագում էր արդեն, և արևելքի մեջ խավարն սկսում էր լույսից բաժանվել: 8. Քննության էր գնալու, փայտ էր ջարդում, ոտքը կտրեց:

89. Դուրս գրել ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների բայաձևերը:

Ա. Չլինեի բանաստեղծ՝
Այսքան չէին հալածի,
Չլինեի այսքան մեծ,
Այսքան չէին քարկոծի: (ՀԾ)

... Եվ նրա մասին, որ ընկերները
Հանդը գնալիս Սարո կկանչեն,
Որ սարից փախած սոված շները
Կտերը պիտի ոռնան, կլանչեն:
Ծանր չոմբախը, գլուխը մեխած,
Օճորքում դրած պիտի մրոտեր. . . . (ՀԹ)

Ես որ մեռնիմ՝ ինձ կթաղեք
Ալագյազի լանջերում
Որ Մանթաշից հովերը գան,
Վրաս հևան ու երթան: (ԱԻ)

Բ. Կուզեի նստել մի քարի վրա
Եվ անվերջ նայել իմ Արարատին,
Հարբել հայրենի միրաժով նրա
Եվ հավերժ նայել իմ Արարատին:
Աղբյուրների պես աղջիկները գան,

Ես ծարավ սրտով չնայեմ նրանց,
Տուն կանչե մորս ծայնը իրիկվան՝
Չպոկեմ սարից աչքս կարոտած:
Եվ նստած լռին այդ քարի վրա՝
Անդադար նայեմ իմ Արարատին,
Մինչ շիրիմ դառնա քարն էլ ինձ վրա
Եվ մամռած նայեմ իմ Արարատին: (ՀՇ)

90. Գտնել ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների բայաձևերը և որոշել դրանց ժամանակաձևերը:

1. Բայց պետք է և այն գիտենալ, որ այդ դժբախտություններից և ոչ մեկը մեզ չէր պատահի, եթե մենք այնքան օտարամոլ չլինեինք, և եթե մենք հետևած չլինեինք ո՛չ հույնին և ո՛չ պարսիկին: 2. Նրանց վախճանը պետք է այդպես լիներ, որպեսզի նրանց արյունով ծլեին, աճեին և ծաղկեին այն սրբազան սերմերը, որ ցանեցին հայրենի հողի վրա... 3. Մի մասը կթողնեմ մեր երկրի պահպանության համար, իսկ մի մասը ինձ հետ առնելով՝ կգնամ և իմ խումբով կմիանամ այն բանակի հետ, որ պիտի գումարվի Փառանձեմ տիկնոջ շուրջը: 4. Այն ժամանակ, որպեսզի նրան խոչընդոտ չդառնաս, կկալանավորե քեզ, կդնե բանտը և այսպիսով կզրկե քեզ քո բոլոր ձեռնարկություններից: 5. Համաձայն կանխավ արած որոշման՝ իշխանը պիտի բարձրանար Գեղ՝ նրանցից օգնական մարդիկ բերելու, իսկ սեպուհը պիտի իջներ Վեդի ավանը և, եթե այդտեղ չհաջողվեր, անցներ Ճերմանիս և այդտեղից մարդիկ հրավիրեր: 6. Եթե դուք կհաջողիք ձեր ձեռնարկության մեջ և կկարողանաք սրբել այն արատը, որ դրին մեր դրոշի վրա տիրադրուժ իշխանները, այն ժամանակ ես նորեն կելնեմ իմ բանտից և կպսակեմ ձեր հաջողությունները իմ արշավանքներով:

91. Ընդգծել հրամայական եղանակի բայաձևերը:

Ա. Գնա՛, քարավան, ներբաններիդ տակ տրորիր, կոխիր օրենք, իրավունք,
Եվ ուղիներիդ փոշիով ծածկիր թե՛ չարն ու բարին, թե՛ իշխանություն...
... Տարածվի՛ր անձիր, փոհի՛ր ավազիդ դեղին ծովերը ազգերի վրա,
Ծածկիր ողջ մարդկանց, քյոշկ ու խրճիթներ, գյուղ ու շահաստան, շուկա ու
կլա... (ԱԻ)

Իմ գերեզմանին դուք չմոտենաք,
Թողեք, որ հանգչի իմ սիրտը հոգնած,
Թողեք, որ լինեմ հեռավոր, մենակ...-
Զգամ, որ կա սե՛ր և ցնո՛րք և լա՛ց... (ՎՏ)

Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին,-
Մեր երկիրը ավերված, բայց սուրբ է և հին...
... Չի հասկանա ձեր հոգին և ծույլ, և օտար,

Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է ամեն քար. . . .
. . . . Արիացի՛ր, սի՛րտ իմ, ե՛լ հավատով տոկուն,
Կանգնի՛ր հպարտ որպես լույս լեռն է մեր կանգուն: (ՎՏ)

Բ. 1. Լիլիթ, հոգուս հոգի, այդպես լուռ և տխուր մի՛ նայիր ինձ, ժպտա՛, խոսի՛ր: 2. Ո՛վ Գառնո գինվորք և ժողովուրդ. . . . այդ իմ վերջին պարտքն է, որ կատարում եմ, լսեցե՛ք: 3. Տո՛ւր, սիրեցյալ զավակս, նվիրի՛ր քո հարսնացուին, ինչ որ հաճելի է քեզ: 4. Գնա՛, ի՛մ քաջ, արժանի՛ եղիր քո մրցանակին: 5. Կարդա լրագիրները և տես, ո՞ր զորեղ տերությունն է մեր ժամանակներում կուշտ: 6. -Գնա՛, տե՛ս բարձրագահ Աբուլն ու մթին սարեր, ես չտեսա, գոնե դու տես,- մորմոքով շշնջաց Շիրազը: 7. Մի փնտրեք սիրո իմ տողերի տակ Մարդկանց անուններ կորած ու հայտնի. Թվում է, ի՛նձ էլ հայտնի են նրանք. Դուք զուր մի՛ փնտրեք, նրանց չե՛ք գտնի: (ՍԿ) 8. -Էդ սառը գետնին մի՛ նստիր, վե՛ր կաց, Սերո՛. . . . 9. Քայլի՛ր, կանգ մի՛ առ, թողե՛լ ենք միայն շղթա ու կապանք, կեղծիք ու պատրանք:

92. Դուրս գրել անկանոն և պակասավոր բայերը:

. . . . Եվ արցունքները գետերի փոխված՝
Իբրև լեռների լեզուն փրփրած՝
Խոցված լեռների անեծքն են լալիս,
Իսկ գագաթների ձյունն հավերժացած
Սառած արցունքն է, որ ցած չի գալիս:
Գթաց լեռներին Արարողն ու մեծ
Ցավն առավ՝ անհոգ դաշտերին տվեց. . . .
. . . . Առավ վշտի շանթն ու ծովը նետեց,
Ու ծովն անդնդից ելավ կատաղի. . . .
. . . . Ծովին էլ գթաց Արարողը լուռ,
Ցավն առավ, ծովից՝ երկնքին տվեց:
. . . . Չգաց, որ մահն է վիշտն ամենամեծ,
Եվ կովի ելավ մահվան դեմ մահով. . . .
. . . . Կռահեց, որ հողն է աճյունն արևի
Եվ եղել է, կա, անստեղծելի. . . .
. . . . Կասկածեց, հուսաց ու դարեր փնտրեց,
Ու աչքն աստղերից ուղղեց արևին. . . .
. . . . ու երբ չգտավ՝
Այն բիրլիական
Հարդագողն արած իր մտքի ճամփան,-
Ու երբ չգտավ ելավ նորախոհ՝
Էլ չապավինեց նա ոչ մի Աստծո

Ու ոչ մի ոգու, որ իբր ահի
Տեսիլն էր անգո այս տիեզերքում. . . . (ՀՇ)

93. *Լրացնել համապատասխան բայերը:*

- ով է ընկերդ, ով ես դու:
- Բզի գլխին բռունցքով
- Գյուղ, գերան
- Գողը գողից, աստված վերից
- հարյուր դահեկան, այլ հարյուր բարեկամ:
- Ով, ոչ
- Ինչ որ, այն
- Լավություն, ջուրը
- Քանի լեզու, այնքան մարդ ես:
- Աշխարհի ու լեզուն է:
- Ջուրն անձրևից
- Օձի, լեզվի
- Ում սայրը, նրա հորովելն
- Ամեն անգամ գետը գերան
- Աստված սարը, ձյունը
- Եզն, դանակավորը
- Ձուկը ջրում առևտուր

94. *Տրված հատվածներից դուրս գրել մակբայները և որոշել տեսակները:*

Ա. Հայը միշտ էլ խաչապաշտ է եղել՝ սկզբում արևն է պաշտել, հետո քրիստոնեական աստծուն: Խաչի հնագույն տեսակը կամ նախահայրը կեռխաչն է: Հայկական որոշ կեռխաչերի ծայրերը ծոված են մի քանի անգամ, հաճախ դրանք լինում են եռաճանկ ու բազմաճանկ: Հայաստանում 3-4-րդ դարերում այդ նշանները դեռևս փայտյա էին: Հինգերորդ դարից սկսած փայտյա խաչերին հետզհետե սկսեցին փոխարինել քարե խաչերը: Դաժան ժամանակները թույլ չեն տվել, որ հայկական կառուցողական հանճարը փայլատակի ծավալուն շինարարություններում, որոնք թիրախ են դառնում հրոսակների համար և քանդվում ու ավերվում: Դա ամենևին էլ չի նշանակում, թե հայը դադարել է տաճարներ կառուցելուց և սահմանափակվել է փոքրածավալ խաչքարով: Խաչքարը բացառապես հայկական կոթող-հուշարձան է, արևմտյան ճակատին խաչի պատկերով, ազգային զարդաքանդակների ինքնատիպ հորինվածքով ուղղաձիգ կանգնեցված սալաքար:

Ժողովուրդը խաչքարերին վերագրել է այլազան զորություններ, ընկալել դրանք որպես հավատո հանգանակ, հոգու փրկության խորհրդանիշ: (<Խ)

Բ. Բայց իշխան Կամսարականի նպատակն այդ հետապնդումը չէր: Նա բավական էր համարում այն, որ թշնամուն չթողնեն գրավել բարձունքները. բայց հիմա, երբ իր զորքը տարերային թափով ու աղմուկով առաջ էր գնում, նա մտածում էր, որ մութի մեջ այդպես առաջանալով՝ իր վաշտերը կարող են ընկնել թշնամու

թերևս հոժ բազմության մեջ և լույսը բացվելուն պես կշրջապատվեն և կամ, պարսիկներն այդպես նահանջելով, կմտնեն քաղաք և ավելի կուժեղանան պարիսպների ներսում, մի բան, որ բնավ ցանկալի չէր իրեն, և վտանգավոր էր. . . .

. . . .Իսկ մինչ այդ, աղջամուղջը պարզվում էր հետզհետե, արևելքում ամպերը շառագունում էին. սարերի հետևը, շատ խորքում կարծես հրդեհ կար, և նրա ցուլքից լուսավորվում էին ամպերն ու հեռու լեռների կատարները: (ՍԶ)

95. Խմբավորել տրված մակբայները:

Այժմ, թշնամաբար, վերուստ, լայնակի, ամենևին, կրկին, ամենուր, ի վեր, ի վերջո, այնուհետև, մերթ ընդ մերթ, երբեք, բոլորովին, եռակի, վաղուց, ցմահ, դանդաղ, աստ, հապճեպ, կամաց, շտապ, ուշ, վերև, առջևը, ամենուրեք, վարպետորեն, դուրսը, միասին, դեռ, իսկույն, արագ, բառ առ բառ, առայժմ, համարյա, քարեքար, առաջիկայում, հիմա, խմբովին, ֆիզիկապես, տնետուն, լրջորեն, շեշտակի, հավետ, հետզհետե, բազմիցս, աստիճանաբար, դարձյալ:

Տեղի	Ժամանակի	Ձևի	Չափի	Աստիճանի

96. Հերկյալ վերջածանցներով կազմել մակբայներ:

ա) -բար բ) -պես գ) -որեն դ) -ովին ե) -իցս զ) -ակի

97. Տրված բառերից կազմել մակբայներ:

Երեք, բազում, հաճախ, արագ, հին, միշտ, լուրջ, խումբ, տխուր, սկիզբ, ազնիվ, համեստ, նյութ, գերազանց, վերջնական, բնազդ, գազան:

98. Տրված հարվածներից դուրս գրել կապերը:

Ա. Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է՝ ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը ծիրանի գույն: Քարի մոտ է բսնում ալպիական մանուշակը, պարիսպների տակ. . . .

. . . .Ներքևը, ձորում, Բասուտա գետի մյուս ափին, քարաժայռերի վրա թառել են մի քանի տներ: Առավոտյան ծուխ է ելնում երդիկներից, ծուխը ձգվում է երիզի նման և հալվում ամպերի մեջ: Շոգ կեսօրին գյուղում կանչում է աքլորը, աքլորի կանչի հետ պառավ մի շինական հորանջում է տան ստվերում, ձեռնափայտով ավազի վրա նշաններ գծում, նշանների հետ փորփորում գլխով անցածը:

Քանի՜ սերունդ է ապրել Բասուտա գետի մոտ, կարկատած թաղիքները փռել ցեխերի վրա, եղեգնով պատել վրանները, և ամեն գարնան, երբ Կաքավաբերդի լանջին բացվել է ալպիական մանուշակը, այժ ու ոչխար քշել են բերդի լանջերը. . . .(ԱԲ)

Բ. Բոլոր ներկա եղողների հայացքներն ուղղված էին դեպի այդ ծրարը, իսկ մյուսներից ավելի մեկինը: Դա հանգուցյալի երկրորդ որդին էր՝ Միքայելը, քսանութ

տարեկան մի երիտասարդ, նուրբ կազմվածքով, նիհար, գունատ, ածխի պես սև մազերով և նորածն սրուկ միրուքով: Նրա խոշոր, մուգ ընկուզեգույն աչքերն արտահայտիչ էին, խելացի և միևնույն ժամանակ, կարծես, անտարբեր դեպի ընտանեկան վիշտը: Արդարև, նրա համար կորուստն այնքան մեծ չէր, որքան իր եղբորը հանձնված ծրարի բովանդակությունը: Գիտեր, որ այդ ծրարի մեջ ամփոփված է հանգուցյալի կտակը. . . . Մերթ ընդ մերթ նա այնպիսի անտարբեր և ներվային շարժումներ էր անում, որ կարծես ուզում էր հարձակվել ավագ եղբոր վրա և նրանից խլել ծրարը, որ սպունգի պես ծծում էր նրա ամբողջ ուշադրությունը. . . . (ԱՇ)

Գ. Տպավորություններից ու խոհերից զատ, հոր սիրած այս առանձնարանը մտնելուց հետո, նրան պաշարեց նաև հուշերի հորձանքը, ինչ առաջացրեց այդ հաստաբեստ ու քանդակազարդ սրահը, որ կահավորված էր ճիշտ այնպես, ինչպես հոր ժամանակ, ինչպես երեք-չորս տարի առաջ էր, երբ ինքը գնացել էր Բյուզանդիա. . . .

. . . . Մի երկու անգամ նա փորձ արավ թոթափել իրենից այդ հուշերը՝ վաղվա անելիքների մասին մտածելու, չկարողացավ, այդ մտքերը, որ ասես իրենց սուր մագիլները խրել էին նրա ուղեղի մեջ անհանգստության հետ միասին ցավ էին պատճառում նրան, և նա շարունակում էր մտածել, թե մի՞թե իրոք հայ նախարարները չեն հասկացել. . . . որ Հայոց Աշխարհի թուլությունը նրա ցրված ուժերի և անմիաբանության մեջ է. . . . (ԱԶ)

99. Խմբավորել կապերն ըստ շարադասության:

Առանց, համար, հանուն, ըստ, դիմաց, համաձայն, մեջ, միջոցով, շնորհիվ, հակառակ, ի դեմս, նախքան, առթիվ, հետո, վրա, բացի, դեպի, իբրև, շուրջ, առաջ, մասին, ընդդեմ, դեմ, հանդերձ, համեմատ, հանձին, մոտ, պես, հետո, չափ, տակ, որպես, հոգուտ, կողմից, միջև, հետևանքով, ներքո, առ, նկատմամբ, ընթացքում, վերաբերյալ, զատ, փոխանակ, օգտին, նման, նպատակով, անկախ, հեռու:

<i>Նախադրություն</i>	<i>Հետադրություն</i>	<i>Երկրորդություն</i>

100. Կազմել բառակապակցություններ՝ փրված կապերը գործածելով փարբեր իմաստներով:

- Առաջ* (տարածական և ժամանակային)
- մեջ* (տարածական և ժամանակային)
- պես* (ձևի և ժամանակային)
- վրա* (տարածական և ժամանակային)
- մոտ* (տարածական և ժամանակային)
- համար* (շահի և նպատակի)

որպես (ձևի և բացահայտման)
մինչև (ժամանակային և չափի)

101. Հերկյալ կապերի հետ գործածել համապատասխան հոլովածներով բառեր:

Հանուն, հոգուտ, հանձին, հանձինս, ի դեմս, հակառակ, բացառությամբ, ի հեճուկս, հանդեպ, բացի, շնորհիվ, մասին, չնայած, մեջ, նպատակով, նախքան, դեպի, որպես, ներքո, միջև, համաձայն, ի վեր, ընթացքում, պատճառով, ընդդեմ, օրոք, վերաբերյալ, ընդառաջ, կողմից:

102. Խմբավորել կապերն ըստ կազմավորման աստիճանի:

Հանդեպ, ց, պես, պատճառով, մոտ, ձեռքով, առ, միջոցով, համար, ժամանակ, հոգուտ, համեմատ, առաջ, կողմից, փոխանակ, դեպի, երեսից, ընթացքում, ի դեմս, անունից, բացի, նախքան, ընդդեմ, ներքև, հետ, ի վեր, տեղակ, չնայած, գծով, անկախ, մինչև, համեմատ, վերաբերյալ, դեմ, փոխարեն, շուրջ, անց, հետևանքով, նպատակով, ընդառաջ, մեջ, տակ, չափ, որպես, հետո, դիմաց, զատ, զերդ, ըստ, ի հեճուկս, քով, նման, կից, չնայելով, միջև, հանձին, շնորհիվ, ներքո, առթիվ, զուգընթաց:

Իսկական կապ	Անիսկական կապ	Կապական բառ

103. Տրված կառույցները փոխարինել հոմանիշ կառույցներով:

- | | |
|----------------------------|----------------------------|
| ա) հայրենիքի համար | է) բարերարների հովանու տակ |
| բ) առյուծի նման | ը) տան առաջ |
| գ) խոսելուց առաջ | թ) հաղորդման մասին |
| դ) պայմանի համաձայն | ժ) տուժածների օգտին |
| ե) տոնակատարության ժամանակ | ի) տվյալ դեպքում |
| զ) քաջ լինելուց զատ | յ) ընտանիքի հետ միասին |

104. Լրացնել նախադասությունները՝ փակագծերում տրված բառերը դնելով համապատասխան կապային կառույցներով:

1. Առաջին անգամ էր այցելում այդ վայրերը, բայց ամեն ինչ արդեն տեսածի տպավորություն էր թողնում (նա): 2. Կարծես ամեն ինչ նախապես գրված էր նրա (ուղեղ): 3. Երբ հասավ վեր, բարձրացավ (ժայռ) և նայեց լճին: 4. Երկու օր անդադար (հաչել), վերջապես, հանգստացավ և լռեց: 5. Վարդանը բլրակից ջանում էր հետևել (խավար) շարժվող սևինքների տեղաշարժումներին: 6. Նույնիսկ քարափի հաստաբուն կաղնին խոնարհվում էր (քամի): 7. Արևը, խաղում էր մայրամուտի (ամպեր): 8. Դիլան Դային նստեց (քար): 9. Բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ (ամպեր): 10. Մարդը բահը խրում է առվի

ավագի մեջ և գալիս (ես): 11. Նա մխրճվեց գետը և մարտ սկսեց գետը մտած պարսիկ (հեծյալ): 12. Թշնամին միջոցում առաջացավ (գետափ):

105. Տրված հարվածներից դուրս գրել շաղկապները և որոշել տեսակները:

Ա. Որովհետև մութը կոխում էր, իշխանն ու սեպուհը որոշեցին շատ չհեռանալ Գեղա սահմաններից: Ուստի ուղղվելով դեպի Ուրծաձոր՝ բարձրացան մի փոքրիկ լեռնագոտու վրա, որ ծածկված էր անտառով ու մացառուտներով: Այստեղ գտան նրանք ծառերով հովանավոր մի անքույթ ծածկարան, ուր և իջան հանգստանալու և գիշերելու:

Զինվորներից մի քանիսը զբաղվեցին իսկույն խմբի սակավապետ կերակուրը պատրաստելով, իսկ մի քանիսը փութացին ջուր բերելու

. . . . Ընթրիքի վրա ոչ ոք չէր խոսում. ամենքը լուռ ուտում էին: Բայց այդ՝ ոչ այն պատճառով, որ ուշադիր էին իրանց քաղցը հագեցնելուն, այլ այն, որ ամենքն էլ մտածում էին սկսելիք գործի մասին, որ կարի հանդուգն և վտանգավոր մի ձեռնարկություն էր: (Մ)

Բ. Աշոտ Բ Բագրատունի թագավորը 961 թվականին Հայաստանի մայրաքաղաք է հռչակում Անին և արքունիքը Կարսից տեղափոխում այնտեղ: Գթասիրտ այր էր այս հզոր ու շինարար արքան: Մի անգամ նրան իմաց տվին, թե աղքատ գործավորների մի խումբ որոշել է հեռանալ Անիից և աշխատանք որոնել ուրիշ քաղաքում: Արքան գնում հասնում է գործավորների հետևից, կանգնեցնում նրանց, ամեն մեկին երկու ոսկի տալիս, ետ վերադարձնում և նրանց տեղավորում արքունի արհեստավորաց տներում:

-Անին պերճության ու հարստության քաղաք է,- ասում է Աշոտը,- այստեղ աղքատներ չպետք է լինեն, մի աղքատն էլ Անիի անունը կզցի: Անիից կարող է հեռանալ միայն ծուլը: Աշխարհի բոլոր կողմերում պետք է իմանան, որ անեցի նախ և առաջ նշանակում է հարուստ՝ և՛ դրամով, և՛ հոգով, և՛ երազանքով: Իսկ եթե մեկը բանում է, բայց չի կարողանում ծայրը ծայրին հասցնել՝ դրա համար մեղավորը ոչ թե նա է, այլ՝ ես՝ Աշոտ Բագրատունի արքաս:

Եվ արքան օգնում էր ամենքին: Այդ պատճառով էլ մարդիկ նրան տվել են Ողորմած մականունը:

106. Կազմել նախադասություններ՝ թե, եթե. . . ապա շաղկապները գործածելով համադասական և սորորադասական նշանակություններով:

107. Կազմել նախադասություններ՝ հեղկյալ բառերը գործածելով որպես շաղկապներ և

ա) կապեր

մինչև, ինչպես, նախքան, փոխանակ, չնայած

բ) մակբայներ

էլ, ապա

գ) եղանակավորող բառեր

կարծես, կարծես թե, ասես, ասես թե, հենց, միայն:

108. Խմբավորել շաղկապներն ըստ կազմության:

Եթե, սակայն, թեկուզ, այնինչ, ուստի, հետևաբար, այնուամենայնիվ, այնքանով որ, թե. . . թե, մինչև, կամ, որովհետև, այլև, հետևաբար, հենց որ, ոչ թե, ուրեմն և, վասնզի, քանզի, իսկ, ու, մինչդեռ, թեպետ, չնայած որ, ասես թե, ընդ որում:

Պարզ շաղկապներ	Ածանցավոր շաղկապներ	Բարդ շաղկապներ	Քերականական ձևերից առաջացած շաղկապներ

109. Դասակարգել տրված համադասական շաղկապներն ըստ իմաստի:

Եվ, ու, սակայն, կամ, այլև, այլ, ոչ թե, այնուհանդերձ, կամ թե, նաև, այնինչ, բայց և այնպես, թե, ոչ. . . ոչ, այլպես, և կամ, միայն, մինչդեռ, կամ թե չէ, միայն թե, թե չէ, ապա թե ոչ, ոչ միայն. . . այլև, և ոչ միայն, և ոչ թե, բայց, իսկ, կամ. . . կամ:

Միավորիչ-հավելական	Ներհակական	Տրոհական

110. Խմբավորել ստորադասական շաղկապներն ըստ իմաստի:

Որ, թե, որպեսզի, եթե, թե որ, միայն, մինչև որ, հենց, հետևաբար, ուստի, թեև, ինչպես որ, միայն թե, քանի որ, չնայած, քանի դեռ, եթե միայն, որովհետև, մանավանդ, քանի, թե չէ, մինչ, ուրեմն, հետևաբար, թեկուզ, թեպետ, մինչև, նամանավանդ որ, ոնց որ, ասես թե, կարծես, կարծես թե, այն է, այսինքն:

Ստորադասական շաղկապների իմաստները	Ստորադասական շաղկապները
Մեկնական	
Նպատակի	
Պայմանի	
Պատճառի և հիմունքի	
Ժամանակային	
Հեղևանքի	
Զիջական	
Ձևի և նմանության	
Բացահայտման	

111. Տրված հարվածներից դուրս գրել եղանակավորող բառերը:

Ա. Մի՞թե իմ մեջ է այսօր արթնացել հանճարը ձեր սեգ.

Ե՛ս եմ շառավիղն արդյոք ձեր, ո՛վ հանճարներ մեռած.

Թո՛ղ հուրհրա, իմ գրքում, ձեր ոգու ցուլքը լուսե,

Թո՛ղ երգերն իմ այսօր, խոսքերում իմ-ձեր ջանքը եռա՛:-

Ո՛վ մեր մեռած վարպետներ, իմ թախանձանքը լսե՛ք.-

Ձեր անմահ կնիքը դրե՛ք-իմ անմար երգերի վրա... (ԵՉ)

Բ. Արդարև, նրա համար կորուստն այնքան մեծ չէր, որքան իր եղբորը հանձնված ծրարի բովանդակությունը: Գիտեր, որ այդ ծրարի մեջ ամփոփված է հանգուցյալի կտակը, բայց ի՞նչ կտակ-ահա խորհրդավոր ժամի էականը, ահա այն, որ պիտի որոշեր իր ճակատագիրն ու ապագան... .

-Չլինի՞, թե ծերունին խենթացավ և ինձ զրկեց ժառանգությունից,- դարձավ նա մոտ քառասուն տարեկան մի տղամարդի... .

...Կանգնած էր նա հանդարտ, անվրդով, գլուխը միշտ բարձր պահած, այնպես, որ, կարծես, պարանոցը դրված էր երկաթե սեղմիչի մեջ:

Գուցե նրան նեղում էր խիստ մաքուր և խիստ փայլուն օսլայած շապիկի բարձր և մաքուր օձիքը... .

...Բայց ի՞նքը, մի՞թե այդ ութ տարիներն անց էր կացրել հանգիստ ու երջանիկ, մի՞թե նրա դառնությունը պակաս է եղել, քան ծնողներինը:

-Բաց արա ու կարդա հորդ կամքը,- ասաց այրին որդուն:

-Ո՛չ, վաղը կկարդանք, թո՛ղ առայժմ մնա իմ մոտ: (ԱՇ)

Գ. Բայց ավա՛ղ, ամբողջ դրյակում չկար մինը, ոչ կանանց և ոչ օրիորդների շրջանում, որին նա յուր սիրտն ու գաղտնիքը հավատալ կարողանար: Եվ ցավալին այն է, որ եթե գտնվեր իսկ այդպիսին, դարձյալ ինքը չէր հայտնիլ նրան ոչինչ, որովհետև չէր հավատում ոչ մի կնոջ անկեղծության, մանավանդ, եթե այդ կինը իշխանական ցեղից էր և, հետևապես, ծագմամբ իրան հավասար: Թագուհին հավատացած էր, որ այդպիսիները եթե առերես իսկ կարեկցեին իրան, այնուամենայնիվ ներքուստ կուրախանային յուր թշվառության վրա... . Նա հույս ուներ մի մարդու վրա, որ, կարծում էր, ոչ միայն կվշտակցե իրան սրտի անկեղծությամբ, այլև գուցե կկարողանար թեթևացնել այդ վշտերը: Ահա՛ այդ մարդուն էր սպասում թագուհին այնքան անձկությամբ, որ, սակայն, հակառակ յուր խոստման... . չէր երևում տակավին: (Մ)

112. Խմբավորել եղանակավորող բառերն ըստ փեսակների:

Արդարև, միթե, կարծես, երանի, ոչ, այո, հարկավ, հենց, լոկ, իսկ, չէ, միմիայն, ահավասիկ, ինչևէ, այնուամենայնիվ, ահա, թող, մի, գոնե, ապա, ցավոք, երևի, միգուցե, իհարկե, անշուշտ, դժբախտաբար, իրոք, ասես, թերևս, բարեբախտաբար,

գեթ, միայն, անգամ, ի դեպ, ինչևիցե, համենայն դեպս, անկասկած, անպայման, երնեկ թե, ցավոք սրտի, իրավ, սոսկ, այնուհանդերձ:

Հաստատական	
Երկբայական	
Գնահատողական	
Ժխտական	
Կամային	
Ցուցական	
Սահմանափակման	
Սաստկական	
Զիջական	
Բաղձանքի	

113. Կազմել նախադասություններ հետևյալ համանուններով:

- | | |
|---------------|-------------|
| կարծես-կարծես | հենց-հենց |
| ասես-ասես | անգամ-անգամ |
| ապա-ապա | իսկ-իսկ |
| մի-մի-մի | էլ-էլ |

114. Տրված հարվածներից դուրս գրել ձայնարկությունները:

- Ա.** Վշվշում է գետը- վո՛ւշ, վո՛ւշ,
 Ու հորձանք է տալիս հորդ,
 Ու կանչում է «Արի՛, Անո՛ւշ,
 Արի՛, տանեմ յարիդ մոտ. . .»
 -Անո՛ւշ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ տո՛ւն արի. . .
 Կանչում է մերը վերևից, կանչո՛ւմ.
 Լո՛ւտ են ձորերը, լո՛ւտ են ահռելի,
 Դուշման Դեբեդն է մենակ մըռընչում:
 Վուշ-վո՛ւշ, Անուշ, վո՛ւշ-վո՛ւշ, քուրի՛կ,
 Վո՛ւշ քու սերին քու յարին,
 Վուշ-վո՛ւշ, Սարո, վո՛ւշ-վո՛ւշ, իգի՛թ,
 Վո՛ւշ քու սիրած սարերին. . . (ՀԹ)

- Բ.** Զորաբանակները նայեցին իրար: Ողջ դաշտավայրը լիքը զո՛րք-զո՛րք. . . .
 -Հա՛-ա՛-ա՛-ա՛-ա՛,- գնաց շշունջը ողջ զորաբանակը մի ծայրից մյուսը:
 -Պա՛հ, քո տո՛ւնը շեն,- խոսեց Աբրահամ պապիկը,- Պարսկաստանը ողջ
 դատարկել է մինչև տակը. . . .
 -Զորաբանակ, զգա՛ա՛ա՛ա՛ա՛ստ,- խոպոտ, օտար ձայնով գոչեց Դավիթ
 սեպուհը:
 -Զորաբանակ, զգա՛ա՛ա՛ա՛ա՛ստ,- գնաց քամու պես ողջ զորաբանակի վրայով:

-Ի մա՛ա՛ա՛րտ,- լսեց ողջ զորաբանակը մեկ Վարդանի հրամանը. . . .
 -Առավե՛՛ե՛՛ե՛՛լ,- ծայնում էին ավազները. . . .
 . . . Նա զգաց այդ ահռելի ուժը իր թիկունքում և շատ բան պիտի ասեր, բայց միայն գլուխը թափ տվեց.
 -Դե՛ . . . իմ հետևի՛ց. . .
 Մի անգամ էլ ընդոստ շրջվեց ետ ու զայրալի.
 -Առավե՛՛ե՛՛ե՛՛լ. . . (ԴԴ)

115. Տրված ծայնարկություններից կազմել գոյականներ և բայեր:

Խը՛22, չըրը՛խկ, թըրը՛խկ, դը՛մբ, շըրը՛խկ, տը՛զգ, թը՛խկ:

116. Գեղարվեստական գրականությունից դուրս գրել ծայնարկություններ պարունակող հատվածներ:

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

117. Որոշել տրված հատվածների նախադասությունների տեսակներն ըստ հնչերանգի:

Ա. Անց է կենում դարձյալ տարին:
 Նայում է կույսն ամեն օր.
 -Ո՞ւր է, հայրիկ, ե՞րբ կգա նա
 Սարից թռած ձիավոր:
 Միշտ երազում ես տեսնում եմ
 Էն հերոսին ապագա,
 Հուր կարոտով թըռած իմ դեմ,
 Լուսանում է. . . ու չըկա:
 -Կըգա, դըստրի՛կ իմ թանկագին,
 Հեշտ չի բերվում հուրն անշեջ.
 Շատ, շատ անգամ բերող հոգին
 Ինքն է այրվում նըրա մեջ. . . (ՀԹ)

Բ. Լեռների ոտների տակ սնդուսի ծովն է հևում, ուր լուսափետուր որորները քնքշորեն խփում էին իրենց կուրծքը ոսկեսայր կոհակներին և սուրում էին դեպի հեռավոր զմրուխտաշող կղզիները: Այնտեղ երփնաթերթ ծաղիկներն էին խնդում և բարձրուղեշ արմավենիներն էին օրորվում գուրգուրող հովերի մեջ:

-Տեսա՞ր, հոգիս, ինչ գեղեցիկ է: Ես չէի՞ ասում,- շշնջաց Ադամը և գորովով գրկեց Լիլիթի մեջքը:

-Վատ չէ, բայց իմ ասած ճանապարհը նույնպես լավն էր,- ասաց Լիլիթը և, ոստում անելով՝ թռավ Ադամի գրկից դուրս. . . .

-Օ՛հ, ի՛նչ սիրուն են այս մանր քարերը, ի՛նչ սիրուն գույներ ունեն. կարմիր, կապույտ, կանաչ, ոսկե. . . Ադա՛մ, տուր ինձ այդ խիճերից մի քանի հատ:

-Լիլի՛թ, այս ի՛նչ են որ: Ես գիտեմ այնպիսի խիճեր, որոնք փայլուն են արևի պես, թափանցիկ են ջրի պես և կարծր են ու շատ գեղեցիկ. . . .

-Ե՞րբ կբերես, ասա՛, Ադամ,- և Լիլիթ քնքշությամբ ձեռքը դրեց Ադամի ձեռքի վրա:

-Եթե հաճելի է քեզ, նագելիս, այսօր կգնամ և վաղը կբերեմ,- ասաց Ադամ ուրախացած. . .

-Գնա՛, Ադամ, հիմա իսկո՛ւյն գնա, ի՛նչ լավն ես Ադամս,- և ափի հակադարձ կողմով փափկությամբ շոյեց Ադամի ճակատը: (ԱԻ)

118. Որոշել նախադասությունների տեսակներն ըստ կազմության:

Ա. Նրանք գնացին:

Կտուրի վրա մնացինք Հազրոն և ես: Տուն գնաց և այն փոքրիկ տղան՝ նրա թոռը: Լուսնի տակ ես դիտում էի նրա կարմրավուն փողը: Նա ծանր էր և կարծես ձուլված էր ծանր մետաղից: Ես բռնում էի այդ փողը գիշերային գուլի դիմաց, և փողը մեղմ քամուց մետաղի ձայն էր հանում:

Իսկ Հազրոն պատմում էր, որ իր կյանքում ամենածանր հարվածը եղել է կնոջ մահը: Աղջիկն ամուսնացել է դաշտի գյուղում: Պապի մոտ հաճախ էր լինում այն փոքրիկ տղան՝ նրա առաջին թոռը:

. . . Երբեմն նա իջնում է լեռան գյուղից, վերցնում է չոր ցախ և կնոջ գերեզմանի վերևը կրակ վառում: Նա նստում է այնքան, մինչև հանգչում է կրակը, հետո տխուր նվագում է ծիրանի փողը, և այն երգերը, որ նվագում էր իրենց հեռու երկրում, որտեղ ինքը հովիվ էր, կինը՝ գյուղական աղջիկ, խաղում էր թռռների հետ և մենակ ճանապարհ ընկնում դեպի լեռը, դեպի լեռան գյուղի իր պարզ խրճիթը: (ԱԲ)

Բ. Գիշերից բավական անցել էր. առավոտյան աստղը ծագում էր արդեն, և արևելքի մեջ խավարն սկսում է լույսից բաժանվել:

Հագարացիների բանակը ընկղմված էր խոր քնո մեջ: Կրակները վաղուց հանգել և շարժումն ու շշուկը դադարել էին: Չէր լսվում նույնիսկ պահակների քայլատրոփը: Ըստ երևույթին, ոչ մի երկյուղ չունեին նրանք հայերից: Եվ ո՞վ պիտի համարձակվեր հազար մարդուց բաղկացած այդ բանակի հանգիստը վրդովել: Նույնիսկ Բեշիրի վրանի առաջ պահապաններն անուշ խոմփում էին, երազելով անշուշտ Գեղա ամրոցի առումը, բնակիչների կոտորածը և գեղեցիկ հայուհիների գերումը. . .

Հանկարծ հովտի մեջ որոտաց Մարգպետունու ձայնը.

-Հառա՛ջ, քաջերս, Աստված մեզ օգնական. . .

-Կեցցե թագավորը,- գոռացին ուխտի զինվորները և հարձակվեցան:

Բլուրների վրա և լեռնալանջերում ամբոխն սկսավ գոռալ: Արձագանքելով որոտաց հովտի մեջ, բանակի վրանները սկսան վառվել: (Մ)

Գ. Հայոց աշխարհում ժամանակի հաշվումն սկսվել է առաջին ամանորից: Սկզբում ժամանակները խառնափնթոր էին. տարիներով հրաշունչ էին լինում կամ սառնաշունչ: Մի հսկա ժամանակաշրջան էր պետք՝ մինչև եղանակը խելոքանար և գարունը, ամառը, աշունն ու ձմեռը պատշաճ հեռավորությամբ սկսեին հերթագայել միմյանց կսմթելով, բայց իրենց ուղեծրից դուրս չգալով: Հայկական բոլոր թվերը, բոլոր հաշվումները, բոլոր տոմարները սկիզբ են առել Ամանորի առաջին օրից, երբ Արեգակը ջերմացնում էր բնությունն ու մարդկանց: Այդ սկիզբը Արեգ ամսվա Արեգ օրն էր, այսինքն՝ գարնան գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ը: Այդ օրը հայերը միանգամից չեն գտել: Բնության մեջ ինչ չարաճճիություններ ասես, որ հայը չտեսավ, մինչ Արեգ օրվան հասնելը: Արեգակի անունով սկիզբը անվանեցին Արեգ կամ Արեգական, իսկ երբ կրկնվեց ամեն տարի, կոչվեց Ամանոր: (ՀԽ)

119. Ընդգծել միակազմ նախադասությունները:

Ա. . . . 15 թիվ: Ապրիլի 10 . . .

Ապրիլական արբշիռ բույրեր,
 Գարնանային ծաղկածլում.
 Կակաչների շքահանդես,-
 Եվ . . . ծաղկաբույր գիշերվա մեջ
 Հեռուներից մոտենալով
 Գաղտագողի-ծածուկ-անտես
 Խորշակը նույն,
 Որ շատ շուտով պիտի տաներ միլիոն հայեր
 Խորշակը նույն անցավ նաև
 Պոլսո բոլոր հայ թաղերով. . . .
 Ա՛խ, Բերայի Բանկալթի թաղ. . .
 Ա՛խ, Ղալաթիո եռատաճար եկեղեցի. . . . (ՊՍ)

Բ. Դալուկ դաշտեր, մերկ անտառ. . .
 -Մահացողի տխուր կյանք.
 Անձրև, քամի, սև կամար. . . .
 -Սրտակտուր հեկեկանք;
 Միգում շողաց մի ցուրտ լույս.
 -Օ, արդյոք կա՞ վերադարձ.-

Մահացողի անզոր հույս,
 Վհատ սրտի տխուր հարց. . .
 Անուժ սրտի ցուրտ կապար. . .
 Մահացողի տխուր կյանք.
 -Անմխիթա՛ր, անսպա՛ռ
 Վհատության հեկեկանք. . . (ՎՏ)

Գ. Ութսունմեկ թիվ: Վաղարշապատ: Էջմիածին:

Միրգ ու փոշի: Անխիղճ արև:
 Շողամրցում Մասիսների, Արագածի:
 Սրբագործված հին-հին քարեր:
 Եվ Մայր Արաքս: Եվ Մայր Տաճար:
 Տաճարի շուրջ՝ սուրբ-սուրբ վանքեր,
 Հնչող,

Շնչող,
Կանչող զանգեր . . .

Եվ ճեմարան՝ մտքի կաճառ:

Ճեմարանի բակում արձակ,
Որտեղ էլ որ աչք ես ածում՝
Ջարմանալի հավաքածու
Խոսվածքների, տարազների:
Ու բոլորի դեմքի վրա՝
Վա՛խ, սպասո՛ւմ, անքնություն,
Խոսուն հետքեր երազների: (ՊՍ)

- | | |
|---|---|
| Դ. Երդիկն ի վար երկնքի խաղ,
Առավոտ,
Լույսի հոտ է, մոր ծոցի հոտ,
Հացի հոտ:
Ջարթնած հովիտ, թրջված հովեր,
Բոքիկ ոտ:
Ցողի հոտ է, ծիծաղի հոտ,
Շողի հոտ:
Արևկող լանջ, մրկած կաճան,
Տապ ու տոթ:
Քարի հոտ է, օշինդրի հոտ,
Ուրցի հոտ: | Թախկած ձյուներ, և ծաղիկներ
Ձյունի մոտ:
Քամու հոտ է, բարձունքի հոտ,
Ամպի հոտ:
Ծմակն ի վար խոնավ խութեր,
Խոնարհ խոտ,
Մամուռի հոտ, սարսուռի հոտ,
Սունկի հոտ:
Ահռելի ձոր, մաշված առու,
Մրսած օդ,
Ցավի հոտ է, անձավի հոտ,
Մութի հոտ: (ՀՍ) |
|---|---|

120. Վերականգնել զեղջված անդամները:

Ա. Տասնմեկերորդ դարում մի քանի վանականներ որոշում են Աղստևի հովտում մի վանք կառուցել: Նրանք ոտի տակ են տալիս ձորահովտի գյուղերը, գտնում ամենաաշխատասեր հողվորին և նրան ասում.

-Ուզում ենք, որ դու ընտրես մեր վանքի տեղը, բայց այնպիսի բան պիտի անես, որ քո աշխատասիրությունը հավաստես, չորը կանաչ դառնա, որպեսզի մենք էլ մեր վանքի միջոցով մարդկանց հոգիների չորուտը աստվածահաճ բուրաստան դարձնենք:

Հողվորը վանականների հետ շրջագայում է ձորահովտում, մի տեղ կանգ առնում, գրպանից հանում մի ընկույզ և թաղում հողի մեջ:

Շատ չանցած հողվորի թաղած ընկույզի տեղում մի մատղաշ շիվ է բարձրանում, որը վանականներն անվանում են աղարծի կամ աղածրի: Այնուհետև վանականներն իրար ասում էին.

-Գնանք մեր աղածրին տեսնենք, գնանք աղարծին . . .

Հենց այդտեղ էլ սկսում են կառուցել վանքը, որ մատղաշ ընկուզենու անունով կոչվում է Աղարծի, ապա հ հնչյունի հավելումով դառնում Հաղարծին: (ՀԽ)

Բ. Ես թերթում եմ ուղեգրությունների իմ տետրը և նրա էջերի արանքում գտնում եմ սուսամբարի երկու տերև՝ չոր ու գորշ, ինչպես հանգած մոխիր: Կռանում եմ թղթի վրա, ռունգերս լայնանում են սուսամբարի հոտից ու դողալով թերթում եմ տետրը... Հետո պատից վերցնում եմ ծամի պես պիրկ մտրակը, և Յուլակը խելոք աչքերով նայում է ինձ, նայում է և հանդիմանում: Ինչո՞ւ էիր մտրակում: Մտրակը դառնում է սև օձ, որ զարկում էր ձիու ողորկ մարմնին:

Ես նորից թերթում եմ իմ տետրը, և սրտիս վրա իջնում է անդորր: Յուլակը կայտառ վրնջում է, խաղացնում ականջները: Անընդհատ բարձրանում ենք, անցնում առապար ու քարափ: Քրտնած ձին մոուօը կոխում է ջրերի սպիտակ փրփուրի մեջ և սանձերի երկաթների միջով ծծում սառցահամ ջուրը: Ինչքան վեր ենք բարձրանում, այնքան մոտ է արևը, և արևը խանձում է դեմք, զգեստ, ձեռք,- այնքան սառն են ջրերը, օդը ջինջ, և լսելի է ծաղիկների մեջ մոլորված մեղվի հանդարտ բզզոցը: (ԱԲ)

121. Կեդադրել գեղջված անդամով նախադասությունները:

1. Նախկին երջանիկ մարդուց այժմ մնացել էր կես կմախք, որի մարմնի ձախակողմը գոսացած էր, ականախոռոչները սևացել էին, և աչքերը պլշել: 2. Երկուսս էլ լուռ էինք, երկուսս էլ տխուր ու մտածկոտ: 3. Երեկ ամպ էր, էսօր պարզ արև: 4. Քեզ աչքալույս էին տալիս, ինձ բարի գալուստ: 5. Ասում են ուռին աղջիկ էր ինձ պես: 6. Ծառերը լցվել էին թարմությամբ, կոկոնները ուռել: 7. Գեղեցի՞կ էր արդյոք դժվար էր ասել: 8. Մեծը զարմանում էր փոքրի ագահության վրա, փոքրը մեծի աչքածակության: 9. Եվ կովը տարակուսած չէր հասկանում ինչո՞ւ համար է այս ամենը: 10. Աշոտ դային, որպես պատասխան, միայն գլուխը շարժեց, այդ նշանակում էր մի մտահոգվեք: 11. Այդ վիճաբանություններին ու կռիվներին կանայք մասնակցում էին վայերով և երեխաները լացուկոծով: 12. Չէ՞ որ ամբարտավան միլիոնատերը սկզբում եղել է ջրկիր, հետո դռնապան, հետո խոհարար, այնուհետև գինեվաճառ և այլն: 13. Բանն այն էր, որ քանի հարսը տանն էր, նրան թվում էր որդին ապահով է:

122. Ընդգծել ենթակաները, որոշել դրանց խոսքիմասային պարկանելությունը:

Ա. Աշխարհի դժվար բաներից մեկը ժամանակի հաշիվը պահելն է: Դե արի իմացիր, թե Հայաստանում երբ է պատրաստվել առաջին արորը, երբ է խոփն առաջին ակոսն արել և սկսվել երկրային խոպանի հերկումը:

Ասում են՝ արորի հնարողն ուրախությունից առաջին լծկանը ինքն է դարձել, հետո է լուծը դրել եզան վզին: Դա այն հայտնագործություններից էր, որով մարդկային կյանքը հարատև է դարձել: Ժամանակին բոլոր հաց ուտողները մի առանձին երկյուղածությամբ են տվել արորի անունը, հիմա հաց ուտողների թիվը հազարապատկվել է, բայց հազարից մեկն է հիշում արորը:

Ոչ ոք չի հաշվել, թե քանի հազարամյակ է անցել մինչև արորի հիման վրա գուֆան է ստեղծվել, մինչև արորը գուֆան է դարձել: Իսկ մեր հները պաշտել են արորը, նրա ծնունդը նշանավորել տոնակատարությամբ:

Գարնան վարն սկսելուց առաջ հողվորները հավաքվել են որևէ գեղեցիկ տափարակում, արորը տնկել հողի մեջ, զոհեր մատուցել աստվածներին և աղերսել, որ նրանք ամեն տեսակ աղետից ու արհավիրքից պաշտպանեն արորի քաշած ակոսները, մի սերմը հազար դարձնեն:

Բ. Հները խորհուրդ են տալիս՝ ուտելիք սնունդն ընդունել փոքր պատառներով: Դա հավերժական ճշմարտություն է բոլոր ժամանակների համար: Քիչ-քիչը մարմնի մեջ է մտնում և ամրապնդում նրա կենսունակությունը, շատ-շատը լափին է տալիս ու դուրս գալիս մարմնից: Նախընտրելի է, որ մարդը ճաշի միայնակ: Դա պիտի շարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ մարդու միջից դուրս չի եկել ագահության հուշաբջիջը: Ընկերովի ճաշելը չի կարող բոլորեքյան սննդարար լինել: Դրան խանգարում է երկու պատճառ. առաջինն այն է, որ մարդուն թվում է, թե իր սեղանակիցը կարող է իրենից շատ ուտել, որի համար էլ շտապում է, մեծ-մեծ պատառներ անում և ջանում քիչ ծամել ու կուլ տալ: Երկրորդ պատճառն այսպիսին է: Քո սեղանակիցը կարող է լինել բարձրաստիճան մի մարդ, որից դու քաշվում ես, ձեռքդ երկյուղածությամբ ես մեկնում դեպի ուտելիքը, փոքրիկ պատառ ես անում, ծամում երկար: Այսպիսի պարագայում կերած թե չկերած՝ միևնույն է, փորդ բան չի մտնում: (ՀԽ)

123. Ընդգծել նախադասության գլխավոր անդամները և որոշել սպորոգյալների տեսակները:

Ա. Իռլանդիայի գերբի վրա նկարված է մի կարմիր ձեռք:

Երեք հազար տարի առաջ վիկինգների երկու առաջնորդներ՝ իրենց ջոկատներով, նավարկում էին դեպի Իռլանդիա: Նրանցից մեկը, որի անունը Հիրմոն Օ՛Նիլ էր, ասաց, որ Իռլանդիայի թագավոր կդառնա իրենցից նա, ում ձեռքը առաջինը կդիպչի իռլանդական հողին:

Վերջապես նրանք մոտեցան ծովեզերքին: Հիրմոն Օ՛Նիլի նավը մի փոքր ետ էր մրցակցից: Երբ նավերն արդեն բոլորովին մոտ էին ցամաքին, Օ՛Նիլը կտրեց իր ձեռքը, նետեց դեպի ցամաք: Նրա ձեռքը առաջինը դիպավ Իռլանդական հողին, և նա դարձավ Իռլանդիայի թագավորը:

Այսպես է պատմում հին ավանդությունը: Ահա թե ինչու Իռլանդիայի գերբի վրա ձեռք է նկարված:

Բ. Ավարայրի դաշտն ունի իր երկրորդ անունը՝ Շավարշական: Այս անունով է կոչվել Ավարայրի ճակատամարտից համարյա հազար տարի առաջ: Շավարշը (օտարները նրան կոչել են Սաբարիս) հայոց Երվանդ Սակավակյաց թագավորի կրտսեր որդին է: Զրույցն ասում է, թե արքայազն Շավարշը եղել է բազմահմուտ

նժույգավար: Նա սիրում էր Արտազի դաշտում մրցասպարեզ դուրս գալ պարսիկ իշխանագունների հետ և հաղթել:

-Զէ, այս մրցարանը միայն Շավարշին է ժպտում,- ասում էին մյուս նժույգավարները,- սա Շավարշական մրցավայր է:

Այսպես Շավարշական մրցավայր, Շավարշական մրցավայր ասելով՝ դաշտը կոչվեց Շավարշական մրցավայր: Հետո բառից սղվեցին երկու շ հնչյունները և մնաց միայն Ավարայրը: (ՀԽ)

124. Որոշել նախադասության գլխավոր անդամների խոսքիմասային պարկանելությունը:

Ա. Գարուն էր:

Մեկը այն անհամար գարուններից, որ զարդարել են երկիրը, և որոնցից հարյուր հատ ապրեց երջանկության և տխրության բանաստեղծը՝ Սաադին:

Առավոտ շատ վաղ զարթնեց Սաադին, իջավ պարտեզը, որ ծաղկում է Ռոքանաբադ գետի ափին: Նորից լսելու համար բլբուլների երգը և նորից տեսնելու համար գարնան հրաշքը. . . .

Երկնքի երփնավառ պարտեզների միջից դուրս բխեց արեգակը, և հուրհրացին ամեն թերթ ու փերթ, ամեն քար ու գուղձ, որովհետև գիշերը ադամանդի փոշի էր շաղ տվել բոլոր նրանց վրա:

Սաադին նայեց շուրջը խորունկ ու հետաքրքիր հայացքով. նայեց երկնքի կապույտ վրանին՝ արշալույսի մեջ թաթախուն, ոսկու մեջ ճախրող թռչուններով:

Նայեց այնպես զարմացած ու սքանչացած:

-Այո՛, հրաշք է աշխարհը, հեքիաթ է, գեղեցիկ և անհուն զարմանալի: (ԱԻ)

Բ. Ի՛նչ հրաշալի ու գրավիչ է բառերի կյանքը: Եվ որքա՛ն տարբեր է մեր կյանքից ու շատ ավելի գեղեցիկ: Մենք ծնվում ենք՝ չիմանալով, թե ինչու, մեր ըղձանքները չնչին են և մարդկանց մեծ մասը մեռնում է՝ այնպես էլ չհասկանալով սեփական գոյության իմաստը: Բառերի կյանքը բնավ այդպես չէ:

Բառերն աշխարհ չեն գալիս, եթե դրանց կարիքը չկա: Նրանք ծնվում են անսպասելի, և բոլորն իսկույն նկատում են, որ այդ բառերը եղել են միանգամայն անհրաժեշտ, և հարց են տալիս իրենց. ինչպե՞ս է եղել, որ դիմացել են առանց այդ բառերի:

Բայց եթե պատահաբար ծնվում է մի բառ, որի կարիքը մեծ չէր, դրա հետ մի երկու օր վարվում են որևէ կերպ, հետո դրան տալիս են մի ուրիշ նշանակություն: Եվ բառն իսկույն ևեթ դուրս է գալիս մոդայից, նրա մասին այլևս չեն մտածում, և նա շատ հասարակ կերպով անհետանում է առանց տառապանքի և զղջումի. . .

Բառերն ապրում են չափազանց երկար, եթե, իհարկե, նրանց կյանքը համեմատենք մարդկային կյանքի հետ: Նրանք ծերանալուց չէ, որ մեռնում են՝ ահա թե ինչն է հիանալի: Նրանք մեռնում են մոռացության մատնվելու հետևանքով և անհետանում են գործածությունից դուրս գալու համեմատ:

Սա՛շա Գիպրիի (Ֆր. դերասան և թատերագետ)

125. Որոշել սպորոգյալների տեսակները:

Ա. Արդյոք մի բան հասկանում եք Հայից... Որքա՞ն տարօրինակ, հանելուկային արարած: Որքա՞ն խաբուսիկ: Երևույթը, ո՛չ ինքը: Բայց և ի՞նչ է ինքը, իր նկարագիրը: Չո՛ւտ աշխատանք. որոնում ես իր ինքնությունը, բայց և իսկույն տեսնում ես, որ դա էլ նորից երևույթ էր: Անհանգիստ դեմք ունի, չի թողնում նկարես: Իր ցեղային պատկերն էլ տարօրինակ է: Թվով գրեթե ամենափոքրն է, տառապանքով՝ ամենամեծը, ժամանակով ամենահինն է, վիճակով ամենից անփոփոխը: Ամենից աննպաստ իր երկրի դիրքն է, ինքը ամենից համառ կառչեց նրան: Որքա՞ն անհույս է թվում իր ապագան, բայց և որքան հուսացող է նա: Ասենք իր կյանքում երկու բան բնավ չտեսավ. մեկ՝ բախտ, մեկ էլ հուսահատություն: Ինչպե՞ս ճանաչես նրան, ինչպե՞ս չափես: Իր չափը չափազանցն է, զարմանալի՜ հավասարակշռություն, որ ծայրահեղության մեջ է: (ԴԴ)

Բ. Ազգերի զորությունը ընտանիքների մեջ է. զորավոր է ա՛յն ազգը, որ ունի զորավոր ընտանիքներ, սիրով, միությանմբ, առաքինի և հավատարիմ կենակցությամբ ապրող ընտանիքներ: Այն գեղեցիկ խրճիթները, այն աննշան տնակները, որոնց մեջ ապրում են ցնցոտիներով ծածկված մանկտիք և որոնց շատ անգամ արհամարհում են մեծամեծ իշխանները, նույնիսկ դրանք են, որ ամփոփում են իրենց մեջ հայրենիքի ուժը: Ով որ կամենում է զորավոր տեսնել յուր ազգը և հաղթող՝ հայրենիքը, նա ամենից առաջ ընտանիքներ պիտի խնամե... Ինչպես որ չի կարող ապրել այն տունկը, որի արմատները չորացած են կամ որդնակեր, այնպես և չի մնա այն ազգը, որի ընտանիքներում տիրում է ապականություն, որոնցից հալածական է սերը, միությունը, առաքինությունը, մանավանդ Աստծո երկյուղը: (Մ)

- Գ.** Անդարձ է կորել սրտիս խնդումը,
Թունոտ մի մեզ է իջել հոգում իմ.
Մտածումներըս թախիժ ու թույն են,
Գալիքս սև է, որպես խոկումն իմ:
Աշխարհը անգութ և ահավոր է,
Եվ ի՞նչ է սերը- անզոր մանուկ մի.
Չարն է հաղթողը, չարն է հզորը,
Թախիժն անզոր է, և սերն անօգ է...
Մեր կյանքը դառն է, մեր օրը մութ է,
Անզոր են, զուր են վեճն ու կասկածը.
Բոլորը ծաղր է, բոլորը սուտ է,
Չարն է, որ տեր է, չարն ինքն աստված է: (ՎՏ)

126. Դուրս գրել որոշիչները և որոշել դրանց խոսքիմասային պարկանելությունը:

Ա. Դա քաղաքում հայտնի զվարճամուլ Գրիգոր Հաբեթյանն էր, որին համառոտ կոչում էին «Գրիշա»: Կարմիր, մսալի երեսով, հաստ շրթունքներով, վառվուռն սև

աչքերով մի երիտասարդ էր, որ սիրում էր աղմկալի քեֆեր, կոտրտել, ջարդել, սրա ու նրա վրա շշեր շարտել, թուղթ խաղալ, շամպայնը խմել շշից, գիշերները փողոցներում թառ ու դուդուկ ածել տալ, ոստիկանների հետ կռվել, հետո նրանց կաշառել: Նրա մի կողմում նստած էր նիհար, դալուկ դեմքով Մելքոն Ավրումյանը, քսանուվեց տարեկան մի հանքատեր, որի աչքերի մեջ փայլում էին կիրքն ու այն սոսկալի ախտը, որ նրան դարձրել էր կմախք: Մի կողմում նստած էր քնահարբ դեմքով, թմրած աչքերով Մովսես Բաբախանյանը, որի ուղեղն ու զգացմունքները բացառապես թղթախաղին էին նվիրված: (ԱՇ)

Բ. Հինավուրց ամրոցը, որ յուր հինգ եկեղեցիներով բազմաթիվ շինություններով ու պահականոցներով հանգչում էր միապաղաղ ժայռերից ու ամբարտակներից զանգված բարձրության վրա, պատսպարված էր ամեն կողմից թե բնության և թե արհեստի ամրություններով: Հյուսիսային կողմից պաշտպանում էին նրան, բացի կիսաբոլոր պարիսպներն ու աշտարակները, այլև Գեղարդասարի այն գահավանդակները, որոնք աստիճանաբար բարձրանալով՝ կցվում էին Գեղա լեռան հետ: Արևելյան և արևմտյան կողմերից շրջապատում էին հսկայական պարիսպներ և հզոր աշտարակներ, որոնք շինված էին կոփված ու հղկված խանձաքար ժայռերից և ամրացած կապարով ու երկաթով: Իսկ հարավային և մասամբ արևելյան կողմից բարձրանում էին միակտուր քարաժայռերի բնական պատնեշներ, որոնք խորաձորի միջից հսկայական բուրգերի նման դեպի վեր ձգվելով, ընդգրկում էին ամրոցի այս շրջապատը և այդպիսով դարձնում նրան ահարկու և անմատչելի:

Հարավարևելյան այս բարձրության վրա, ամրոցի գրեթե ծայրին, իբրև զույգ օդաչու հսկաներ, կանգնած էին առաջին՝ արքունական դղյակը՝ յուր մռայլ շինություններով ու ատամնավոր աշտարակներով, և երկրորդ՝ Տրդատա հոյակապ հովանոցը՝ քսանչորս հոնիական բարձրաբուն սյուներով, տակավին անեղծ արձաններով և բարձր ու քանդակազարդ ձեղունով, որ հովանավորում էր արքայական դաստակերտի հռովմեական արհեստի ստեղծագործած ուրիշ բազմաթիվ զարդարանքները: Նրա սյունազարդ և ընդարձակ սրահից երևում էին, ինչպես ափի մեջ, թե՛ ամրոցը յուր բնակարաններով և թե՛ շրջակա լեռներն ու ձորերը իրենց գեղեցիկ կամ անհեթեթ տեսարաններով. . . . (Մ)

127. Կեդրադրել տրոհվող որոշիչները:

1. Անիվի վրա հայտնվեց լիտվացի բարալիկ մի տղա դեղին հոնքերով և ավելի դեղին բեղերով: 2. Գթության քույրերը սփրթնած, նիհարած, հազիվ կարողանում էին կանգնել իրենց ոտքերի վրա: 3. Կաթողիկոսին շրջապատող եպիսկոպոսները բարձրահասակ, պնդակազմ, հաստ հոնքերի և երկար մորուքների մեջ սեղմված դեմքերով, բռնել էին նրա թևերից: 4. Շոգեմեքենան պատահական վառելանյութով լցված, քիմիական գործարանի ծխնելույզի նման կրակի և ծխի առատ և թունավոր քուլաներ էր դուրս փսխում: 5. Այստեղ ամեն ինչ նույնն է, ինչ որ մյուս գյուղերում՝ մի փոքրիկ տխուր եկեղեցի քարերը մամուռով ծածկված, փայտե չորս ոտի վրա կանգնած բարձր զանգակատուն զանգերի թելերը սյուներից մեկին կապած. . . .: 6.

Պատի ժամացույցի լեզվակը հարատև շարժուն, հնչեցնում էր մութ սենյակի լռության մեջ իր չափաբերական զարկերը: 7. Կարծես առաջին անգամ եմ տեսնում աշխարհը առօրյա և միշտ հիասքանչ, աշխարհը հնօրյա և միշտ նորաստեղծ: 8. Թարեքներին շարված էին օղու շեր զանազան ձևի ու չափի: 9. Նախարարները մոայլված ու սաստված չխոսեցին: 10. Կանաչագարդ դաշտավայրը ցողված վաղորդյան մարգարիտներով, վառվում էր ծիածանի ամենանուրբ գույներով:

128. Դուրս գրել հարկացուցիչները և որոշել դրանց խոսքիմասային պարկանելությունը:

Ա. Պղնձե հսկայական կաթսաների հնչյունները, շերեփների զրնգոցը, ծառայողների գոռում-գոչյունները, քաղցած խուժանի կառայունը, իրարու խառնվելով, ասիական բազարի տպավորություն էին գործում: Կոպտությունը, կեղտը, կերակուրների գոլորշին, ցնցոտիների հոտը նողկանք էին ներշնչում կուշտ և անտարբեր դիտողին: Մի կույր հայ փայտով անխնա հարվածում էր աջ ու ձախ՝ իր համար ճանապարհ բանալով դեպի այն կողմ, ուսկից կերակուրների հոտն էր գալիս: Մի պատանի պարսիկ, նրա փեշերից քաշելով, աշխատում էր ինքն առաջ ընկնել: Մի ռուս անդամալույծ սայթաքեց, ընկավ մի ասորի կնոջ վրա և կատաղությունից խաճնեց նրա գարշապարը: Մի կարմրերես լեզգի, որի թևերը մինչև արմունկները կտրած էին, հարձակվում էր սրա ու նրա վրա և ատամներով խլում մսի կտորները և գրեթե առանց ծամելու կուլ էր տալիս: Թափառաշրջիկ շների մի ոհմակ խառնվել էր մուրացկաններին և մոմռալով կրծոտում էր գետնին թափված ոսկորներն ու լակում կերակրի կեղտոտ հեղուկը. . . (ԱՇ)

Բ. Մեռյալ ծովը աշխարհի հրաշքներից է և երկրագնդի ամենացածր վայրն է համարվում: Ծովը գտնվում է համաշխարհային օվկիանոսի մակերևույթից 400 մ ցածրության վրա: Իջվածքը նման է խոր վերքի, որն առաջացել է երկրահարթակների բեկվածքում և աստիճանաբար սկսել է լցվել Հորդանան գետի ջրերով: Համաձայն ավանդույթի՝ այստեղ են գտնվել Սոդոմ և Գոմոր քաղաքները, որոնք ջնջվել են երկրի երեսից: Շնորհիվ բարձր ճնշման՝ օդի հագեցվածությունը թթվածնով 15 %-ով ավելի բարձր է, քան Միջերկրական ծովում: Մեռյալ ծովի ջուրը դառն է, ծանր և յուղոտ, դա է պատճառը, որ մարմինը դուրս է մղվում ծովի մակերևույթ: Ծովի ջուրը գերհագեցած է մագնիումով, բրոմով և յոդով, բարերար ազդեցություն է թողնում հողերի և նյարդային համակարգի վրա: Արևը գոլորշիացնում է ջուրը և ծովի վրա բարձրանում է աերոզոլի շերտ, իսկ եթե դրան հավելենք 400 մ օդային շերտը, ապա առաջանում է բնական զտիչ: Այստեղի արևի տակ անհնար է այրվածքներ ստանալը: Ծովի բուժիչ հատկությունները և բիտումային ցեխերը հայտնի են եղել դեռ շատ հին ժամանակներից: Էյն-Քոկկե լողափը աշխարհում միակ տեղն է, ուր յուրաքանչյուր մարդ կարող է զգալ իսկական անկշռելիություն:

Ըստ Ալբերտ Փարսադանյանի

129. Կեդրադրել տրոհվող հասկացուցիչները:

1. Աղջիկը ջուր էր լցնում հոր արևից ու անձրևից կոշտացած ձեռքերին: 2. Մի ծանր, հավիտենական հոտ կար նրա խանութում պանրի, թթուների, կեղտոտ փալասների: 3. Ծխում էին ու ծխախոտը խառնում բանակի հատուկ հոտին ձիու, կաշվի, մետաղի և քրտինքի: 4. Նա դեռ փայփայում էր զուր հույսեր, հույսեր զղջման ավսոսանքի և ապաշխարանքի: 5. Այդ խորհրդավոր լռության մեջ լսվում էր միայն ծղրիղի քաղցած մանկան լացի պես համառ ճոհնչը, որը գրգռում էր նրա առանց այն էլ հոգնածությունից նվաղած ջիղերը: 6. Դա ոչ թե ալիքների ներքևից լսվող մեղմօրոր շրշյունն էր, այլ լուկ անդորրված ծովի խաղաղ շնչառությունը: 7. Դեմքի արյունալի մարտերից մնացած սպիները առնականություն էին հաղորդում նրան: 8. Հեզ ու արծաթափայլ Արածանիի գարնանային հեղեղներից կատաղած ջրերը պղտոր հորձանքներով ծածկել էին ավերը: 9. Նրա արևից կիզված և հողմախսանձ դեմքը պղնձի գույն ուներ:

130. Որոշել բացահայտիչների տեսակները:

1. Կեսօրին մոտ եկան Վարպետը, Մարտիրոս Սարյանն իր տիկնոջ՝ Լուսիկի հետ: 2. Այդքան ճանապարհը ժողովուրդն անցավ ոտքով, առջևից դիակառքն էր. հիշում են դիակառքի վրա՝ Իսահակյանի ոտքերի տակ՝ դագաղի մոտ չոքած Լևոն Զորյանին՝ Ստեփան Զորյանի որդուն... 3. Նրանից քիչ հեռու երևում են կղզին շրջապատող լեռները՝ Գրգունն ու Նեմրուֆը, Անդոկն ու Ծովասարը: 4. Պատրիկյանը՝ իբրև պարապ մարդ և ձրի աշխատակից, խմբագրատան ամենօրյա այցելուն էր: 5. Այդ կինը Սեդան էր՝ թագուհու գորովագութ դայակը՝ դրյակում եղող կանանց մեջ ամենից բարին և ազնվասիրտը: 6. Սմբատը՝ որպես անտառոտ երկրի զավակ, շատ լավ գիտեր, որ արջը շշմում է հանկարծակի բարձր ձայնից: 7. Նարեկ գյուղից փոքր-ինչ հեռու՝ դժվարամատչելի ու բարձրաբերձ ժայռերի վրա՝ քարակոփ այրերից մեկի առջև, արձանացել էր սևասքեմ մի վանական՝ հայացքով դեպի ծովը: 8. Գարնանը՝ հեղեղների ժամանակ, գետակը վարարում է: 9. Ամրոցում մնացել էին երկու եղբոր որդիները միայն՝ Սամվելը՝ Վահանի որդին, և Մուշեղը՝ Վասակի որդին: 10. Ավելի ուշադրություն պիտի դարձնեին Մուշեղի՝ որպես հայոց սպարապետի ընտանիքի վրա:

131. Կեդրադրել բացահայտիչները:

1. Առաջին գրագիտությունը այբուբենը սովորեցրել է ինձ տատս: 2. Իսկ կինը Նոյեմը զբաղվում է այգով: 3. Հիվանդի մահճակալի մոտ նստած կինը Սոնան ճիգ էր անում խեղդել ներսում բարձրացող հուզմունքը: 4. Մեսրոպ Մաշտոցին իբրև հայոց գրերը ստեղծողի մեր ժողովուրդը շատ է պարտական: 5. Հաջորդ առավոտ արևածագից առաջ սկսվեց թշնամու կատաղի հարձակումը: 6. Ներքևում քարերի վրա այնքան շատ միրհավ կա...: 7. Վերևում ժայռերի գլխին անգամ մամուռներ կան: 8. Հեռվից լեռան գագաթից էր լսվում ձայնը: 9. Ամեն անգամ քույրը Ալվարդն

է օգնում նրան: 10. Վաղ առավոտյան արևածագին են ճանապարհել տղաներին: 11. Սիմոնը լսեց իր հարևանի Սաքու տղայի ձայնը: 12. Այդ դեպքը տեղի ունեցավ մի ցուրտ օր միջօրեին: 13. Աշնանային այդ օրը ճրագալույցին դեպի Հոռոմ տանող ճանապարհով սուրում էին մի խումբ հեծյալներ: 14. Հեռվում Աղթամարի կանաչափայլ ջրերի վրա երևաց մի լաստանավ: 15. Նրան որպես անառակ որդու թողնում են դրսում:

132. Դուրս գրել գոյականական անդամի լրացումները:

Սայաթ-Նովային վերագրվող քամանչան, երկարատև ողիսականից հետո՝ 30-ական թվականներին հանգրվանել է Հայաստանի պատմության պետական թանգարանում: Բավականաչափ լավ պահպանված երաժշտական այդ հնագույն գործիքը, որ զարդարված է սադաֆով, նրբագույն նախշերով, արվեստի իսկական գործ է և չի կարող պատկանել շարքային մի աշուղի կամ սազանդարի: Վրաց բանաստեղծ Գիորգի Լեոնիձեն հիշում է այսպիսի մի փաստ. Սայաթ-Նովայի ժամանակակից վրացի աբեղա Իոնե Խելաշվիլին էջմիածնից վերադառնալիս Հաղպատի վանքում հյուրընկալվում է տարեց վանականի՝ արդեն վաթսունն անց Սայաթ-Նովայի մոտ և երկար զրույցից հետո խորհուրդ է տալիս նրան հրաժարվել աշխարհիկ երգերից: «Իմ վանահայրն էլ է խորհուրդ տվել հրաժարվել աշխարհիկ երգերից և սազից (քամանչայից),- պատասխանում է ծեր բանաստեղծը,-բայց ես հետևյալ պայմանը դրի. քանի դեռ այս լարերը չեն կտրվել, ես նրանցից ձեռք քաշողը չեմ, որովհետև ինձ աբեղա ձեռնադրելու ժամանակ այս լարերը գրպանումս էին մնացել և ինձ հետ միասին օրհնվել են, ուստի ես նվագում եմ օրհնված լարերով...»:

Լսելով Աղա Մահմադ խանի՝ Թիֆլիսի վրա արշավելու լուրը, Սայաթ-Նովան իր ընտանիքն ուղարկում է Մոզդոկ: Նրա ավագ որդի Մելիքսեթը իր հետ տանում է հոր «դավթարն» ու քամանչան: Հետագա տարիներին ժառանգների ձեռքից ձեռք անցնելով, վերջապես հանձնվում է Հայաստանի պատմության թանգարանին, ուր մինչև օրս էլ պահվում է:

Ըստ Ալբերտ Փարսադանյանի

133. Դուրս գրել բայական անդամի լրացումները և որոշել դրանց տեսակները:

Ա. 1815 թ. Մոսկվայի կենտրոնի Հայկական նրբանցքում բացվեց մի կրթօջախ՝ Լազարյան ճեմարանը, որը կառուցվել էր մեծահարուստ ազնվականներ, հայ ազգային-ազատագրական պայքարի երախտավորներ Լազարյանների միջոցներով ու նախաձեռնությամբ:

Ստեղծված լինելով որպես հայագիտական կենտրոն, հայ իրականության համար մասնագետներ պատրաստելու նախնական նպատակով, ճեմարանը ամբողջ Ռուսաստանում շատ շուտով դարձավ ժամանակի միակ արևելագիտական կենտրոնը, որը պատրաստում էր արաբերենի, պարսկերենի, թուրքերենի մասնագետներ:

Ճեմարանը գոյություն ունեցավ մինչև 1917 թվականը, որից հետո վերածվեց Մոսկովյան արևելագիտության ինստիտուտի, ճեմարանի շենքում սկսեց գործել հայկական մշակույթի տուն: Այն գոյություն ունեցավ մինչև 1953 թվականը: Երբ շենքը նորից տրամադրվեց հայ ժողովրդին, մոտ 10 տարվա վերականգնման աշխատանքներից հետո Լազարյանների փառահեղ տեսք ստացած տունը նորից բացեց իր դռները: Այստեղ տեղավորված էին Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի մշտական ներկայացուցչությունն ու հայ-ռուսական բարեկամության թանգարանը:

Ըստ Ալբերտ Փարսադանյանի

Բ. Ծովի նման ափերիս մեջ
Գնում-գալիս եմ ես անվերջ,
Ծովի նման միշտ նույն տեղում՝
Կարոտից է ծովս դողում,-
Կատաղությամբ իմ անսահման,
Կուզեմ տեսնել հեռվում էլ ի՞նչ
Ծովեր կան մութ, ծովեր կան ցինջ,
Ի՞նչ են խորհում ծովերն հեռվի,
Բավ չէ՞ սիրտս դարեր վառվի,
Ի՞նչ են ուզում ափերն իմ ժեռ՝
Սրանք է՞լ են, միթե, անմեռ,
Որ անմեռ է վիշտս թվում,-
Ախ, տեղ բացեք ինձ էլ հեռվում,
Կուզեմ փշրել ծովի նման,
Ողջ ափերի ժեռն անսահման,
Կուզեմ անգամ Աստծուն բախվել,
Կամ ափերիս բանտում կախվել. . . (<Շ)

134. Դուրս գրել պարագաները և որոշել դրանց տեսակներն ու խոսքիմասային պատկանելությունը:

ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՑ ԽԱՉՔԱՐԸ

Գոշավանքի Սուրբ Լուսավորիչ եկեղեցու մուտքի աջակողմում շուրջ յոթ դար կանգուն է մի խաչքար՝ «Պաւղոս» ստորագրությամբ: Ո՞վ է «Պաւղոսը»: Անշուշտ մեկը մեր հանճարեղ վարպետներից, մի ճգնավոր, որ 2,5 մ բարձրությամբ և 2 մ լայնքով բազալտե ժայռաբեկորից հրաշք է կերտել՝ տարիների համբերատար, գերմարդկային աշխատանքով, առանց նյութական որևէ ակնկալության:

Խաչքարն ապշեցնում է վարպետի հանդգնությամբ. բազալտե հսկա ժայռաբեկորի մակերեսը ծածկել է մի այնպիսի նրբին, հյուսկեն ցանցով, որ ժայռն աննյութականացնելու պատրանք ստեղծի:

Այս խաչքարի հիմքում զետեղված բոլորակի կենտրոնի փոսորակը խորհրդանշում է ցորենի հասկի ծլարձակումը, իսկ բոլորածն զարդաքանդակը՝ հատիկից հառնած կենաց ծառը: Խաչի բունը պսակված է խաչքուռով: Ի՞նչ է խաչքուռը: Հայ երկրագործները սովորություն ունեին հունձքից հետո ցորենի հասկից պսակ (խաչքուռ) հյուսել, որը տանում, կախում էին իրենց տան սյուններից կամ զետեղում ճակատին որպես ընտանիքի բարօրության խորհրդանշան: Հեթանոսական շրջանի հայ երկրագործը պարտավոր էր երկրագործության հովանավոր Վանատուր աստծու «Ամենայն նորոց պտղոց» տուրքը մատուցել: Քրիստոնեությունն այս ծեսը ընդունել է խաչքուռ հյուսելու ձևով:

Խաչի թևերի վերադաս զարդերը ողկույզներ են՝ խաղողի, գինու խորհրդանիշը:

Այսքան պարզ ու վսեմ այս և այլ խորհրդանիշները մեր խաչքարակերտ վարպետները դարեդար դրոշմել են ժայռաբեկորներին, ստեղծելով մեր խաչքարային արվեստը, որը իր ինքնատիպությամբ եզակի է աշխարհում:

Ըստ Առաքել Պատրիկի

135. Գտնել բազմակի անդամները և որոշել դրանց շարահյուսական պաշտոնները:

Ա. Դարերի փորձություններով են անցել ու դիմացել մեսրոպյան նշանագրերը: Ունենալով կուռ կառուցվածք, հավասարակշռություն, ծավալների հրաշալի բաշխում, մեսրոպյան գրերը նպատակային և ինքնօրինակ լուծումներով իրենց ոսկյա բաժանումներն են գտել տառապատկերներում:

Լայն տարածում և ճանաչում ունեցող մեսրոպյան նշանագրերի մեծագույն առավելությունը պայմանավորված է նրանց տեսողական դյուրըմբռնելիությամբ և դյուրընկալությամբ:

Ուղղահայաց, թեք, հորիզոնական և կոր գծերն ունեն, այսպես ասած, սիմֆոնիկ լուծումներ՝ բանաստեղծական են, ճկուն ու սլացիկ, մոնումենտալ են, պիրկ և անդրդվելի:

Յուրաքանչյուր նիշ ունի իր դիմանկարը, իր ուրվագիծը: Տառերը բառի կամ նախադասության մեջ հաշտ համագործակից են և միասնական, իսկ ընդարձակ ամբողջական էջերում հաճելի տոն են ստեղծում և ընդհանրացնում մակերեսը:

Հետագա դարերի մեր գրիչները, ծաղկողները, վիմագրողները ստեղծելով իրենց անհատական ոճը, չեն հեռացել ու խորթացել մեսրոպյան գրերից: Նրանց ստեղծած ու մշակած գեղագիր թռչնատառերի, կենդանագրերի, որմնանկարների, զարդատառերի հիմքում անխախտ ընկած է մեսրոպյան հրաշալի տառերի նկարագիրը:

*Ըստ Կարապետ Տիրապուրյանի
(Հայաստանի ժողովրդական նկարիչ)*

Բ. Ես այսքան բարդ ու հասարակ,
 Ես այսքան բիրտ, այսքան բարակ,
 Ես այսքան հաշտ ու հակառակ,
 Այսքան անշարժ, այսքան արագ,
 Այսքան անփոյթ, այսքան հավաք,
 Առաքինի և անառակ,
 Եվ հորովել և պատարագ:
 Մի տեղ կրտսեր, մի տեղ ավագ
 Եվ ալեհեր և պատանի. . .
 Ով ինչ կուզի, թող գա տանի: (ՀՍ)

136. Կեդադրել դերբայական դարձվածները և որոշել դրանց շարահյուսական պաշտոնները:

1. Այս ամենը տեսնելով թագավորը ավելի ևս հուսահատվում և Կաքավաբերդից քաշվում է Սևան: 2. Թագավորը թեպետ ուներ կղզու մեջ հարյուրի չափ զինվոր, բոլորն էլ ընտիր, զինավարժ մարդիկ, բոլորն էլ քաջասիրտ և դիմագրավող, բայց նրանք էլ կղզում անգործ մնալով և արքայի նման հոգևոր պաշտամանց հաճախելով թուլացել թմրել էին արդեն և զենքերն ու զրահը մի կողմ ձգել: 3. Ակնոցի արանքից նրա ուսյալ աչքերը տեսնում էին զրահավորներին, մագաղաթյա մատենագրին եղեգնյա գրչով նրանց գովքը հորինելիս: 4. Հնձվորը միտք արեց, ուսը քորեց և դարձավ դեպի ձորը հնձելու կորեկի արտը: 5. Գուցե Բասուտա գետը ուրիշ գետի հետ խառնվելով հասնում է ծովին: 6. Այրի Ոսկեհատն ազատություն տվեց հեկեկանքին հարձակվելով ամուսնու սառչող դիակի վրա: 7. Սուվելով ու թառանչելով, որպես մի կենդանի, մի հրեշ, անցավ շոգեկառքը հետևից քարշելով նավթային վագոնների երկայն շարը: 8. Հագարացիք կարծելով թե շրջապատված են բազմաթիվ զորքերով սկսան իրար կոտորելով փախուստ տալ դեպի Վեդիի հովտաբերանը:

137. Որոշել դերբայական դարձվածի բաղադրիչ միավորների (կողմնակի անդամների) շարահյուսական պաշտոնները:

1. Մանկության հասակում, վերջացնելով յուր ուսումը Կեսարիայում և ծանոթանալով հույն և ասորի լեզուների հետ, հետո գնաց Կոստանդնուպոլիս: 2. Վերջապես վերադարձան նաժիշտները, բերելով իրենց հետ արծաթե սկուտեղի վրա ոսկե գավաթով զովացուցիչ օշարակ, որ պատրաստված էր մրգերի հուզից ու մեղրաջրից, այլև Արարատյան այգիների ընտիր պտուղներ: 3. Կանգնելով ևս մի երկու վայրկյան՝ նա դարձյալ լսեց նույն իշխանի վրեժի խոսքերը: 4. Հայր-Մարդպետին թվում էր, թե այդ Երեմիան ցուցամուլ է և ցուցադրում է իր գիտնականությունը՝ մոմատախտակը շարունակ ձեռքին բռնած: 5. Թեև զորքը այս վերջին օր ու գիշերը դեռ չէր հանդիպել թշնամու, բայց իշխանը շարունակ հետախույզներ ու դետեր էր ուղարկում առջևն ու շրջապատը դիտելու և ստույգ

լուրեր բերելու: 6. Իրար հետևից ասես մութի, մշուշի քողեր ու վարագույրներ էին պատռվում՝ երևան հանելով նորանոր տեսարաններ: 7. Եկան նրանք, եկան մեծահորձանք՝ ամբողջ դաշտի ծայրը բռնած, եկան ու հանկարծ սկսեցին բաժանվել կողմերի վրա: 8. Տեսնելով պարսից բանակի հետ եկող փղերի վաշտերը՝ կատակներն ու զրույցները լռեցին հայոց բանակում: 9. Երբ սպարապետը, համհարզների միջոցով գնդերին կարգադրություններ անելուց հետո մտավ վրանը՝ զրահները հագնելու, հայոց բանակում նկատեցին, որ պարսից կողմից երեք ծիավոր սրարշավ գալիս են դեպի գետը: 10. Սողում էին նրանք՝ աչքերն այդ ոտքերին սևեռած, և այդ ոտքերից զատ ուրիշ բան չէին տեսնում:

138. Որոշել փրոհված լրացումների շարահյուսական պաշտոնները:

Ականջը բլբուլների երգերին և սպիտակ գլուխը կարմիր վարդերի մեջ սուզած՝ ծծեց Սաադին հեշտության բույրերը, և բույրերով գինովի՝ աչքերը գոցեց.- և տեսավ աշխարհը իր հոգու մեջ, ինչպես երազի մեջ մի երազի:

Տեսավ Հնդու խաղաղության գետերը սրբազան լոտոսներով օծուն: Եվ Դելիի ոսկեդիպակ ապարանքների մեջ սիգաճեմ աղջիկներին տեսավ՝ գիշերագեղ վարսերի մեջ կարմիր նունուֆարներով:

Տեսավ նույնպես անապատը բոցակեզ, բեղվիների նժույգների վազքը սրարշավ առյուծների ետևից՝ արծիվների թևերի տակ:

...Սպիտակ շղարշները հովին ծփծփուն՝ ներս մտավ Նազիաթ՝ Սաադիի սիրած շիրագուհին:

Նազիաթ՝ վարդերի փունջը գրկին, մոտեցավ բանաստեղծին և վարդաբույր ձայնով ողջունեց:

...Եվ ապա Սաադին հոգու խորին հատակից նայեց մեկ՝ իր շուրջը բռնկած հեքիաթ-աշխարհին, մեկ՝ իր առջևը՝ լուսաժպտուն հրաշք-աղջկան, և զգաց տաք արցունքի մի կաթիլ իր հին սրտի մեջ, և բռնելով աղջկա փոքրիկ ձեռքը, համբուրեց ու դրեց լացող սրտի վրա՝ ասելով.

-Քո շուշան մատներով գրի՛ր «Գյուլիստան»-իս հետին էջի վրա իմ այս վերջին խոսքերը.

«Ծնվում եմք ակամա, ապրում եմք զարմացած, մեռնում եմք կարոտով...»:

(Ահ)

139. Կետադրել փրոհվող լրացումները:

1. Սիմոնը հանկարծ հասկացավ, որ Աղունը մտել է Սաքոյի տուն պարտքը առնելու: 2. Ժամանակն էր շարքերի առուները մաքրելու ծառերին ծաղկաջուր տալու համար: 3. Հակառակ մոր ցանկությանը նա մեկնեց հեռավոր շրջան աշխատելու: 4. Ամենքը ներշնչված այդ նվագով մռայլ հայացքները բարձրացրին դեպի Լակմեն և Հայանթին: 5. Սարերի ձյունը դեռ չէր հալվել ցուրտ եղանակի և արևը չտաքացնելու պատճառով: 6. Հասնելով բերդի ավերակներին մենք վայր իջանք ձիերից: 7. Ճգնում էր ամեն կերպ աննկատ մնալ հարևանուհու աղոթքը չխանգարելու համար:

8. Այնտեղ բլուրների արանքից կարկուտը փախս է ընկնում ջարդելու արտ ու լոր: 9. Չամբարը, նրա կողքին նստած, նայում էր պառավին, նայում էր հավերին և նորից ննջում արևի ախորժեղի տաքությունը վայելելով: 10. Դրսում վրնջում էր կեսգիշերային քամին ճոճոսացնելով լուսամուտի ապակիներին փոխարինող մագաղաթները:

140. Որոշել նախադասություններին ներդրված միավորները:

Ա. Նոյեմբերի մի ցուրտ գիշեր, երբ երեկոյան պաշտոնական աշխատանքս վերջացնելուց հետո, վերադարձա տուն և մտա ննջարանս՝ գրական գործովս պարապելու (ննջարանս միշտ տաք էր, որի պատճառով այդտեղ էի փոխադրել գրասեղանս), ականա կանգ առա զարմացած: Գրասեղանիս վրա վառվում էր լամպը: Մահճակալիս վրա երեսնիվեր պառկած էր մեկը և խոնփալով քնած էր: (ՆԴ)

Բ.Մի երկու հոդված եմ ուզում գրել (ռուսերեն) և հնար չի լինում-իսկի ժամանակ չկա, թեև շատ հարմար մոմենտ է, և սիրտս ուզում է գրել այդ վաղուց (հոդվածները ռուսների համար պիտի լինեն, իհարկե): Իվան Ֆադեյիչի վերջին «Հատվածը» (պոեմից) կարդացի: Ամբողջն անմշակ է (ինչպես և նախազգուշացրել է հեղինակը), մի քանի կտորներ ազդու են և լավ: Այդ մասին շատ երկար պետք է խոսել- նամակով գրելու բան չէ, համենյան դեպս Թումանյանի գրած ամեն մի տողը ինձ համար հետաքրքրող է և նշանակալից, թեև իբրև պոետ ես ինձ միանգամայն օտար եմ զգում նրան. . . . ես նրան երկրպագու եմ և սիրում եմ, բայց նրա աշխարհին իմ աշխարհը չէ (հուսով եմ սխալ չեք ըմբռնի – սրանով ես չեմ ուզում ժխտել նրա մեծությունն ու նշանակությունը. . . .): Ինչևէ, սա երկար բան է. . . .

. . . .Մտադիր ենք «Գարունը» լույս ընծայել: Բայց այժմ դա «Պանթեոնի» հրատարակությունը կլինի («Պանթեոնի» կազմը Ձեզ հայտնի՞ է. . . .): Ուզում ենք միայն ջահելների ուժերով հրատարակել, տեսնենք ի՞նչ դուրս կգա:

Վ. Տերյանի նամակը Ն. Թումանյանին

141. Դուրս գրել նախադասության անդամ չհանդիսացող բառերը և որոշել դրանց խոսքիմասային պատկանելությունը:

Ա. Մի ձգողական ուժ կար Բակունցի մեջ, որ քաշում էր դեպի իրեն: Բայց ինքը, հակառակ իր սիրալիր պահվածքին, մի խորհրդավոր անհաղորդություն էր կրում իր մեջ: Որքան էլ անկեղծանում էր.- իսկ նա երբեք սառը խոսակցություն չէր վարում,- զգում էիր, որ այնուամենայնիվ, հոգու շատ դռներ քո առջև փակ են մնում: Ես կարծում էի, թե ինձ մոտ է այդպես, բայց հետո նկատեցի, որ նույն տպավորության են իմ բոլոր հասակակիցները, ավելին. գրական ավագանին, գրողներից նրանք, որ նույն մտածելակերպն ունեն, ինչ նա, համախոհներ լինելով՝ հաճախ էին հանդիպում միմյանց: Նույնիսկ Չարենցը. . . գրական թևը, որին պատկանում էր Բակունցը, գլխավորում էր Չարենցը: Վերջինս գիտեր այդ: Բակունցն էլ գիտեր, ընդունում էր, որ այդպես էլ պետք է լինի և խոսում էր նրա

մասին, որպես գրական շարժման պարագլխի նույնիսկ այն ժամանակ, երբ գժտված էր բանաստեղծի հետ: Բայց նկատել էի մի բան. Չարենցը ծայրահեղորեն տրամադրության տեր մարդ, բորբոքուն ու անհավասարակշիռ, որ հաճախ հաշիվ չէր տալիս, թե իր հետ խոսողը կի՞ն է, տղամա՞րդ, բոլորովին այլ էր Բակունցի ներկայությամբ, քաշվում էր, զսպվում, նեղվում նույնիսկ: Եթե կարելի է ասել Բակունցը դյուրամատչելի չէր անգամ Չարենցի համար, ուր մնաց ինձ նման երիտասարդների, որոնց աչքին Չարենցը և Բակունցը գրական կուռքեր էին:

Ռուբեն Ջարյան

Բ. Անցյալը մոռանա՞մ. . . Երկնքի աստղերը կկողոպտեի՝ վարձատրելու համար այն մարդուն, որ կկարողանար մոռացնել տալ ինձ իմ անցյալը . . . որ յուր դեղերով կամ կախարդական հմայությամբ հնար գտներ իմ հիշողությունները բթացնելու: Մոռանա՞լ. . . Այո՛, այդ եմ կամենում, այդ է իմ միակ փափագն ու ցանկությունը: Օ՛, ինչպես երջանիկ կլինեի, եթե կարողանայի չհիշել այլևս այն, ինչ կատարվել է. . . Այն, որի հիշատակը բազմադարյան վիշապի պես կրծում, կեղեքում է իմ խիղճը. . . Կարո՞ղ եմ միթե մոռանալ, որ ես Սևադայի, իմ բարյացապաշտ աջակցի տունն ավերեցի՝ հորն ու որդուն միասին կուրացնելով. . . Կարո՞ղ եմ մոռանալ, որ ես Ամրամի, իմ հավատարիմ զինակցի տունը կործանեցի, նրա խաղաղության օթևանը դժոխքի փոխելով. . . Կարո՞ղ եմ մոռանալ, որ քո կյանքը թունավորեցի՝ կաթոգին սերդ անարգելով, երջանկությունդ կապտելով. . . Ասա՛, իմ սիրելի, սրանցից ո՞րը մոռանամ, կամ ինչպե՞ս չհիշեմ, որ այս ամենը կատարվել է մի հանցավոր սիրո, մի տմարդի օրինազանցության պատճառով. . . Ո՛չ, ես արժանի չեմ ներման. . . Ամենին կարելի է ներել, բացի նրան, ով կոչված է մարդկանց բախտը կառավարելու, որ պաշտոն ունի ժողովուրդ հովվելու, առաքինության օրինակ ու առաջնորդ հանդիսանալու. . . հասարակաց բարվոքն ու երջանկությունը հսկելու. . . (Ս)

142. Գտնել բարդ նախադասությունները և որոշել դրանց տեսակները:

ՕՔՍՖՈՐԴ

Օքսֆորդի համալսարանը անգլախոս աշխարհի ամենահին համալսարանն է և գոյություն ունի գրեթե 9 դար: Չնայած հիմնադրման կոնկրետ ամսաթիվ գոյություն չունի, սակայն ուսուցում եղել է 1096 թվականից: Այն արագորեն զարգացել է 1167-ից, երբ Հենրի Երկրորդ թագավորն անգլիացի ուսանողներին արգելեց հաճախել Փարիզի համալսարան: Ամբողջ աշխարհից ուսանողներ ու գիտնականներ են գալիս ուսուցման և հետազոտությունների միջազգային հեղինակություն վայելող այս կենտրոն: Ավելի քան 18 000 ուսանողներ ներկայացնում են 130-ից ավելի երկրներ: Օքսֆորդը կոլեգիալ համալսարան է, որտեղ 39 ինքնակառավարվող քոլեջներ դաշնային համակարգով միավորված են մեկ համալսարանի մեջ: Կան նաև 7, այսպես կոչված՝ մշտական մասնավոր բաժիններ՝ հիմնադրված տարբեր քրիստոնեական ուղղությունների կողմից: 1249-1264 թթ. հիմնադրված քոլեջներն

ամենահինն են: Դրանցից մոտ մեկ դար հետո Օքսֆորդն աննախադեպ հաջողությունների հասավ ուսուցման բոլոր ոլորտներում և արժանացավ կղերականների, ազնվականների և մտավորականների գովասանքին: Օքսֆորդը հայտնի է դիվանագիտական, միջազգային հարաբերությունների և իրավունքի ոլորտներում իր առաջատար դիրքով:

Տարբեր ժամանակներում Օքսֆորդում սովորած հայտնի մարդկանցից են գրող Օսկար Ուայլդը, Հյու Գրանտը, ԱՄՆ-ի նախագահ Բիլլ Բլինթոնը, Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլեյերը և այլք:

ՔԵՄՐՐԻՋ

1200 թվականից Քեմբրիջը առևտրական համայնք էր, որը նաև կոմսության քաղաք էր և ուներ մեծ հեղինակություն վայելող մեկ դպրոց: Այն ժամանակ՝ 1209 թվականին, որոշ գիտնականներ փախան Օքսֆորդ քաղաքի հանդեպ թշնամաբար տրամադրված բնակիչներից և բնակություն հաստատեցին Քեմբրիջում: 1226 թ. ուսանողների և դասախոսների բանակը բավական մեծ էր, և նրանք ստեղծեցին հատուկ կազմակերպություն, որը պարբերական դասընթացներ էր կազմակերպում: Հենց ամենասկզբից քաղաքի և ուսանողների միջև տարածայնություններ կային: 14-15 տարեկան ուսանողները հաճախ անհանգստություն էին պատճառում, մյուս կողմից քաղաքի բնակիչները վարձով սենյակների և սննդի համար շատ մեծ գումարներ էին գանձում: 1231 թ. Հենրի III թագավորը ուսանողներին և դասավանդողներին վերցրեց իր պաշտպանության տակ և կազմակերպեց նրանց բնակարանային հարցերը:

Իսահակ Նյուտոնից մինչև Սթիվեն Հոքինգ՝ Քեմբրիջի համալսարանը ձեռք է բերել չգերազանցված հեղինակություն: Այն հիմնականում մասնագիտացված է բնական և ճշգրիտ գիտությունների մեջ: Բավական է նշել միայն այն փաստը, որ ԴՆԹ-ն (մարդու գենետիկ կոդը) հայտնագործվել է Քեմբրիջի համալսարանում:

Համալսարանի հայտնի շրջանավարտներից են Օլիվեր Կրոմվելը, Չարլզ Դարվինը, Վլադիմիր Նաբոկովը, Ջավահարլալ Ներուն, արքայազն Չարլզը և այլք:

Ըստ Ալբերտ Փարսադանյանի

143. Որոշել բարդ համադասական նախադասությունների համազոր բաղադրիչների միջև առկա հարաբերությունները:

1. Վահրամ սեպուհի հրամանով նրանք դուրս եկան իսկույն իրենց խուցերից և սպառազինված շարվեցին կղզու ծառապատ տափարակի վրա: 2. Երկուսից մեկը. կա՛մ կհաղթանակեմ, կա՛մ թե իմ խմբով իսպառ կջնջվեմ: 3. Ոչ ոք մինչ այդ չէր լսել իշխանից որևէ ծանր խոսք կամ վիրավորանք. ի՞նչ էր պատահել այժմ. ինչո՞ւ այդ աստիճան վրդովվել էր նա: 4. Նա Տիրոջ սուրբ սեղանի վրա պատարագ էր մատուցում, բայց հարկը պահանջած ժամանակ թագավորների հետ բանակցություններ էր անում յուր հայրենիքի գործերի վերաբերյալ: 5. Դռան

ճակատը պատած էր սև պաստառներով, իսկ վերևում փողփողում էին երկու սև դրոշակներ: 6. Նստեցի իմ տեղը, նրա դիմաց, և ինքս ճնշված նրա արտասովոր հոգեկան վիճակի տպավորության տակ, սկզբում ոչինչ չկարողացա արտասանել և միայն ապշած դիտում էի նրան: 7. Հանկարծ նա ծոցից հանեց տետրը, թերթեց քարերի և քանդակների նկարները, թերթեց և քարե արծվի բույնը պարսպի գլխին ու սպիտակ թղթերի վրա մատիտի արագ շարժումով նկարեց կնոջը՝ օջախի մոտ նստած, աչքերը օջախի քարին: 8. Սակայն անհանգստությունը դրանից չնվազեց. ընդհակառակը, գնալով այն խորացավ: 9. Մերթ պատկերացնում էր նրան հայ գերիների բազմության մեջ՝ պարսից զինվորներով շրջապատված, կամ գերության ճանապարհին մենակ, արցունքն աչքերին ու բոկոտն:

144. Որոշել բարդ ստորադասական նախադասությունների բաղադրիչների արդահայրած հարաբերությունները:

1. Պապը գիտեր, լսել էր և այժմ էլ տեսնում էր, որ հայ նախարարների մեջ չկար ընդհանուր երկրի շահագրգռություն, մտավոր բարձր կրթություն, որ հասկանային երկրի, հայրենիքի ազատությունը: 2. Նրան թվում էր, թե ինքը լավ չի հասկանում այդ մարդու նպատակը, և չնայած նրան ասել, բացատրել էին, թե ինչի է ձգտում Մերուժանը, նրան այնուամենայնիվ թվում էր, թե տակավին կան բաներ, որ պարզ չեն: 3. Գիշեր էր, մեկն այն ականակիր ու մռայլ գիշերներից, երբ երկնքում ոչ մի աստղ չի երևում և մի քանի քայլի վրա գտնվող ծառերը թվում են դավադիրներ, երբ մարդ իր ճանապարհին շարունակ սպասում է փոսերի ու վտանգների: 4. Սևանի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրա ջուրը քաղցրահամ է: 5. Եթե ինձ հարցնեին, թե որն է Իսահակյանի բնավորության բնորոշ գիծը, ես կասեի՝ նախ անմիջականությունը, ապա զրուցասիրությունը, որն անշուշտ հետևանք էր առաջինի: 6. Զգում էր մարմնական թուլություն ու քաղց, որովհետև գիշերը լավ չէր քնել: 7. Կառքը կանգ առավ ճանապարհի բերանին, որովհետև նրա առաջը կապեցին մի երկայն ձողով: 8. Որքան նա ոգևորվում էր, որքան նրա ծրագրերը մեծանում էին, այնքան ինքը փոքրանում էր կառքի վրա, այնքան կույզ գալիս Միքայելի մոտ և նմանվում մի տզրուկի, որ պատրաստվում է ծծել իր հարևանի արյունը: 9. Սկզբում նրա կատաղի ցասումը, որ անշուշտ հետևանք էր իմ անզգույշ խոսքերի, և ապա այդ հուսահատ հեկեկանքը, որ համակեց ինձ անհուն կարեկցությամբ, այն աստիճան ազդել էին ինձ, որ ես կատարելապես սառել կարկամել էի՝ չիմանալով ինչ անեմ, ինչ ասեմ, որ ուղղեմ սխալմունքս և հանգստացնեմ նրան:

145. Կազմել տրված նախադասությունների գծապարկերները:

1. Վերջին խոսքերի հետ նրա՝ մինչ այդ անզուսպ ցասումով վառվող աչքերը հանկարծ լցվեցին անզորության առատ արտասուքներով, նա ընկավ աթոռի վրա, դեմքը ծածկեց ձեռքերով, և մի խելագար հեկեկանք սկսեց վեր ու վար նետել նրա մարմինը ջղային ուժգին ցնցմունքով: 2. Նրա զրույցները լսելիս ինձ միշտ թվում էր,

թե հայ ժողովուրդը իր դարավոր հոգևոր գանձերի շտեմարանի բանալիները և համով պատմելու շնորհը կտակել է նրան՝ իր ծոցից ելած արժանագույնին. և հայ ժողովրդի այդ իմաստուն, լայնահորիզոն ներկայացուցիչը հաստատորեն ու շռայլ գործադրում է իր ստացած ժառանգությունը: 3. Նրանք այնպես էին հարվածում, ինչպես իրենց անձնական թշնամուն, իրենց անձնական կեղեքիչին, իրենց չարաչար կյանքի պատճառ եղողին: 4. Աշնան առատությունը թափվում էր այգիներում ու ճանապարհներին, գնում էր ջրերի հետ, բայց այգիներում չկար այդ պահի սովորական կենդանությունը. չէին երևում այգեկույթ անողների աշխույժ խմբեր, չէր լսվում արևառ աղջիկների ու հարսների խաղողաքաղի զրնգուն երգը. չէին լսվում խաղողն այգիներից տան հնձանները կրող սայլերի ճռինչը և սայլապանների խրախուսական ու փառաքչական խոսքերը եզներին: 5. Երբ պալատի և միջնաբերդի լույսերն սկսեցին վառվել, և մութը պատեց քաղաքը, միջնաբերդից մի ձիավոր դուրս եկավ քաղաք և ձին քշեց դեպի այգիները: 6. Այդ մութն ավելի զգալի էր դարձնում մի նիհար լույս, որ երևում էր առանձնացած մի խցում. այդտեղից լսվում էր տարօրինակ մի ձայն, որը մերթ հիշեցնում էր փայտփորիկի թխկոց, մերթ երկանքի խուլ աղոց:

146. Ամբողջացնել տրված նախադասությունները՝ ավելացնելով երկրորդական նախադասություններ և որոշել դրանց արտահայտած հարաբերությունները:

1. Կարճ ժամանակ անց հայտնի դարձավ
2. Քաղաքում պտտվող լուրերն այն աստիճան հակասական էին
3. Եթե չհասցնեն ժամանակին կանխել աղետը
4. Նրա մտքինն այն է
5. Դրանք հենց այն մտքերն էին
6. Նա սիրում էր պատմել այն մասին
7. Նրան կարելի էր հանդիպել այդ սրճարանում
8. Տուն էր գնում միայն այն ժամանակ
9. Քաղաքը ջերմորեն էր ընդունում նրանց
10. Նա այնպես էր արտասանում
11. Փոքրիկին հատուկ էին ուղարկել գյուղ
12. Նոր միայն զգաց
13. Հպարտանում էր
14. Չէր համարձակվում նայել մոր աչքերին
15. Խոստացել էին
16. Սիրում էր լինել գետափին
17. Երդվել էր
18. Երբեմն մտածում էր
19. Շատ էր աշխատում
20. Իրենից շատ բան էր կախված

147. Բարդ նախադասությունները վերածել դերբայական դարձվածով պարզ նախադասությունների:

1. Դիլան դայու միտքն էլ տարուբեր էր լինում, ինչպես քամիների բերանն ընկած չոր տերև: 2. Եթե արևը չխոնարհվեր դեպի մայրամուտ, նա առանց հոգնության երկար կմնար այդ դիրքով: 3. Երբ ծանոթ արտին հասավ, հենվեց կայծքարով հրացանին, միտք արեց: 4. Նրանք և՛ ժպտում էին, և՛ ժպիտի հետ սրբում էին արցունքը, որ ծորում էր աղբյուրի պես: 5. Հերիք էր աչքն ընկներ մի դեմքի, տեսներ գեղեցիկ մի անկյուն, մամռապատ մի քար, որպեսզի թղթի վրա մատիտով նկարեր այն, ինչ տեսել էին նրա աչքերը: 6. Մոխրի մեջ խաղացող երեխաները տեսան, թե ինչպես շները հաչելով վազեցին ձիերի վրա: 7. Քանի անգամ է նա նստել հենց այն քարի վրա, որ տեղահան արեց ակնոցավորը: 8. Հենց որ աղաղակն ու հրդեհն սկսվեցին, թշնամին շփոթված պիտի փախչի: 9. Սուրը ժամանակ չտվեց նրանց իրագործելու այն մեծ նպատակները, որ ունեին իրենց հայրենիքի համար: 10. Րաֆֆին էր, որ արձակ գրականության գեղեցիկ լեզվի հիմքը դրեց: 11. Այն օրից, որ այդ լույսը բերեցին Հայաստան, անցել է համարյա մի դար: 13. Օդի մեջ բուրում էր ախորժեղի զովություն, որ ներշնչված էր ճոխ բուսականության մեղմ անուշահոտությամբ: 14. Ես շատ ուրախ եմ, որ ազատվեցի նրանցից: 15. Բարկությունը խեղդում էր նրան, երբ մտաբերում էր վաղեմի ժամանակները:

148. Դերբայական դարձվածով նախադասությունները փոխակերպել բարդ նախադասությունների:

1. Բերդի մուտքը նկարելիս մատիտը մի պահ ձեռքին մնաց: 2. Վերադառնալով յուր հայրենիքը՝ նա զինվորական պաշտոններ էր վարում: 3. Հոր անդրանիկը լինելով՝ նա փոխարինում էր և՛ տղայի, և՛ աղջկա: 4. Մտնելով քո հայրենի երկիրը՝ ես անցա կրակի և մոխիրների միջով: 5. Փակված լինելով հայրենական լեռների խլության մեջ՝ Աշխենը շատ փոքր տեղեկություններ ուներ դրսի աշխարհից: 6. Տեսնելով նրանց՝ Մերուժանը ամբողջ մարմնով դողաց: 7. Թեմական առաջնորդ Եփրեմ եպիսկոպոս Փիրվերոյանը նույն առավոտ էր եկել թեմի կենտրոնից՝ թաղմանը ներկա լինելու համար: 8. Ձեռքում բռնած ուներ մի մեծ գույնզգույն թաշկինակ՝ արծաթե դրամներով լի: 9. Հիշում էր մի քանի ամսից ի վեր յուր գործ դրած ջանքերը, անխոնջ աշխատությունները՝ բաժանված ու պառակտված ուժերը միացնելու, երկիրը՝ օտար բռնությունից, իսկ գահը կործանումից ազատելու համար: 10. Այդ տեսնելով՝ բլուրների վրա եղող մարդիկ որոտընդոստ աղաղակով ընկան փախչողների հետևից: 11. Սրբավայրը կառուցել են հավատացյալները՝ այդ բարձունքից առ աստված ուղղելու իրենց սրտաբուխ աղոթքները: 12. Ծառերի սաղարթների արանքից մեկ-մեկ երևում են մանր ու մեծ աստղեր՝ հանդարտ թարթող աչքերի նման: 13. Ծառերի հովանու ներքո բացված էր ընդարձակ սեղան՝

զարդարված կանաչով, երփներանգ ծաղիկներով: 14. Ճամփաներով հայ գեղջուկի սայլերն ու ձիերն էին անցնում՝ բարձված աշնան հազար ու մի բարիքներով: 15. Թագավորը հրամայեց հետևել իր շարժումներին և նշան տալուն պես նավերով առաջանալ դեպի թշնամին:

149. Կրավորական կառուցվածքի նախադասությունները փոխակերպել ներգործականի:

1. Քաղաքը հիմնադրվել է անգլիացիների կողմից 1840 թվականին: 2. Խաչի նշանը եկեղեցիների գմբեթներին հաստատվել է տյառնեղբայր Հակոբի շնորհիվ: 3. Նրա ամբողջ էությունը պաշարվել էր անհանգստացնող մտքերով: 4. Այգին ծածկվում է երփներանգ շղարշով: 5. Հնձանը մաքրվել էր քույրերիս կողմից: 6. Դեղնականաչ այգիներով շրջապատված էին ընդարձակ դաշտերը: 7. Երեկոյան բերդի ծանր դարպասները փակվում են պահակների կողմից: 8. Անձրևաջրի կաթիլներից հասկերի գլուխները թեքվել էին աջ ու ախյակ: 9. Միայնակ ծառի շուրջբոլորը ողողված էր արևով: 10. Մի տեղ երևում էր արևը, մի այլ տեղ լույսի շերտը կարկատանվում էր ստվերով: 11. Մարդիկ լսում էին նրան, և զվարթությամբ էին լցվում նրանց հոգիները: 12. Ամբողջ օրը մոլեգնող ձյունամորրիկից լցվել էին ճանապարհները: 13. Մթնշաղի նուրբ շողերով ողողվում էին ոսկեզօծված խոտերը: 14. Թափքերը պոնկեպոունկ լցված էին հողով ու քարով: 15. Հուլիսյան բարկ արևից անխնայորեն այրվում էր ալեծուփ դաշտավայրը:

150. Ներգործական կառուցվածքի նախադասությունները փոխակերպել կրավորականի:

1. Արդյո՞ք նախարարներն ընդունել են զրադաշտական կրոնը: 2. Աշնանային դժգոյն արևը ողողել էր սենյակս: 3. Թուրքերը կտրատել էին կիսահաս խաղողի որթերը ու բարձել ձիերին: 4. Ամպի պես ծուխը փակում է նրանց ուղին: 5. Աղջկա մեղմահնչյուն ձայնը պոնկեպոունկ լցրեց այգին: 6. Թրթռացող շողը մի քանի վայրկյան լուսավորեց կիսախավարը: 7. Հեղեղը տափակացրել, հարթեցրել էր բարձրահասակ եղեգները: 8. Եկեղեցու զանգերը հանդարտ, հանդիսավոր ընդհատումներով ավետում են վաղվա տոնը: 9. Թվում էր՝ սևաթույր մրրկաթուխալը ճգմելու էր օվկիանոսը: 10. Արևի կլոր սկավառակը շռայլորեն լուսավորում էր վեհապանձ տաճարներն ու հուշարձանները: 11. Երկրի լավագույն բանաստեղծները ձոներ էին ներբողում հաղթողներին: 12. Թափվող ջուրը ողողեց Կոմիտասի դալուկ դեմքը, հնամաշ փարաջան ու ամբողջ մարմինը: 13. Սրտի խորքից դուրս ցայտող հնչյունները փշրեցին անգթությամբ բռնված սրտերը: 14. Դելֆիններն ու կետածկները փոքր ձկներին խլացնում են գերձայնային հնչյուններով: 14. Պլատինը հայտնագործել է իտալացի Ջուլիաս Սքալիգերը 1557 թվականին: 16. Առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը», տպագրել է Հակոբ Մեղապարտը 1512 թ.:

151. Կեդարդել տրված հարվածները և բացատրել մեջբերվող խոսքի կեդարդությունը:

Ա. Թագավորը զարմացավ՝ տեսնելով յուր առաջ Գևորգ Մարգալետունուն:

Դո՛ւ էլ քո թագավորի հետ ճգնելու եկար հարցրեց նա իշխանին ժպտալով:

Ո՛չ, տեր արքա... Եթե իմ զորքին թագավորն առաջնորդեր, ես քսան տարով կերհասարդանայի:

Քո զորքի՞ն, մի՞թե զորք ունիս ժողոված զարմանալով հարցրեց արքան:

Այո՛, մեծափա՛ն տեր:

Որտե՞ղ է գտնվում բանակդ:

Այստեղ, Սևանում:

Սևանո՞ւմ ավելի ևս զարմանալով հարցրեց թագավորը:

Թագուհին, որ ներկա էր իշխանի խոսակցությանը, ընդհատեց նրան:

Ես նայում էի իմ դիտանոցից, երբ քո լաստը մոտենում էր կղզուն, քեզ հետ միայն մի խմբակ կար, հազիվ քսան մարդուց բաղկացած, իսկ մնացածները ե՛րբ հասան այստեղ:

Իմ բանակը կազմված է հենց քսան մարդուց, ու ավելին ձեռք բերել չկարողացա պատասխանեց իշխանը:

Դու հիվա՞նդ ես, Մարգալետունի իշխան հարցրեց թագավորը՝ աչքերը նրա վրա սևեռելով:

Գուցե կասկածում ես, թե խելագարվա՞ծ եմ ժպտալով հարցրեց իշխանը:

Այո՛, ինձ այդպես է թվում հարեց թագավորը լրջությամբ: Ասում ես, որ քսան մարդուց է բաղկացած բանակդ, և միևնույն ժամանակ փափագում, որ քո թագավորն առաջնորդե նրան: Ծա՛ղր է այդ, թե երգիծանք... . . .

Քա՛վ լիցի, եթե համարձակվիմ այդչափ լրբանալ քո առաջ, տեր արքա... պատասխանեց իշխանը հուզվելով:

Ի՞նչ զորք է ուրեմն այն, որի անունից խոսում ես դու:

Հենց հիշածս քսան հոգիներն են: Նրանք են իմ զորքն ու բանակը կազմում: (Ս)

Բ. Հայրը ոտքի ելավ՝ դառնացած կերպով ասելով

Իզուր կանցնի թե՛ քո աղաչանքը և թե՛ քո խնդիրքը, Սամվել: Մերուժանը այն տեսակ մարդկանցից չէ, որ ամեն մի համբակի խոսքը լսե:

Արյունը կատաղի հորձանքով անցավ դեպի Սամվելի գլուխը:

Հա՛յր... Ձայն տվեց նա, և նրա խռովյալ աչքերը վառվեցան բարկության բոցով: Ե՛ս եմ այդ համբակը:

Այո՛, դու ես Սամվել: Ես չկարողացա հասկացնել քեզ ո՛չ իմ միտքը և ոչ իմ նպատակները, այժմ մնում է հարցնել քեզ. դու ո՞ր կուսակցությանն ես պատկանում:

Այն կուսակցությանը, որ հավատարիմ է մնացել հայրենի եկեղեցուն և սիրելի թագավորին:

Ուրեմն դու իմ որդին չես: Ով որ մեզ հակառակ է, մեզանից չէ: Մենք անխնա պատժել գիտենք այդպիսիին:

Եվ ո՛չ դու իմ հայրն ես:

Սամվել . . .

Ի՞նչ է, դավաճան . . .

Հայրը ձեռքը տարավ դեպի յուր սուրը: Բայց որդու սուրն արդեն մերկացած էր: Նա շողաց և կայծակի նման մխրճվեցավ հոր սրտի մեջ: Նա ընկավ՝ հառաչելով Հայրասպան . . . (Մ)

152. Ուղղակի խոսքը փոխակերպել անուղղակի:

1. -Այո՛, Մերուժա՛ն,- պատասխանեց վերևից մայրը դառնացած կերպով,- քո հայրենական տունը յուր դռները փակում է քո առջև, որովհետև դու քո սրտի դռները փակեցիր թե՛ Աստծո, թե՛ քո հայրենիքի և թե՛ քո խղճի առջև. . .

2. -Դուք արդեն բավական եք. ես հազարներ կջախջախեմ ձեզանով,- բացականչեց Գևորգ իշխանը և դիմելով Վահրամ սեպուհին՝ ասաց,- գնանք այժմ երդվելու:

3. -Ես Շապուհի վարմունքը թեև անազնիվ, բայց յուր պետության շահերի կետից շատ խելացի եմ համարում,- խոսեց Մեսրոպը:

4. -Իսկ իմ գործը կլինի,- ավելացրեց Մեսրոպը,- վերաստեղծել հայոց մոռացված տառերը և ազատել մեր հասարակությունը մեզ համար խորթ հույն, ասորի և պարսիկ դաբարությունից:

5. -Ես չեմ հարցնի, Սամվել, թե դու ի՞նչ պիտի անես,- ասաց նա վշտացած ձայնով,- բայց կասեմ, որ մոայլ մտքեր են թաքնված քո խոսքերի մեջ. . .

6. -Թագավորը մեզ կկախե, եթե համարձակվենք նրա հրամանին անարգելու,- ասացին նրանք և խնդրեցին՝ չստիպել իրենց անհնազանդ գտնվել արքայի առաջ:

7. -Ո՛չ, զավա՛կս, դու էլ պառկի՛ր և հանգստացի՛ր. զինվորը չպիտի զատվի յուր ընկերներից,- պատասխանեց իշխանը լրջությամբ:

8. «Գուցե իմ ձեռնարկությունը հաճելի չէ Աստծուն, գուցե բարկանում է, որ ես հանդուգն մտքեր եմ հղանում և խաղաղ քուն վայելող արարածերի վրա անակնկալ հարձակում եմ գործում. . .», - մտածում էր Մարզպետունի իշխանը:

9. «Իմ քաղաքացիները,- մտածում էր նա,- երես են դարձրել ինձանից. . . նրանք իմ վրա նայել անգամ չեն կամենում. . . նրանք ինձ մեռած են համարում, այո՛, բարոյապես մեռած. . .»:

10. «Ինչ էլ որ պատահելու լինի, փո՛ւյթ չէ:,- մտածեց նա խորին սրտմտությամբ և վճռեց առաջ գնալ:

153. Անուղղակի խոսքը փոխակերպել ուղղակի:

1. Ստեփան Ջորյանը գրում է, որ Թումանյանին հիշելիս ամենից առաջ պատկերանում է իրեն նրա ժպիտը, այն ճառագայթող ժպիտը, որ մշտապես լուսավորում էր մեծ պոետի խորապես իմացական դեմքը, թիկնոցն ուսերին բուկինիստական խանութները շրջելիս, թե փութկոտ քայլերով այս կամ այն հիմնարկը գնալիս:

2. Մի առիթով Իսահակյանն ասել է, որ հին երգերի մեջ տեսնում է իր մանկությունը, երիտասարդությունը, իր լավ օրերը, սերը: Իր առաջին ուսուցիչը եղել է ժողովուրդը, ժողովրդի երգը, երբ դեռ ծանոթ չէր ոչ մի գրականության:

3. Բակունցը խոստովանում է, որ գրելուց առաջ կարդում է կլասիկներին, այն էլ ընտրովի: Մի քանիսը կան, միշտ ձեռն է առնում, երբեմն շատ է կարդում, երբեմն քիչ, բայց անպայման կարդում է:

4. Պավլո Տիչինյան գրում է, որ Զորյանը օժտված է արտակարգ տաղանդով, նա լայն դիպապազոնի գրող է... Իրեն բախտ է վիճակվել ուկրաիներեն թարգմանելու նրա պատմվածքները:

5. Իր ինքնակենսագրության մեջ Գուրգեն Մահարին գրում է, որ 1936 թվականի օգոստոսի 9-ի գիշերը իրեն ձերբակալեցին: Իրեն տարան «Ինտուրիստ» ռեստորանից: Վահրամ Փափազյանի և Հրաչյա Ներսիսյանի հետ կոնյակ էին խմում և ձմերուկով թարմացնում կոկորդները:

6. Կոստան Զարյանը խոստովանում է, որ ինքը չգիտի, թե ինչպիսի բանաստեղծ է կամ ինչ ուժի վիպասան, բայց մի դեր խաղացել է գրականության մեջ՝ միացրել է արևմտահայ և արևելահայ լեզուները:

7. Շիրազը գրում է, որ մեծ ու փոքր Մասիսներին է նայում ու մտածում, համոզվում, որ Աստծո ստեղծած յուրաքանչյուր մազն անգամ անգերազանցելի է, անհասանելի, անշրջելի:

8. Համո Սահյանը խոստովանել է, որ ինչ գրել է, բոլորն էլ իր զավակներն են ու գալու են իր թաղմանը:

9. Պարույր Սևակը գրել է, որ տասնյակ տարիների իր մտատանջությունները իրեն բերել են այն եզրակացության, որ գրականության մեջ վերջին հաշվով կարևորը *ինչ*-ն է և ոչ թե *ինչպես*-ը:

10. Պ. Սևակը, խոսելով Կոմիտասի մասին, ասել է, որ իր գիտակցական ողջ կյանքում ինքը եղել է նրա հետ, եթե կարելի է ասել՝ նրա մեջ, ինչպես բջիջը մարմնում, և այդպես էլ կգնա մինչև վերջին օրը, որ «վախճան» է կոչվում:

154. Կեդրադրել տեքստերը:

Ա. Անտառը հուզված էր հուզված էր մեծապես հսկա կաղնիները բուռն շարժումով կռանում էին դեպի հացիները թեղին ու լորին վրդովված շնչում էին թփերն անգամ անճոռնի բաղեղներով գալարված ոտները ճահճի մեջ գաղջ հողի վրա պառկած անհանգիստ էին: Անսովոր մի դեպք էր տեղի ունենում այդ բազմադարյան ճահճային աշխարհում ուր ծառերը մինչ այդ աճում էին գոհ էին ոչնչի չէին ձգտում:

Բայց ահա մի օր ծառերից մի քանիսը պատռել էին ամեն պատատուկ և արմատները փոխանակ դեպի ձորն ի վար իջեցնելու սկսել էին դեպի լեռն ի վեր պարզել: Այդ անսովոր էր խիստ անբնական և անտառն ամբողջ իզուր չէր հուզվել:

Ինչ արհամարհել պապենական սովորությունը թողնել ճահիճն ու ձորերը դեպի լեռը մագլցել ինչի էր նման այդ:

Նոր ծառերը սակայն անվրդով գնում էին դեպի վեր արհամարհելով արգելքները պատռելով հողի կուրծքը:

Դարձեք խելահեղներ գոչում էին հները:

Կոչնչանան շնջում էին թփերը:

Իսկ նոր ծառերից հատկապես մեկը բարձրանում էր անհագ բարձրանում և բոլորն այդ աղմուկի վրա ժպտում ու զվարճանում էին

Դու կոչնչանաս կանչեցին ծառերը:

Բարձրության վրա:

Կայծակի զոհ կլինես:

Լեռների ծայրին:

Դու անոթի կմնաս ծարավ ու պապակված:

Բայց բարձր կլինեմ:

Ու բարձրանում էր անհագ բարձրանում: (ՎՓ)

Բ. Տոթ է Արարատյան դաշտում այնպիսի տոթ որ օդը ոսկեզօծ մշուշի նման թանձրացել է և նստել դաշտերի ու այգիների վրա: Շնչավորներից ով թև ունի թռել-գնացել է հով երկրներ, իսկ ով թև չունի երկրի ընդերքն է անցել: Օձերն անգամ սողալով բարձրացել են լեռները ամառանոց: Ուր չի հասել ջուրը հողը չորացել է կիզիչ արևից ճաք տվել: Արարատի դիմաց լերկ տափաստանի մի հովտում ծուռումուռ ուղտափշերն են ցցված մնացել իսկ այստեղ ու այնտեղ նվաղած օշինդրն է իր եթերայուղերը տալիս մթնոլորտին ու օդը լցնում անուշ բուրմունքով: Մեռելային լռություն է տիրում շեններից հեռու ընկած այդ տափաստանում ուր դեռ չի հասել Հրազդանի ջուրը նրա հետ էլ հզոր տեխնիկայով զինված մարդը: Եվ ահա կեսօրին հարավի արևը զենիթից կրակ է թափում երկրի վրա երբ երկնքում ամպի մի կտոր անգամ չկա հանկարծ դաշտի վրա կախված պղնձագույն ժայռերից գոռում-գոչյունով հեղեղ է թափվում ցած: Ճամփին հանդիպած հող ու քար փուշ ու տատասկ իր երախն առած այդ անակնկալ հեղեղը վիշապի նման մոնչալով գալարվելով մեջքը ուռցնելով լայնքին կտրում-անցնում է Արարատյան դաշտը և Արաքսի պարզ ջրերը պղտորելով վազում դեպի ծով: Որտեղից է ծնվում որտեղից է գալիս այդ հանելուկային հեղեղը երբ ահա երկու շաբաթ է երկնքից մի կաթիլ անձրև չի ընկել երբ Արարատի դիմացի սարերում մի բուռ ձյուն չկա խանձված ու ջրի կարոտ այդ վայրերում որտեղից այդ հրաշք հեղեղը: Ճամփորդը տարակուսած կանգ է առնում իր ճամփան անակնկալ կերպով կտրող հեղեղի տեսքից: Իսկ սա տեսիլքի նման գալիս-անցնում է և մի քանի րոպե հետո արդեն գոլորշի է բարձրանում նրա դատարկ հունից: (ՎԱ)

155. Տրված հատվածները ենթարկել շարահյուսական վերլուծության:

Ա. Գլածորի համալսարանը Միջնադարյան Հայաստանի նշանավոր ուսումնական կենտրոն էր Վայոց ձորի Աղբերանց վանքում: Այստեղ է տեղափոխվել 1282 թ. Տարոնի Առաքելոց վանքից: Կենտրոնը գլխավորում էր Ներսես Մշեցին:

Համալսարանն ունեցել է իր կանոնադրությունը, ուսումնագիտական աստիճանավորումը, կիրառել է ավարտաճառերի պաշտպանություն:

Համալսարանում դասավանդել են աստվածաբանություն, քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն, թվաբանություն, աստղաբաշխություն, տոմարագիտություն, երկրաչափություն: Ուսումնառության տևողությունը 7-8 տարի էր: Շրջանավարտները ստանում էին «Վարդապետական գավազան», որը նրանց տալիս էր «դասասաց» լինելու իրավունք: Աստիճանի շնորհումը տեղի էր ունենում հանդիսավոր արարողությամբ:

Համալսարանը հայկական ուսումնամշակութային կենտրոնների համար պատրաստել է մեծ թվով ուսուցչապետներ: Գլաձորի համալսարանը հովանավորել են Պոռշյան և Օրբելյան իշխանական տները, ինչպես նաև Սյունիքի եկեղեցական իշխանությունը:

Բ. 1936 թվականի հոկտեմբերին Վիլյամ Սարոյանն իմանալով, որ իր լավագույն բարեկամը՝ Ռուբեն Մամուլյանը, որը գործերով դեռևս ամռանը մեկնել էր Թիֆլիս և Երևան, վերադարձել է, այցելում է նրան՝ Հայաստանի մասին տեղեկություններ իմանալու նպատակով: Ահա այստեղ էլ՝ Ռուբեն Մամուլյանի հարկաբաժնում, Վ. Սարոյանը հանդիպում է Չարլի Չապլինին: Տեսնելով նրան՝ մի պահ կարկամում է և դռների արանքում որոշ ժամանակ կանգնած մնում: Ռ. Մամուլյանը, տեսնելով հայրենակցի շփոթմունքը, նրան ներս է հրավիրում և ծանոթացնում Չարլիի հետ:

Նյու Յորքի այն համեստ կացարանը, ուր բնակվում էր Չարլի Չապլինը, գտնվում էր Վ. Սարոյանի կացարանի հարևանությամբ: Ամեն երեկո, երբ Չարլին վերադառնում էր նկարահանումներից, տունդարձի ճանապարհին գրեթե միշտ հանդիպում էր Սարոյանին, որը սովորություն ուներ երեկոները մեն-մենակ շրջել փողոցներով, տեսնել հոգսաշատ մարդկանց, նրանց հոգսն ու ցավը հասկանալ:

Վ. Սարոյանը հաճախ էր Չապլինին պատմում իր երկրի, իր ժողովրդի մասին, և վերջինս ցանկություն էր հայտնել լինել այնտեղ, էլ ավելի մոտիկից ծանոթանալ հինավուրց այս երկրի և նրա մարդկանց հետ: Վ. Սարոյանը խոստացել էր նրան տանել իր երկիրը: «Կ'ուզէր երթայինք Բիթլիս,- մի առիթով վկայել է Սարոյանը,- ես շատ եմ լսել քեզմէ քո երկրի մասին, կ'ուզեմ տեսնել այն, երբ գործերնիս թեթևնա, անպատճառ պիտի երթանք, պիտի նկարեմ քու երկիրդ, որ միշտ քեզ հետ ըլլայ, աւա՛ղ, չկրցանք երթալ»:

156. Վերլուծել նախադասությունները:

1. Կաքավաբերդի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է՝ ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը ծիրանի գույն:
2. Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան:
3. Ներքևում, ուղղաձիգ ժայռերով շրջափակված քարախեղդ կիրճում, հոսում էր Ախուրյանը՝ իր միալար ու թախճալի խշոցով խախտելով կիրճի անդորրը:

4. Կիսատ թողեց գործը, հագավ իր սև, երկար վերարկուն, վերցրեց ձեռնափայտը և իջավ փողոց ու մտավ սրճարաններից մեկը, ուր հավաքվում էին պոլսահայ մտավորականները:
5. Արևածագին միայն կարծես երազի մեջ նա լսեց չորացած տերևների խարշափյուն և տեսավ վերջապես հրաշագեղ գազանին:
6. Երբ ծառերն աղմկում էին, նրանց սաղարթախիտ կատարներն իրարից հեռանալով՝ բաց էին անում երկնքի կապույտ շերտը:
7. Արտևանունքների միջից նա վեր էր նայում, ու նրան թվում էր՝ ծառերի բարձր ճյուղերը ճոճվում են ջինջ կապույտի մեջ:
8. Երբեմն պատահածը նրան երազ էր թվում, մեկն այն շողշողուն երազներից, որոնցով նա զարդարել էր իր աղքատ պատանեկությունը:
9. Թերևս կարող է պատահել, որ նրանք կգան իրենց աշխարհները, կկանգնեն իրենց զորագնդերի գլուխ և կսկսեն ազգամիջյան կռիվը իրար դեմ:
10. Կրակի բոցերը խառնիճաղանջ բարձրանում էին դեպի աստղերը, և նրանցից պոկվող վառվռուն կայծերը ընկնում էին աղբյուրի պաղպաջուն ջրերի վրա ու հանգչում:
11. Նա լսում էր անտուն, հալածական քամուն, որը հնչում էր զօր ու գիշեր հազարհազար մեղուշ ձայներով, որ հավաքել էր իր անկայան, անհատնում ճանապարհը անցնելիս:
12. Ձմեռնամուտ օրերից մեկն էր. մութը դեռ բոլորովին չէր պատել երկիրը. երկինքը պղտոր էր գարնան ջրի պես:
13. Գարնան արևկա օր էր. օդը մեղմորեն վետվետում էր հուռթի դաշտերում և գյուղի հողածածկ կտուրների վրա. զգացվում էր փթթող ծառերի և նոր կանաչի արբեցնող բույրը:
14. Տխուր ելևէջներով սկսեցին ղողանջել հինավուրց եկեղեցու զանգերը՝ մելամաղձոտ ու խորհրդավոր. ամբոխի հուզումը սաստկացավ ղողանջների հետ:
15. Նոր ծաղկած խնձորենու ստվերն ընկել էր առվի վրա և մեղմ օրորվում էր, որից նրա ալիքները մերթ մթնում էին, մերթ ոսկեզօծվում:
16. Միջօրեի տաք մշուշն իջնում էր ծառերի վրա, ու այգիների զիզագների մեջ մնում էր դեղին, թափանցիկ թրթիռը:
17. Պապը վայրկենաչափ լռեց, դեպի անորոշություն հառեց հայացքը, իսկ աչքերը կարծես ուզում էին խոնավանալ:
18. Ավելի վեր՝ ջրվեժի գլխին, աճել էր մի մենավոր ընկուզենի, որ ասես հապճեպ նկարված էր երկնի կապույտին:
19. Այժմ ձին, անընդհատ սայթաքելով, ոտքերը հազիվ էր փոխում քաղաքի՝ անձրևից լարձուն դարձած խորդուբորդ փողոցներով:
20. Այդ երգի անուշ ու մեղմասահ մեղեդին, որ ասես սրտի խորքից էր գալիս, նրան թվաց աղոթք ու ապաշխարանք:

ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

157. Տրված հարվածներից դուրս գրել մակդիրները և բացատրել դրանց կիրառությունը:

Ա. Ու մթի մեջ հազարամյա, գիշերի մեջ խորը, անհուն՝
Խոնվել են նրանք ահա երկաթուղու կայարանում:
Դաշտն է դեմը, խավարակուռ ձգված է նա:
Չկա մի ձայն, չկա քամի, մութ է հիմա:
Ու նստել է անաչք, անլույս խորհրդավոր կաճանը մութ,
Շնթոկել է, որպես մի շուն, ու խավարն է հսկում հիմի,-
Շնթոկել է թանձր մութում, որպես անտես մի թշնամի:
Մութ նստել է կասկածը հին ու աչքերով խավարամած
Նայում է նա կայարանին, որ կանգնած է իրա դիմաց:
Շարժվում է մութը կարծես ու խավարով իր աչքերի-
Նայում է նա լուրթ աչքերին խելագարված անթարթ լարված
Նայում են մութ հեռուներին ամբոխները խելագարված: (ԵՉ)

Բ. Ու վերադառնամ ես վերածնված,
Ոտքերիս վրա արահետներիդ
Ու հովիտներիդ ծաղկաբույր փոշին,
Եվ գլխիդ վրա նախապատմական
Մառախուղներիդ ծվենները տաք,
Եվ սրտիս վրա նոր մտերմության
Ակոսից ելած թավիշ գոլորշին,
Եվ շրթիս վրա պայթելու պատրաստ
Բողբոջները քո նախաստեղծ խոսքի,
Եվ ականջիս մեջ
Կիրճերիդ զով ու զեփյուռից պոկված
Հորովելի մի անուշ պատառիկ,
Եվ աչքերիս մեջ
Անվերձանելի մի երանության
Խոնավությունը ծիածանային. . . . (ՀՍ)

Գ. Սիրում եմ աչքերիդ տխրությունը խորին,
Անաղմուկ խոսքերիդ դաշնակները հիվանդ,
Կուսական ամոթխած փայփայանքդ, որ իմ
Սև օրերն է օրրում խնդությամբ հնազանդ:
Խոսքերդ կարկաչող, որպես նուրբ մի զգեստ,
Ստվերում են սրտիդ գաղտնիքները սիրուն,-
Քո հոգին չի սիրում մերկություն անհամեստ,-
Դու այնպես ես սիրում, կարծես թե չես սիրում:

Հեռավոր երկրի պես հմայող հոգիդ,
Անուշ են խոսքերըդ, ժրպիտներիդ աղջկա,-
Մանկական անպաճույճ երգի պես միամիտ,
Դյուֆական, որպես այն, որ չըկա, որ չըկա. . . (ՎՏ)

158. Ընդգծել համեմատությունները, բացատրել դրանց գործածությունը:

Ա. Երբ հանգչում են ապարանքի ջահերը,
Եվ արծաթյա կապարի պես լուսընկան
Փայփայում է ավազանի ջրերը,
Շշնջում է սյուզի նման էլ-Սաման:
Ականջն ի վար այնպես քնքուշ, հեզասահ,
Ինչպես լուսնի շողակաթը թավիշի
Այն հոյակապ սյուներն ի վար մարմարյա: (ԱԻ)

Բ. Կախարդական մի շղթա կա երկնքում՝
Աներևույթ՝ որպես ցավը խոր հոգու.
Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն,
Օղակելով լույս աստղերը մեկ-մեկու:
Մեղմ գիշերի գեղագանգուր երազում՝
Այն աստղերը, որպես մոմեր սրբազան,
Առկայծում են կարոտագին երազուն՝
Հավերժաբար իրար կապված ու բաժան:
Ես ու դու էլ շղթայված ենք իրարու,
Կարոտավառ երազում ենք միշտ իրար,
Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան ու հեռու,
Աստղերի պես և հարազատ և օտար. . . (ՎՏ)

Գ. Որպես լքված թավջութակի ձգված մի լար՝
Դողում է սիրտս կարոտով մի ահարկու.
Կարոտներիս գագաթն է այն՝ վերջին քնար.-
Մի պիրկ պարան ու երկնուղեշ փայտեր երկու:
Որպես բախտիս մութ քամահրանքը, կամ որպես
Մի հին խոստում, որ անկատար, դրժած թողի-
Կախաղանի փայտերն ահա քաղաքի մեջ
Կանգնել են, սեզ, ու սպասում են կախվողի:
Կանգնել են, լուռ, իրար կքած, փայտեր երկու,
Ու մեջտեղում դողում է, մեղկ ու երերուն,
Մի գորշ պարան, ինչպես տխուր այս օրերում
Անբոց մորմոքը նահրյան իմ ո՛րբ հոգու:
Իջել է շուրջը մի անհուր իրիկնաժամ,

Ու լռություն մի անսովոր, անդուռ, անդող,
 Ինչպես մորմոքը օրերի, ինչպես դաժան
 Մահվան թախիծը՝ իմ անլուր սիրտը բանտող
 Երթամ մարող ու մարմրող իրիկվա մեջ,
 Որպես ուրու հալածական, որպես տեսիլ-
 Տա՛մ պարանոցս կարոտին այն երկնուղեջ
 Ու օրորվեմ եղերական ու անբասիր. . . (ԵՉ)

159. Ընդգծել փոխաբերությունները և բացատրել դրանց գործածությունը:

Ա. Մի վերջին անգամ

Վերևից եկավ կայծակ հեռագիր,
 «Ազդարարվում է օդային տագնապ . . .»
 Թողեց ու գնաց կռունկն՝ հյուսիսի
 Հավատարմագիրն առած կտուցին:
 Թիթեռը սրտի պայթյունից մեռավ:
 Ճնճուկը մտավ գազապաստարան:
 Իսկ սարը, սարը,
 Լուսաքողարկման օրենքին հլու,
 Իր փշաքաղված գագաթներն ի վար
 Իջեցրեց ամպի վարագույրը սև:
 Սուլելով տխուր և աններդաշնակ,
 Սարերից իջել, նույնիսկ տագնապած,
 Պուրակների մեջ հոգնած ծառերի
 Հանդերձանքներն է քամին քրքրում:
 Վաղ առավոտից,
 Առանց ընդմիջման և նախաճաշի,
 Պատուհանիս տակ անձրևը աշնան
 Առասպելներն է մեքենագրում: (ՊՍ)

Բ. Եվ քարավանը Աբու-Լալայի՝ աղբյուրի նման մեղմ կարկաչելով՝
 Քայլում էր հանգիստ, նիրհած գիշերով, հնչուն զանգերի անուշ ղողանջով:
 Հավասար քայլով չափում էր ճամփան այն քարավանը ոլոր ու մոլոր,
 Եվ ղողանջները ծորում քաղցրալուր՝ ողողում էին դաշտերը անդորր:
 Մեղկ փափկության մեջ Բաղդադն էր նիրհում ջենների շքեղ, վառ
 երազներով,
 Գյուլստաններում բլբուլն էր երգում գազելներն անուշ՝ սիրո արցունքով:
 Շատրվանները քրքջում էին պայծառ ծիծաղով ադամանդեղեն,
 Բույր ու համբույր են խնկարկում չորս կողմ խալիֆաների քյոշքից լուսեղեն:
 Գոհար աստղերի քարավանները թափառում էին երկնի ճամփեքով,
 Եվ ղողանջում էր ողջ երկինքն անհուն՝ աստղերի շքեղ, անշեջ դաշնակով:
 Մեխակի բույրով հովն էր շշնջում հեքիաթներն հազար ու մի գիշերվա,

Արմավն ու նոճին անուշ քնի մեջ օրորվում էին ճամփեքի վրա:
Եվ քարավանը՝ օրոր ու շորոր, զնգում էր առաջ ու ետ չէր նայում,
Անհայտ ուղին էր Աբու-Լալային բյուր հրապույրով կանչում, փայփայում:

(ԱԻ)

Գ. Մայր էր մտնում արևը՝ թեժ լույսով վառված:-
Ու երգելով կովում էին ամբոխները խելագարված:-
Դաշտն էր դեմը փռված էր նա շառագունված ու արևուն,-
Ու հեռում, ճամփի վրա հսկա քաղաքն է երևում:-
Ծո՛ւյլ նազանքով, իրիկնային արևի տակ անփույթ փռված
Պսպղում էր քաղաքը հին՝ հազարերանգ մի զանգըված:
Հեռո՛ւ, հեռո՛ւ, անձայր ու լայն, տարածվել էր քաղաքը հին-
Լողանում էր կարծես մարմանդ մշուշի մեջ իրիկնային:
Հաղթ շենքերը, բարձր ցցված, կարծես կախված կարմիր օդում
Հետզհետե մթնում էին, անգունանում ու աղոտում:
Հեռու հրով միայն վառված պատուհանները ապակի
Փայլում էին արյունամած վերջին հրին արեգակի.
Արևի դեմ փայլում էին հրաբոսոր
Բռնկվել էր նրանց սրտում տազնապը սուր. . .
Եվ երկնքի սիրտը մխված բևեռների պես արնաքամ
Փայլում էին արյունամած ծխնելույզներն հսկայական: (ԵՉ)

160. Պարկերավորման ո՞ր միջոցներն են գործածվել տրված հատվածներում:

Ա. Ծանր նստել է քարափը ձորում,
Հյուրընկալ տերը մանկության ձորի,
Ճակատից քարե քրտինք է ծորում
Ուսից կախվում են մամուռ ու մորի:
Նստել է ձորում՝ երկինքը դեմքին,
Ծանր նստել է և ամեն մեկին
Իրեն արժանի պատիվն է տալիս.
Վայրի աղավնուն՝ հաճարը վայրի,
Մոլորված ամպին իր քիվն է տալիս,
Խրտնած քարայծին՝ մութն իր քարայրի:
Հոգնած ճամփորդին պատիվ է անում
Ցրտին՝ տաքության հոգեպահուստով,
Շոգին՝ ձյունահամ աղբյուրով անուշ
Եվ իր ստվերի լայն առագաստով: (ՀՍ)

Բ. Ամեն ինչ այնպես անդորր է ու կույս,
Որ չեմ հավատում կարմիր երազին:
Միրաժի նման փարվում է հոգուս

Անէ աշխարհի քնքշությունը հին:
 Բայց չէ՞ որ այստեղ ապրել են անհույս-
 Եվ չե՛ն էլ լսել քնքշության մասին. . .
 Օ՛, խորհուրդների հավերժական մա՛յր,
 Որ տառապանքների ու տարփանքի մեջ
 Հղանում ես միշտ կյանքեր անհամար-
 Հազար գույներով՝ հազա՛ր ելևէջ,-
 Որ հղանում ես աշխարհի համար
 Հավիտենական կշռույթների վեճ. . .
 Օ՛, դո՛ւ, բարբարո՛ս, խելագա՛ր, ցավո՛ւտ
 Երբեմն իմաստուն, երբեմն-գազան,
 Աշխարհներ այրող կախարդական խո՛ւտ,
 Աշխարհներ շինող բախտի գավազա՛ն,-
 Դիվային ոգին ճահիճների մոտ,
 Ոչնչի՛ մասին,- աղո՛թք սրբազան. . . (ԵԶ)

Գ. Լռությունը մահվան թևով ծվարած
 Առկայծում է կանթեղն աղոտ, մենավոր,
 Եվ մեռնում է հեզ բամբիշը դալկացած
 Էլ-Սամանի կրծքի վրա սգավոր:
 Նա մեռնում է ինչպես ցողը բողբոջում,
 Մանկիկն ինչպես սուրբ գրկի մեջ մայրական,
 Եվ հրձծում է, աղոթքի պես շնջում
 Հեզ բամբիշի ականջն ի վար Էլ-Սաման:
 -Կըխորտակեմ կամարները երկնային,
 Ես չեմ թողնի, ես չեմ թողնի դու մեռնես
 Ե՛վ կվանեմ, և՛ կհաղթեմ չար մահին,
 Ես չեմ թողնի, ես չեմ թողնի դու մեռնես:
 Եվ գրկել է դժգունացող բամբիշին,
 Մահվան հանդեպ սուր ու վահան է շարժում.
 Եվ բամբիշի սառած-մեռած շրթներին
 Իր հրեղեն սերն ու շունչը ներարկում: (ԱԻ)

161. Գտնել հակադրությունները, օքսիմորոնները, բառախաղերը:

Ա. Դու իմ եղբայր, դու իմ պապ,
 Իմ գիժ, իմ խելոք:
 Իմ հանճարեղ, իմ հիմար,
 Իմ պղտոր, իմ ցինջ. . . .
 Դու մատչելի, մարդամոտ,
 Դու և անառիկ. . . .

Ինքդ քեզնից հասարակ,
Ինքդ քեզնից վեր. . .
Դու գալիքից առած վարկ,
Անցյալի նվեր:
Դու դպիր ու շինական,
Դու անխոնջ գրիչ,
Դու իմ անտեր տիրակալ,
Եվ տիրական խիղճ. . . . (ՀՍ)

Բ. Լույսը բացվելիս ինձ չարթնացնեք,
Թողեք աչքերս մի քիչ փակ մնան,
Փակ աչքով տեսած
Լույսն ավելի է լուսավոր լինում. . .

Ուրիշ ձկներ են ջրում,
Ուրիշ ջրով են ջրում
Սիրած մարգերս. . . .

Ես հարուստ եմ իմ ծորով,
Եվ խնձորով իմ ձորի,
Արծիվ բռնող իմ Լորով
Ու լորերով իմ Լորի:

Եվ սաղարթներով շոշափում եմ ես
Անսահմանության փեշերն այս գիշեր,-
Ինչքան փխրուն է գիշերն այս գիշեր: (ՀՍ)

Գ. Ես այսքան բարդ ու հասարակ,
Ես այսքան բիրտ, այսքան բարակ,
Ես այսքան հաշտ ու հակառակ,
Այսքան անշարժ, այսքան արագ,
Այսքան անփոյթ, այսքան հավաք,
Առաքինի և անառակ
Եվ հորովել և պատարագ:
Թողնեմ երազս ծերատ-պռատ,
Երազ հովիտս ճանապարհվեմ,
Հրճվանքի ցավից սիրտս բռնած:

Թափվում են բները ճյուղերից,
Կախվում են ճտերը շյուղերից,
Դողում են ճտերը անթև
Փախչում են ճտերը բներից,
Կառչում են ծառերի բներից. . . . (ՀՍ)

Դ. Բայց, ավա՛ղ, հոգուս մեջ և կյանքում
Ամեն ինչ գլխիվայր շրջվում է . . .
Գյազբելի փեշերն են երկնքում,
Գլուխը գետի մեջ թրջվում է:

Կիրճերի մեջ հոգնած օրն է հորանջում,
Եվ ժայռերի լռությունն է ղողանջում:

Մերթ ոտից-գլուխ զարդեր եմ հագնում,
Մերթ այնպես անշուք, պարզ ու անզարդ եմ,
Մերթ քար ու քարափ, մերթ վայրի խոպան,
Մերթ կանաչ անտառ ու ցանած արտ եմ:

Եվ կովի դաշտից գալիս էին
Թևավոր լուրեր, անթև մարդիկ:

Անշարժություն փոթորկալի
Եվ քարեղեն ալեբախում . . .
Թվում է, թե պիտի քայլի,
Բայց ինչո՞ւ է ոտքը կախում: (ՀՍ)

162. Արտահայտչական ի՞նչ միջոցներ են գործածվել տրված հատվածներում:

Ա. Չէ՛, ասում են, բախտավոր ես, ով անբախտ,
Իրավ, կյանքս և դժոխք էր, և դրախտ
Ախ, չգիտեմ ո՞ւմն է մեղքը, որ լացի,
Զուլալ եկա պղտորվելով գնացի . . .
Ավաղ, ձեր մեջ ես ո՞նց զուլալ մնայի,
Ես անգին քար, գոհար ու լալ մնայի,
Գոհարին՝ վար, քարերին վեր տարաք դուք՝
Քար սրտերում ո՞նց մնայի ես մանուկ: (ՀԾ)

Բ. Ի՞նչ խոստանամ.
Եթե լեռ եմ՝ դաշտ չեմ դառնա,
Ոխերիմ եմ՝ հաշտ չեմ դառնա,
Թե սրբության ավազան եմ՝
Ի՞նչ լվացքի և խմորի՛ տաշտ չեմ դառնա . . .
Չե՛մ խոստանում,
Որովհետև համոզված եմ, հաստատ գիտեմ,
Որ երբևէ կոխ չեմ բռնի կամ չեմ պարի

Ուրիշների դեռ նոր թաղած
Կամ չքաղած
Մարգերի մեջ և բոստանում. . .
Չե՛մ խոստանում,
Որովհետև համոզված եմ, հաստա՛տ գիտեմ,
Որ ինձ նման մարդը երբեք
Չի զրպարտում-ամբաստանում
Անմեղ տեղը և ո՛չ մեկին,
Մինչև անգամ. . . մարդանման գինու տկի՛ն. . . (ՊՍ)

Գ. Տարիներն իրար նման ու տարբեր,
Տարիներն իրար երես չտեսած,
Իրարից փախած- մտել իրար գիրկ,
Եկել-գնացել, կորել են անդարձ. . .
Կորչելով աճել դարձել են տարիք,
Եվ տարիքով եմ ես հարստացել:
Ես ամբողջովին ինձ պարտք եմ առել
Բնությունից մեծ ու մեծահարուստ:
Եվ կամաց-կամաց, պատահ-պատահիկ
Մարել եմ երգով. . . Բայց որքան մարել,
Այնքան աճել են պարտքերս տալիք,
Եվ տալիքով եմ ես հարստացել: (ՀՍ)

163. Կրկնության ո՛ր տեսակներն են գործածվել տրված հատվածներում:

Ա. Ամեն ինչ երազ է եղել,
Մի խառն ու խանգարված երազ:
Ոչ ես եմ արտասուք հեղել,
Ոչ դու ես ծիծաղել վրաս:
Ոչ ես եմ մահերով անցել,
Ոչ դու ես հառաչել հեռվից:
Ոչ դու ես տնից գնացել,
Ոչ ես եմ տուն եկել կովից. . . . (ՀՍ)

Բ. Անլեզու, անգիր հավերժից
Ասքեր է մեզ հյուսում աշխարհը:
Ազգեր են հեռանում աշխարհից,
Ազգեր են ներխուժում աշխարհը:
Ծովերը պատաններ են դառնում,
Լեռները՝ տապաններ, և դարձյալ
Աշխարհը չի շահում դրանից,
Դրանից չի տուժում աշխարհը: (ՀՍ)

Գ. Ե՛րբ էր լուսանում, չգիտեի՛նք,
 Ե՛րբ էր մութն ընկնում, չգիտեի՛նք:
 Ե՛րբ էի՛նք ուտում, չգիտեի՛նք,
 Ե՛րբ էի՛նք խմում, չգիտեի՛նք.
 Ե՛րբ էի՛նք քնում չգիտեի՛նք. . .
 Ով բոլորից շուտ աչքը բանար,
 Շապիկը գտներ, ձայն էր տալիս. . .
 Կտուրից կտուր թռչում-գալիս,
 Հավաքվում էի՛նք, դառնում բանակ. . . (ՀՍ)

Դ. Աչքդ աղջկա աչքին է առել,
 Եվ բոց են կտրել այտերն աղջկա,
 Եվ մթագնել են աչքերն աղջկա,
 Եվ շփոթել են ձեռքերն աղջկա,
 Եվ ջուրն է ընկել բաղարջը ծոցից,
 Եվ պարկը ուսից ընկել է ներքև. . .
 Եվ ջուրն է թափվել այլուր-նախընծան,
 Եվ ջուրն է թափվել չարչարանքը հոր. . . .
 Եվ աշխարհն այնքան բարի է այսօր,
 Եվ բոլոր մարդիկ բարի են այնպես,
 Եվ բարություն է կաթում երկնքից,
 Եվ բարություն է հողն արտաշնչում,
 Եվ դու մոռացած հոգնություն ու հոգս,
 Մոռացած բախտիդ խաղերը խրթին,
 Մոռացած մամռած տարիքդ. . . կարծես
 Արևագալիդ հրաշքի միջով,
 Պատանությանդ միջով ես քայլում: (ՀՍ)

**164. Պարկերավորման և արտահայտչական ի՞նչ միջոցներ են գործածվել
 տրված հարվածներում:**

Ա. Ամպ է նորից իմ շուրջ բոլորը,
 Թվում է, թե խոլ ու խոլոր
 Ժայռերն այստեղ տարին բոլոր
 Ամպ են արտաշնչում:
 Ամպը ամպի գիրկն է գալիս,
 Ամպը ամպին կուլ է տալիս,
 Ամպը ամպի մահն է լալիս,
 Հողն արցունքով թրջում:
 Ամպերի հետ որոտալով,
 Ժայռերի հետ կռիվ տալով,

Հոխորտալով ու ժպտալով
Որոտանն է փախչում:
Ալիքները թափով գալիս,
Վարսերն իրենց թափ են տալիս,
Կարծես իրար ծափ են տալիս,
Ու ճչալով թռչում: (<Ս)

Բ. Նստել ես ու միտք ես անում,
Թե հիմա քեզ ի՞նչ է մնում
Քո այնքան առած-տվածից,
Քո այնքան արած-դրածից:
Քո այնքան արած-դրածից
Ոչ մի բուռ բարիք է մնում,
Ոչ մի բուռ մոխիր ու կրակ
Ոչ տուն ու տանիք է մնում:
Մի հոգնած ալիք է մնում,
Քո կանաչ-կարմիր հեղեղից,
Քո կարմիր-կանաչ օրերից
Մի մամռած տանիք է մնում: (<Ս)

165. Բացադրել տրված շրջասությունները:

Ա. Ադրիականի թագուհի
ազատության երգիչ
Ավարայրի բլբուլ
բիրլիական լեռ
երկաթե լեղի
երկաթե կանցլեր
ծագող արևի երկիր
կանաչ ոսկի
հայ Աքիլես
հայկական խնձոր
մեծ լոռեցի
ջունգլիների արքա
Սասունի արծիվ
սև ոսկի
քեռի Սեմ
Օշականի մեռյալ
ֆուտբոլի արքա

Բ. Ալբիոնի թագուհի
անապատի նավ
անտառի արքա
անտառի պոետ
Գեղամա գեղեցկուհի
դեղին ջարդ
Թորգոմա ազգ
Նեմրութի ասլան
հայ Արիստոտել
հայկական Կարթագեն
Կովկասի կոնսերվատորիա
կապույտ ոսկի
Լաս Վեգասի արծիվ
Նոյի կամար
քարացած երաժշտություն
հայ Անդերսեն
քարերի երկիր

166. Ընդգծել շրջասությունները և բացադրել դրանք:

Ա. Չէ՛, կռունկ չկա՛ր Բեռլին քաղաքի երկնքում մթար,
Որ վարագուրված հայոց աշխարհից գեթ խաբրիկ մը տար:
Բայց Գուտենբերգին ծնած աշխարհում՝
Սև կռունկների սև երամի պես՝
Սև տառերն էին լրագրերի էջերին թառում:

Եվ ահա Կարմիր սուլթանն իսկապես
Հայի. . . ջուր դարձած արյունի գետով
Հայոց անջրդի հողն էր ողողում. . .
-Այս ջարդ-սպանդը երե՛կ չսկսվեց,
և ոչ էլ վաղն է նա ավարտվելու,
ուստի վախեցեք սպանդից ճերմա՛կ
ավելի, քան թե եղեռնից կարմի՛ր. . . (ՊՍ)

Բ. Աչքս բացի. . . Ես ինձ օրորոցում տեսա,
Հետո տատիս ծոցում, պապիս ծոցում տեսա,
Հետո տեսա բակի, մեր շինական բակի
Անտաշ քարով շարած պարիսպի տակ:
Հետո եկան, եկան. . . Կանաչ օրեր եկան,
Կարմիր օրեր եկան, դեղին օրեր եկան. . .
Եվ սպիտակ: (ՀՍ)

167. Բացադրել տրված նախադասություններում փոխանունությունների հիմքը:

1. Քանզի հայոց վայ սփյուռքում Պանդխտությունն է դեռ պոկում Հայ բերանից հայոց լեզուն, Օտարն հայի մահն է ուզում. . . 2. Թուրքն էլ գիտե, որ մենք մեծ հավատ ունենք մեր հաղթանակի հանդեպ. . . 3. Դու դեռ իրավունք չունես մեռնելու, Քանի չեն մեռել ենիչեր ու հոն: 4. Մարմին է տվել իր հին երագին, Իմ հին Հայաստանն իր փրկված հողով, Բայց դեռ արցունք է խառնում Արագին, Իմ հին Հայաստանն իր զրկված հողով: 5. Որքան ցավեր տվին, առան Որքա՛ն, սևե՛ր, սևե՛ր, սևե՛ր. տարիներս, տարիներս. . . 6. Իրան, Թուրան ողջ եկել են, Թաթուլն անհաղթ, աննկուն, Ջորք ու բաբան խորտակվել են, Նրա բերդը միշտ կանգուն: 7. Դահիճն եկավ ոտից գլուխ Կարմիր հագած ու արյուն, Ու դուրս տարան իր պալատից Թըմկա չքնաղ տիրուհուն: 8. Եվ մի գիշեր, երբ Բաղդադը քուն էր մտել Տիգրիսի նոճիածածկ ափերի վրա, - Գաղտնի հեռացավ քաղաքից: 9. Ամեն սասունցի դարձավ Սասնա ծուռ. . . Որ - բավական է - Քառսունձամ կույսեր, հարսներ արմաղան Օսմանցու համար էլ երկանք չաղա՛ն

168. Տեքստերը ենթարկել ոճաբանական վերլուծության:

Ա. Հոգիս արթնացավ հարավի բույրից,
Ինձ է դուրս կանչում գեփյուռը նրա.
Ձյունն էլ արևի ջահել համբույրից

Ուրախ լալիս է դաշտերի վրա:
Ելնեմ, ծաղկումն է ձնծաղիկների
Ձյունից ինձ նայող աչերն համբուրեմ.
Գնամ հետևից ծիծեռնակների
Նրանց հետ ետ գամ՝ գարունը բերեմ,-
Բարձրանամ կապույտ գահը լեռների՝
Արևն իբրև թագ իմ գլխին առնեմ,-
Հագնեմ ծիրանին արշալույսների,-
Գարնան թագավոր ինձ թագադրեմ,-
Եվ հրովարտակ արձակեմ մի խիստ,
Որ աղբյուրները հավերժ կարկաչեն,
Որ ծաղկեն լեռներն իմ արևանիստ,
Որ ծով դաշտերը հավերժ կանաչեն
Որ գարունները գան ու չգնան,
Որ հավերժանան զմրուխտ դրախտով,
Որ բեկվի իմ դեմ խորհուրդը մահվան,
Որ մարդը ցնձա հավերժի բախտով:
Եվ ես երջանիկ կլինեմ այնժամ,
Եվ գուցե այնժամ ես մահը սիրեմ,
Երբ անմահ լինեմ, երբ հավերժանամ,
Երբ գարունները ողջ թագավորեմ. . . (ՀԾ)

Բ. Ժամանակները խառն են ու խրթին .

Ինչ-որ տազնապ է ամպն իր հետ տանում,
Ինչ-որ սարսուռ կա անտառի շուրթին,
Ինչ-որ խորհուրդ կա, որ չեմ հասկանում:
Ժամանակները խառն են ու խրթին .
Հողմը ննջում է, հովն ըմբոստանում,
Ինչ-որ հառաչ կա քարափի շուրթին,
Ինչ-որ բողբոջ կա, որ չեմ հասկանում:
Ժամանակները խառն են ու խրթին,
Հողը գժվում է, ջուրն իմաստնանում,
Մեռած հույսերը ծնվում են կրկին,
Ու սիրտս կրկին բան չի հասկանում:
Լեռների վրա և տափաստանում,
Լույսի մեջ անգամ խորհուրդ կա մթին,
Օրերն իրարից բան չեն հասկանում,
Ժամանակները խառն են ու խրթին. . . (ՀՍ)

Գ. Առավոտ էր: Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտներից մեկը:

Արևի առաջին ճառագայթների ներքո՝ Մասիսի սպիտակափառ գագաթը փայլում էր վարդագույն շողքերով, որ աչք էին շլացնում: Արագածի պսակաձև գագաթը չէր երևում: Նա դեռ պատած էր ձյունի պես ճերմակ մշուշով, որպես մի ամոթխած հարսիկ, որ սքողում է յուր դեմքը անթափանցիկ շղարշով: Կանաչազարդ դաշտավայրը, ցողված վաղորդյան մարգագետիններով, վառվում էր ծիածանի ամենանուրբ գույներով: Փչում էր մեղմ հովիկը, ծաղիկները ժպտում էին, դալար խոտաբույսերը ծփում ու ծածանվում էին, և դաշտի խաղաղ տարածությունը օրորվում էր սքանչելի ալեկոծությամբ:

Գեղեցիկ էր այդ առավոտը:

Թռչունները ուրախ-ուրախ ճախրում էին մի թուփից դեպի մյուսը: Գույնզգույն թիթեռները, գույնզգույն ծաղիկների նման, ցանված էին օդի մեջ: Սպիտակ արագիլը, կարմիր ոտները հորիզոնական դիրքով ուղիղ մեկնած, լայն թևքերով թափահարում էր, շտապելով դեպի Արաքսի մորուսները: Ձեռնասուն եղջերուները, վայրենի վիթն ու այծյամը դուրս էին եկել Խոսրովի արքայական անտառներից, և ազատ, համարձակ վազվզում էին շրջակա մարգերի վրա:

Չէր երևում միայն մարդը: (Բ)

169. Գործառական ո՞ր ոճերին են պատկանում տրված հատվածները:

Ա. Արևը արդեն մտել էր, բայց հորիզոնը դեռ վառվում էր ոսկեղեն բոցերով: Լուսավորված ծովը, որպես մի շողշողուն հայելի, միախառնված էր երկնքի ծիրանագույն պայծառության հետ, որի վրա տակավին փայլում էին վերջին ճառագայթները իրենց սուր, սլաքաձև ճաճանչներով: Այս վսեմ, հանդիսավոր ըրպեում ամեն երեկո նստած էր լինում նա, մինչև ճառագայթները հետզհետե անհետանում էին, բոցավառ լուսավորությունը հանգչում էր, և հորիզոնի վրա տիրում էր մութ կապտագույն մռայլը... Իսկ այդ երեկո նույնը կատարվեց նրա սրտում... Նա վեր կացավ յուր նստած տեղից և սովորականից վաղ մտավ յուր քարանձավը:

Բ. Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն հայերենն է:

Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումն ու դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ:

Հայաստանի Հանրապետության բոլոր միջնակարգ-մասնագիտական, մասնագիտական-տեխնիկական և բարձրագույն ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ընդունելության քննությունը և հայոց լեզվի ուսուցումը պարտադիր են:

Գ. Մենք (բազմադարյա մարդկությունը) լի և առատ ենք սրտառույ խոսքերով, ուրեմն և՛ մի քիչ էլ կուշտ ենք: Այժմ արդեն մենք առավել կարիք ունենք այդ հոգու դիպելկոտիկային, ավելի, քան սրտալի գեղմանը, որը (այդ սրտի գեղումը) հիմքն է նախնական արվեստի: Դրանով (սրտալի գեղմամբ) բանաստեղծությունը ոչ թե վերջանում է, այլ սկսվում է միայն, ինչպես որ երաժշտական ստեղծագործության մեջ էլ երգը երկուշաբթին է միայն, և ոչ թե շաբաթը:

Դ. Էս վախկոտ Նազարը մի գիշեր կնգա հետ շեմքն է դուրս գալի: Որ շեմքն է դուրս գալի՝ տեսնում է ճրըքճրըքան լո՛ւս-լուսնյակ գիշեր՝ ասում է.

-Ա՛յ կնիկ, ի՛նչ քարվան կտրելու գիշեր է՛... Սիրոս ասում է վեր կաց գնա Հնդրստանից եկող Շահի քարվանը կտրի, բեր տունը լցրու... .

Կնիկը թե.

-Ձենդ կտրի, տեղդ նստի, քարվան կտրողիս մտիկ արա... .

Նազարը թե.

-Անզգա՛մ կնիկ, ինչու չես թող անում ես գնամ քարվան կտրեմ բերեմ տունը լցնեմ: Էլ ի՛նչ տղամարդ եմ ես, էլ ինչո՞ւ եմ գդակ ծածկում, որ դու համարձակվում ես իմ առաջ խոսես:

Ե. Հանրաստորադասությամբ բաղադրված կառույցներում բաղադրիչների կապակցությունն իրացվում է առավելապես նշույթներով: Շարահարությունը, եթե կա, գործում է միայն համագերադաս բաղադրիչների միջև: Վերջիններս իրար հետ կարող են կապակցվել նաև համադասական շաղկապներով՝ ըստ միմյանց նկատմամբ ունեցած իմաստային հարաբերությունների տեսակի՝ համապատասխան ստորադասական շաղկապներով կամ հարաբերականներով:

170. Տրված հատվածներում որոշել առօրյա-խոսակցական ոճի առանձնահատկությունները: Տալ գրական համարժեքները:

Ա. Աղաչանք արի, պաղատանք արի.

-Այ տղա, ասի, ե՛տ քաշվի, հեռի... .

-Չէ՛ որ չէ՛, ասավ, էն լեռ սարի պես

Գընաց դիք կանգնեց գեղի մեյդանում... .

... .Քննություն արին, բռնեցին գյադին,

Թե ինչպե՛ս ուշունց կտաս թավադին.

Բաց արին տեսան գրած զակոնում,

Թե չորան Չատին Սիբիր է գնում:

Մեր մեջ մի քանի ծեր մարդ ընտրեցինք

Գնացինք թավադի ոտքը խնդիրքով... .

Ախպե՛ր, ասացինք, ի՛նչ արիք իրար,

Խոսք եք կովացրել, արին հո չարիք,

Համ ծեծել տըվիր, համ ուզածդ առ,

Արի վերջացրու, բոլ էլավ, հերիք: (<Թ)

Բ. Մի հացապակաս տարի վեր կացանք ես, դամքաշ (զուռնի ձեն պահող) Ակոփն ու դիուչի Դավիթը մեր զուռնադիողը վեր կալանք, ասինք գնանք Շորագյալա գեղերը հարսանիքներ անենք, հացահատիկ հավաքենք բերենք ձմեռը կառավարվենք:

Գնացինք զուռնա ածելով, հարսանիք անելով գեղեգեղ ման եկանք: Բավականին ցորեն-գարի հավաքեցինք. . . ետ ճամփա ընկանք դեպի մեր տները:

Էս մեր Դավիթը առաջին էր գնում: Մին էլ, թե՛ տղերք, եկեք, որ գեղը գտել եմ:

-Այ տղա, ո՞ւր է:

-Թե՛ հրեն ճրագները երևում են:

Մտիկ տանք տեսնենք, ճշմարիտ որ, հեռվում շատ ճրագներ են երևում: Միայն ես նկատում եմ, որ էս ճրագները ժաժ են գալի, դե-դեն են գնում:

Ասի՛ տղեք. . . . Էս գեղ չի, գելեր են: Գիլի բուլուկի բերան ենք ընկել, պատրաստվեցեք: Ես լսել եմ, որ զուռնի ձենին գելը- էլ վախենում է, թե ինչ, մոտ չի գալի:

Ես ու Ակոփը զուռնան զլեցինք, էս Դավիթն էլ դիողը՝ դը՛մբ հա դը՛մբ, կեսգիշերին էն վերանա դաշտումը ածում ենք: Զուռնա-դիողի ձենը վեր ելավ թե չէ՛ էս գելերս, ոնց որ տեղնուտեղը մեխես, մնացին իրենց տեղերը մեխված:

Մին էլ ոռնոց վեր քաշեցին, տեր աստված, ի՞նչ ոռնոց: Զուռնի հետ ձեն ձենի են տվել, ոռնում են: (<Թ)

171. Գիտական ոճի ո՞ր ենթաոճերով են գրված տրված հատվածները:

Ա. Փոխակերպման միջոցով միևնույն բովանդակությունը կարելի է արտահայտել քերականական տարբեր կառուցվածքներով և եղանակներով, այսինքն՝ միջուկային (հիմնական) նախադասությունների փոխարեն հանդես են գալիս ոչ հիմնական կառույցներ՝ նրանց փոխակերպները:

Եթե ներմակարդակային փոխակերպման դեպքում միջուկային և փոխակերպական անդամները մնում են միևնույն մակարդակի շրջանակում, ապա շարահյուսական մակարդակում կատարվող փոխակերպական իրողություն է նախադասության մի տեսակի փոխակերպումը մեկ այլ տեսակի, կամ էլ՝ բառակապակցության:

Բ. Չոր ջուրը հեղուկ է, որը հայտնի է Noves 1230 անվամբ: Այն ստեղծվել է ամերիկացի գիտնականների կողմից: Չոր ջրի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ չի թրջում առարկաները: Փորձերի արդյունքում պարզվել է, որ չոր ջուրը էլեկտրաէներգիա չի հաղորդում, նրա մեջ չեն լուծվում շաքարը, թեյը, սուրճը: Չոր ջուրը սկսում է եռալ -49° C ջերմաստիճանում: Կարելի է ձեռքը հանգիստ մտցնել եռացրած չոր ջրի մեջ առանց վախենալու, որ այն կայրի: Չոր ջուրը արագ գոլորշիանում է: Առաջին անգամ չոր ջուրը որպես հրդեհը մարելու միջոց ցուցադրվել է 2004 թվականին:

Գ. Քրոնիկական հեպատիտը բազմապատճառային, դանդաղ ընթացող հիվանդություն է, որը բնորոշվում է լյարդի ինչպես պարենխիմալի, այնպես էլ մեզենխիմալի հյուսվածքի դեգերատիվ, դիստրոֆիկ և բորբոքային բնույթի տարածումով կամ օջախային ախտահարումով: Ըստ ախտաբանական ընթացքի տեղակայման՝ հեպատիտները լինում են լյարդաբջջային (պարենխիմատոզ) և մեզենխիմալին, ըստ բնույթի՝ ինֆիլտրատիվ և դեստրուկտիվ:

Դ. Ինչո՞ւ է երկինքը երկնագույն: Տեսանելի լույսի սպեկտրի հիմնական գույներն են կարմիրը, նարնջագույնը, դեղինը, կանաչը, երկնագույնը, կապույտը, մանուշակագույնը, իսկ բնության մեջ այդ սպեկտրի լավագույն դրսևորումը ծիածանն է:

Տեսանելի լույսը էլեկտրամագնիսական ճառագայթում է, որի ալիքները ունեն որոշակի երկարություն: Կա նաև անտեսանելի լույս՝ ուլտրամանուշակագույն և ինֆրակարմիր, բայց մենք այն չենք տեսնում ալիքների չափազանց կարճ կամ երկար լինելու պատճառով:

Տեսանելի լույսի ամենաերկար ալիքները կարմիրներն են, ամենակարճը՝ մանուշակագույնները: Կարմիր լուսային ալիքները ամենավատն են ցրվում, իսկ կապույտ և մանուշակագույն ալիքները՝ ամենալավը: Որոշակի միջավայրում գույնի ցրումն առաջացնում է միջավայրի գունավորում: Ահա թե ինչու է երկինքը մանուշակագույն: Սակայն մենք այն տեսնում ենք երկնագույն: Պատճառը մեր աչքերն են: Բանն այն է, որ միևնույն պայծառության դեպքում մենք երկնագույնն ընդունում ենք ավելի լավ, քան մանուշակագույնը: Բացի այդ կանաչ գույնը ցրվելով խառնվում է մանուշակագույնի հետ և կրկին ստացվում է երկնագույն:

ՏԵՔՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

172. Հեղեղայլ տեքստերում առանձնացնել պարբերությունները:

Ա. Խստաշունչ ձմեռը և ցնցոտիավոր ծերունին

1910 թվականի ձմեռը շատ խստաշունչ էր Ռուսաստանում: Մոսկվայից 20 կմ հեռու գտնվող մի հաջողակ ու հայտնի հյուրանոցի համար ծանր ժամանակներ էին: Շաբաթներ շարունակ ոչ ոք չէր մտնում այնտեղ, և հյուրանոցի տերն աշխատանքից ազատել էր աշխատակիցներից շատերին: Մի երեկո նա զարմացավ՝ լսելով դռան թակոցը: Դուռը բացելով՝ տեսավ ալեխառն մորուքով մի ծերունու: Ծերունին մի քանի օր դրսում ձյան տակ էր եղել, սառած էր և համարյա սովամահ: Նա հարցրեց, թե հյուրանոցի տերը կարո՞ղ է իրեն ուտելիք և մի գիշերվա օթևան տալ: Իհարկե, կարող եմ, - ասաց հյուրանոցի տերը: - Մի գիշերվա օթևանի և ճաշի գումարը կկազմի 3 ռուբլի: Կարո՞ղ եք վճարել: Ծերունին խոստովանեց, որ դրամ չունի, սակայն եթե իրեն վնդեն, ապա հաստատ ցրտամահ կլինի: Հյուրանոցի տերը խղճաց ծերունուն և ներս հրավիրեց: Տարավ ծերունուն խոհանոց, մի թաս ապուր

լցրեց և տարեկանի կես հաց տվեց այցելուին: Ծերունին շատ քաղցած էր և արագ կերավ ապուրն ու հացը: Հյուրանոցի տերը ծիծաղեց՝ տեսնելով, որ ապուրի ճակնդեղը ծերունու մորուքի վրա հետք է թողել: Յնցոտիավոր ծերունին շնորհակալություն հայտնեց հյուրանոցի տիրոջը և ավելացրեց.- Առավոտյան հեռանալիս դու ինձ չես տեսնի: Թեև ես դրամ չունեմ, բայց կվճարեմ քո 3 ուրվին, երբ ունենամ: Հյուրանոցի տերը ոչինչ չասաց, սակայն չէր ակնկալում երբևէ կրկին տեսնել ո՛չ ծերունուն, ո՛չ էլ 3 ուրվին: Եկավ գարունը, ձյունը հալվեց և հյուրանոցի վիճակը բավականին լավացավ: Այժմ այցելուների թիվն ավելին էր, քան նախկինում: Լինելով բարեպաշտ մարդ՝ հյուրանոցի տերը որոշում է գնալ եկեղեցի և շնորհակալություն հայտնել Աստծուն հյուրանոցի վիճակի բարելավման և հաջողության համար: Հասնելով մայրաքաղաք՝ նա անմիջապես ուղղվում է դեպի եկեղեցի: Ներս մտնելուն պես նրա ուշադրությունը գրավում են պատերը զարդարող սրբապատկերները: Նրա հայացքը կանգ է առնում հեռավոր անկյունում գտնվող մի սրբապատկերի վրա: Դրանում պատկերված էր մի ալեխառն ծերունի, որի դեմքը ծանոթ էր թվում: Մոտենալով՝ հյուրանոցի տերը ծերունու մորուքի վրա ճակնդեղի հետք է նկատում, ապա սրբապատկերի տակ կարդում՝ Սուրբ Նիկողայոս: Հյուրանոցի տերը ցանկանում է մոմ վառել և երբ մոմը տեղադրելու համար մատներով փորփորում է հողը, շոշափում է մի փոքրիկ կոշտ բան: Դա դրամ էր՝ ուրվի, կողքին կար ևս 2 ուրվի: Հյուրանոցի տերը վերցնում է դրամները և կրկին նայում սրբապատկերին. ճակնդեղի հետքն անհետացել էր, իսկ ծերունու դեմքին ժպիտ կար:

Ըստ Պատուր Կոելիոյի

Բ. Մի անգամ մի իմաստուն որոշում է գտնել ընդունակ ու տաղանդավոր աշակերտի, որն այնքան օժտված կլինի, որ կկարողանա փոխարինել իր ուսուցչին վերջինիս մահից հետո: Իմաստունն իր մոտ է կանչում բոլոր աշակերտներին ու հանձնարարում է մի խնդիր լուծել: -Տեսնո՞ւմ եք, -ասում է նա,- իմ հետևում՝ պատի մոտ գտնվում է քաղաքի ամենամեծ ու ամենաճանր դուռը: Ո՞վ կկարողանա բացել այն առանց որևէ մեկի օգնության: Աշակերտներից շատերը խոնարհում են գլուխներն՝ ի նշան այն բանի, որ խնդիրն անլուծելի է: Մյուսները սկսում են ուսումնասիրել դուռը, քննարկում են լծակների օգտագործման հնարավորությունը, նյութի առանձնահատկությունները և գալիս են այն եզրակացության, որ խնդիրը լուծելն անհնարին է: Աշակերտներից մեկը մոտենում է դռանն ու զգուշորեն ու մանրամասն ուսումնասիրում այն: Նա փորձում է հասկանալ, թե ինչ նյութից է պատրաստված դուռը, պարզում է հաստությունն ու ամրությունը: Բոլորը ենթադրում են, որ դուռը փակ է կամ սեպերով ամրացված: Մինչդեռ այդպես չէր: Աշակերտը խորը շունչ է քաշում ու թեթևակի հրում դուռը: Այն հեշտությամբ բացվում է: Բոլոր ներկաները զարմանում են: Իմաստունին հաջողվում է գտնել իրեն փոխարինողին: Նա շրջվում է դեպի մյուս աշակերտներն ու ասում. -Կյանքում ու աշխատանքում հաջողությունը կախված է մի քանի գործոններից և դուք այսօր ականատես եղաք դրան: Առաջին հերթին թույլ տվեք, որ ձեր զգացմունքներն ամբողջովին

ուսումնասիրեն ու հասկանան այն իրականությունը, որը շրջապատում է ձեզ: Մի արեք հապճեպ ու սխալ եզրակացություններ: Եղեք այնքան ուժեղ, որ կարողանաք որոշումներ կայացնել: Որոշումներ կայացնելուց հետո գործեք վստահորեն ու առանց կասկածների: Կենտրոնացեք և գործի դրեք ձեր ամբողջ ուժն ու էներգիան: Եվ վերջապես մի վախեցեք սխալներ գործելուց:

Արևելյան առակ

Գ. Նախարարներից մեկն ուներ օգնական, որը փառաբանվում էր իր ազնվության, կարգապահության ու աշխատասիրության համար: Երբ նա երեք տարի արդեն ծառայել էր նախարարի մոտ, վերջինս ասում է. -Ես գոհ չեմ քեզանից և այլևս քո ծառայությունների կարիքը չունեմ: Օգնականը հուզված, կասկածամտորեն բացականչում է. -Մի՞թե ես Ձեր հանձնարարությունները վատ եմ կատարել: Մի՞թե երբևէ ծուլացել եմ: Մի՞թե կարգապահ չեմ եղել իմ աշխատանքում: -Այդ բոլորը ճիշտ են,- հաստատում է նախարարը: -Հապա ինչո՞ւ եք զրկում ինձ Ձեր ողորմածությունից և թույլ չեք տալիս այսուհետ ծառայել Ձեզ: -Դուք երեք տարի եղել եք իմ օգնականը,- պատասխանում է նախարարը,- բայց այդ երեք տարիների ընթացքում իմ ոչ մի թերությունը ցույց չեք տվել: Նշանակում է՝ Դուք հոգացել եք ոչ թե այն մասին, որ ես ավելի լավ աշխատեմ, այլ այն բանի մասին, որ հաճոյանաք ինձ: Հենց այդ պատճառով էլ այլևս Ձեր ծառայությունների կարիքը չունեմ:

Չինական առակ

173. Համառոտել տրված տեքստերը:

Ա. Հյուսնի պատմությունը

Լյուսի տատիս իմացած հեքիաթներին վերջ չկար: Ահա դրանցից մեկը. որն ապացուցում է, թե հուսահատությունը պարզապես անհեթեթություն է: Այս պատմությունը հյուսնի մասին է, որն ապրել է հարյուրավոր տարիներ առաջ: Օրերից մի օր, տուն վերադառնալիս, ընկերներից մեկը կանգնեցնում է նրան և հարցնում.

-Եղբայրս, դեմքդ ինչո՞ւ է թթված: Բա՞ն է պատահել:

-Եթե իմ տեղը լինեիր,- պատասխանում է հյուսնը,- Դու էլ այս օրին կլինեիր:

-Ի՞նչ է եղել,- հետաքրքրվում է ընկերը:

-Մինչև առավոտ,- ասում է հյուսնը,- թագավորի հրամանով պետք է տասնմեկ հազար հարյուր տասնմեկ գրվանքա փայտի լավագույն սղոցուքը տանել պալատ, թե չէ գլխիցս կզրկվեմ:

Ընկերը ժպտում է և գրկում նրան:

-Միրելի՛ ընկեր, մի՛ հուսահատվիր: Արի գնանք ուտենք-խմենք և վաղվա մասին մոռանանք: Հույսդ երբեք մի՛ կորցրու:

Գնում են հյուսնի տուն և տեսնում, որ նրա կինն ու երեխաները նույնպես լուրն առել են և լացուկոծ են անում: Ընկերը նրանց էլ է հորդորում, որ չվշտանան, ու բոլորը միասին սկսում են ուտել, խմել, ուրախ-ուրախ զրուցել, երգել ու պարել:

Խնջույքի կեսին հյուսնի կինը վերսկսում է.

-Խեղճ ամուսինս, առավոտյան զրկվելու ես գլխիցդ, իսկ մենք զվարճանում ենք: Ա՛խ, ոչ մի հույս չկա:

-Մի՛ տանջվիր,- ասում է հյուանը,- ամեն ինչ զուր է:

Եվ շարունակում են ուտել, խմել, երգել ու պարել:

Երբ լույսը ճեղքում է խավարն ու սկսվում է օրը, բոլորը լռում են՝ սարսափով ու վշտով համակված: Թագավորի մարդիկ գալիս և կամացուկ թակում են հյուանի տան դուռը:

Հյուանը հառաչում է.

-Այժմ գնում եմ մեռնելու:

Եվ բացում է դուռը:

-Հյուան,- ասում են հյուրերը,- թագավորը մեռել է: Նրա համար դագաղ սարքիր:
(ՎՍ)

Բ. Գոյություն ունի աֆրիկյան մի ցեղ, որը հետաքրքիր մի սովորույթ ունի. երբ ցեղից ինչ-որ մեկը վատ արարք է թույլ տալիս, նրան բերում են իրենց բնակավայրի կենտրոն, շրջապատում են և երկու օր շարունակ հիշում են միայն բոլոր այն լավ ու բարի արարքները, որ կատարել է նա և շնորհակալություն են հայտնում դրանց համար:

Նրանք կարծում են, որ ամեն մարդ աշխարհ է գալիս որպես լավ մարդ: Յուրաքանչյուրը սեր է ուզում գտնել, երջանկություն, խաղաղություն, անվտանգություն, բայց երբեմն այդ մրցավազքում մարդը սխալ է թույլ տալիս:

Աֆրիկյան այս ցեղն այդ սխալներում ազդանշան է տեսնում՝ օգնության աղաղակ: Նրանք միավորում են իրենց ջանքերը՝ բարձրացնելու ընկածին, վերականգնելու նրա իրական էությունը, նրան հիշեցնելու, թե ինչպիսին է ինքն իրականում:

Գ. Մի անգամ, անցնելով կենդանաբանական այգու փղերի մոտով, մի մարդ հանկարծ կանգ առավ՝ զարմանքով նկատելով, որ այնպիսի վիթխարի կենդանիներ, ինչպիսիք փղերն են, պահվում են կենդանաբանական այգում միայն մի բարակ պարանով, որը կապված է նրանց առջևի ոտքին:

Ոչ շղթաներ կային, ոչ վանդակներ. ակնհայտ էր, որ փղերը հեշտությամբ կարող էին ազատվել այդ պարանից, բայց չգիտես ինչու, նրանք դա չէին անում:

Մարդը մոտեցավ վարժեցնողին և հարցրեց, թե ինչու են այդ վիթխարի ու հիասքանչ կենդանիները պարզապես կանգնել և փորձ չեն անում ազատվելու:

Վարժեցնողը պատասխանեց.

-Երբ նրանք երիտասարդ էին և չափերով անհամեմատ ավելի փոքր, քան հիմա, մենք կապում էինք նրանց այդ նույն պարանով և հիմա, երբ նրանք մեծացել են, հնարավոր է այդ նույն պարանով պահել նրանց: Մեծանալով նրանք շարունակում են կարծել, որ պարանը կարող է կապված պահել իրենց և փախչելու փորձեր չեն անում:

Այդ կենդանիները ամեն բույս կարող են ազատվել իրենց կապանքներից, բայց քանի որ հավատում են, որ չեն կարող, նույնիսկ չեն էլ փորձում և ամբողջ կյանքում մնում են կանգնած նույն տեղում:

Հասուն փիղը վաղուց մոռացել է, թե ինչ է նշանակում պայքարել ազատության համար: Փոքր տարիքում նա հասկացել է, որ չնայած իր ջանքերին, ինքը կմնա կապված: Եվ ահա, վերածվելով մեծ ու հզոր հասուն փիղի, որն ավելի ուժեղ է, քան տասնյակ մարդիկ, շարունակում է հավատալ, որ ինքն ընդամենը կալանավոր է և չի փորձում պայքարել ազատության համար:

Մինչդեռ փոքրիկ փիղը, որ չի հանձնվում, այս ու այն կողմ է նետվում, դեռ չի կորցրել ազատության իր ձգտումը և հավատը, որ կհասնի հաջողության:

Ճիշտ այդ հասուն փղերի պես մեզանից շատերն են կարծում, որ չեն կարող անել ինչ-որ բան միայն այն պատճառով, որ մեկ անգամ, երիտասարդ ու անփորձ ժամանակ դա իրենց մոտ չի ստացվել:

174. Ընդարձակել տրված տեքստերը:

Ա. Մի մարդ շատ էր հպարտանում իր գեղեցիկ մարգագետնով: Բայց մի օր նա տեսավ, որ խոտերի մեջ աճել են խատուտիկներ: Նա ամեն կերպ փորձեց ազատվել նրանցից, բայց ապարդյուն. խատուտիկներն ավելի մեծ թափով էին աճում:

Հուսահատված նա նամակ գրեց գյուղնախարարություն՝ թվելով մոլախոտերի դեմ պայքարի իր իմացած բոլոր մեթոդները, իսկ նամակը ավարտեց հետևյալ խոսքերով. «Ես փորձել եմ ինձ հայտնի բոլոր մեթոդները, խնդրում եմ ասեք՝ ինչ անեմ»: Շուտով նա ստացավ նամակի պատասխանը. «Փորձեք սիրել նրանց»:

Բ. Կոշիկի արտադրությամբ զբաղվող մի խոշոր ընկերություն իր վաճառողներից մեկին գործուղեց Աֆրիկա: Մի շաբաթից նա ղեկավարությանը հեռագիր ուղարկեց՝ հետևյալ բովանդակությամբ. «Եկեք տարեք ինձ այստեղից: Ոչ մի հեռանկար չկա: Բոլորն այստեղ ոտաբոբիկ են քայլում»:

Որոշ ժամանակ անց ընկերությունը ևս մեկ փորձ ձեռնարկեց և ուղարկեց երկրորդ վաճառականին: Մեկ շաբաթից եկավ նաև նրա հեռագիրը:

«Սա մեծ հաջողություն է,- ոգևորությամբ գրում էր վաճառականը,- կոշիկների նոր քանակ ուղարկեք: Շուկան գրեթե անսահմանափակ է: Այստեղ բոլորը ոտաբոբիկ են քայլում»:

Իրերն ու իրավիճակներն ինքնին լավը կամ վատը չեն: Ամեն ինչ կախված է մեր վերաբերմունքից:

Գ. Փողոցում ես տեսա մերկ երեխայի: Նա ուզում էր ուտել և ցրտից դողում էր: Ես զայրացա ու դիմեցի Աստծուն. «Ինչո՞ւ ես թույլ տալիս սա: Ինչո՞ւ դու ոչինչ չես ձեռնարկում»: Աստված ոչինչ չպատասխանեց: Բայց գիշերն անսպասելիորեն լսվեց նրա ձայնը. «Ես ինչ-որ բան ձեռնարկել եմ: Ես ստեղծել եմ քեզ»:

Դ. Թռչունները որոշեցին իրենց համար արքա ընտրել: Պաշտոնի համար լարված պայքար էր գնում: Բարձրացավ սիրամարգը և ասաց.

-Իմ անհամեմատելի գեղեցկությունը համոզիչ ապացույց է այն բանի, որ միայն ես եմ արժանի ձեր արքան լինելու:

Գրեթե բոլորը համաձայնվել էին նրա հետ, բայց սիրամարգին մոտեցավ ագռավը և ասաց.

-Պատկերացնենք, որ դու ես լինելու մեր արքան: Բայց ինչպե՞ս դու կպաշտպանես քո հպատակներին, եթե մեզ վրա արծիվ հարձակվի:

175. Շարունակել միտքը և կազմել փոքրիկ տեքստ:

1. Մոռանալով քաղցը՝ նա երբեմն կանգ էր առնում ու
2. Այդ տան շուրջը բազմագույն ծաղիկներ էին աճում, որոնցով
3. Նա իր խոստումը անպայման կկատարի
4. Ովքե՞ր են այդ դժբախտ մարդիկ, ինչպե՞ս են
5. Սուտն էլ պիտի այնպես ասել, որ
6. Օրը նորից անձրևոտ էր, և պատուհանից երևում էր
7. Եթե մի օր հրաշք կատարվի
8. Երբ մտանք քարանձավ, մեզ թվաց, թե
9. Պատմում էին, որ նա
10. Ամբողջ քաղաքն արթուն էր, որովհետև
11. Հուզված էի լսածս պատմությունից, չէ՞ որ
12. Ձմեռն անցավ, բայց
13. Մեկ էլ մի կրակոց լսվեց ու
14. Եվ ահա մտնում են և հայտնում, որ
15. Երբ անտառը լռում էր
16. Դա միակ աղբյուրն էր, որի
17. Երբ հիշում եմ ծննդավայրս
18. Հին գյուղը, որից մոխրակույտեր էին մնացել միայն,
19. Ես թեև շուտով պիտի հեռանամ հայրենիքից, այնուամենայնիվ
20. Նա իր խոստումը անպայման կկատարի
21. Ես տեսնում եմ մորս վարսերը, և
22. Ես թերթում եմ հնամենի այդ մագաղաթը, և
23. Ինչքան հեռանում էին գյուղից, այնքան
24. Ինձ այնպես է թվում, որ լուսինը
25. Հարձակման նշան պիտի տար հրամանատարը, իսկ
26. Աշխատելիս նա չէր ըմբռնել, որ
27. Իմ կյանքում անջնջելի հետք է թողել
28. Ես պարտավոր էի օգնել նրան, սակայն
29. Քանի որ դու լքեցիր մեզ, ուրեմն
30. Փչում է առավոտյան սառը քամին և

176. Նկարագրել Սոնա փափկի բնավորությունը՝ ելնելով փեքսպում առկա հուշող արտահայտություններից:

Սոնա տատիկը տեղավորվել էր ամուսնու ոտքերի մոտ՝ նույն թախտին, և թոռան համար գուլպա էր գործում, ինչպես կարգն է՝ հինգ շուղով՝ վեցերորդը մազերի մեջ խրած: Ոչ ոք չգիտեր, թե տատիկի ինչին է պետք վեցերորդ շուղը, որը երբեք էլ չէր օգտագործվում, բայց տատիկն այդ գաղտնիքը ոչ ոքի չէր բացում:

Սոնա տատիկը գուլպան գործելիս մշտապես մտածում էր իրեն միաժամանակ անհանգստություն, տխրություն ու վախ պատճառող կարևոր բաների մասին: Այն, որ դուստրերի կյանքն այնքան էլ երջանիկ չդասավորվեց. ավագ դուստրը՝ Լուսիկը, հարբեցողի կին դարձավ, միջնեկի՝ Տաթևիկի ամուսինը Մոսկվա խոպան գնաց, իսկ կրտսեր աղջա՝ Նունեի ամուսինը, դեռ ավելին, գրող է: Դեռ մի կողմից էլ Մանյան՝ վերևի հարևանը, նորից սպիտակեղենը սխալ է փռել. ծրարը էսպես է պետք փռել, իսկ բարձի երեսը՝ այ էսպես: Իսկ Արշակի բնավորությունը գնալով ավելի անտանելի է դառնում. «Կոտրվեց մարդը, երբ թռչակի գնաց, իսկ հետո ավելի կոտրվեց, երբ Վետերանների խորհրդի նախագահի պաշտոնում ընտրեցին մեկ ուրիշին, ավելի ջահելին»: Որ ի վերջո, էս Ամերիկան, ռազմավազքում ուժեղանալով, լրիվ չափն անցնում է. . . Ու էլի շատ ու շատ բաներ, որոնց մասին մտածում էր Սոնա տատիկը, երբ թոռան համար գուլպա էր գործում: Ու ինչքան շատ էր հյուսվում նրա մտքի թելը, այնքան ավելի շատ էր ցուցամատի վրա թել փաթաթվում, ու շուղերն այդքան ավելի բարձր ու արագ էին թխկթխկացնում նրա մատների վրա, ինչից էլ ավելի ու ավելի խորն էր քնի մեջ ընկղմվում նրա ամուսինը՝ ծեր Արշակ պապը:

Ըստ Հովհաննես Ազնաուրյանի

177. Վերնագրել փրված փեքսպերը: Հիմնավորել ընտրությունը:

Ա. Տարիներ առաջ մի կույր էր ապրում: Բոլորը նրան ամեն ինչի լավագույնն էին տալիս, թե՛ ուտելիքի, թե՛ հագուստի և թե՛ ամենալավ անկողինն ու սպիտակեղենը: Սակայն նա միշտ դժգոհ էր և գիշեր-ցերեկ բողբոջում էր, որ իր հետ վատ են վարվում: Բոլորը ջուր էին խմում, իսկ կույրին կաթ էին տալիս, իրենք մի բաժակ բրինձ էին ուտում, իսկ նրան երեքը տալիս, կես բոքոն էին ուտում, նրան՝ երկուսը տալիս, սակայն նա դարձյալ դժգոհ էր: Մի օր էլ, խիստ զայրացած ու հուսահատ, գառ են մորթում, խորովում, սկուտեղի վրա մատուցում կույրին: Նա հոտոտում է, փորձում է շոշափելով որոշել գառնուկի չափսերը, ապա սկսում է ուտել: Սակայն առաջին պատառը կուլ չտված, չի դիմանում և ասում է.

-Եթե սա իմ բաժինն է, բա ձե՞րը որքան կլինի: (ՎՍ)

Բ. Եղջերուն, որսորդներից փախչելով, թաքնվեց խաղողի այգում: Որսորդներն անցան կողքով, և եղջերուն վճռեց, որ այլևս չեն նկատի իրեն, կրճուտեց խաղողի տերևները: Բայց որսորդներից մեկը շուռ եկավ, նկատեց նրան, նշան բռնեց և տեգով վիրավորեց եղջերվին: Զգալով մոտալուտ մահը՝ եղջերուն հառաչելով ինքն իրեն ասաց. «Տեղն է ինձ, խաղողի վազը ինձ փրկեց, իսկ ես ոչնչացրի նրան»:

Ըստ Եզրպոսի

Գ. Մի գնորդ Աֆրիկայում գնում է ալմաստ, որ ձվի չափսի էր, բայց վրան անցք ուներ: Գնորդը քարը ցույց է տալիս ոսկերչին, որը զարմանքից բացականչում է.

-Այդ ալմաստը պետք է բաժանել երկու մասի, որոնցից յուրաքանչյուրը առավել թանկ կլինի, քան ամբողջական ալմաստը: Բայց անզգույշ հարվածը կարող է քարը մանր կտորների բաժանել, որոնք կարող եք աննշան գումարով վաճառել: Ես այդպիսի պատասխանատվություն չեմ վերցնի ինձ վրա:

Նույնն էին ասում մարդուն հանդիպած բոլոր ոսկերիչները: Բայց մի անգամ Լոնդոնից եկած մի ոսկերիչ համաձայնեց քարը մասնատել մեծ գնի դիմաց:

Գնորդը համաձայնում է, և ոսկերիչը կանչում է իր աշակերտին: Երիտասարդը վերցնում է ալմաստը, դնում սեղանին և մեկ հարվածով քարը բաժանում երկու հավասար մասերի:

Զարմացած գնորդը հարցնում է.

-Երբևանի՞ց է այս երիտասարդն աշխատում Ձեզ մոտ:

-Ընդամենը երրորդ օրն է: Պարզապես նա չգիտեր այդ քարի արժեքը և առանց վարանելու հարվածել է քարին:

Այդպես էլ կյանքում, ինչքան երկար ենք մտածում մի հարցի շուրջ, այնքան դժվար է լինում որոշում կայացնելը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ - Ակսել Բակունց
ԱԻ - Ավետիք Իսահակյան
ԱՇ - Ալեքսանդր Շիրվանզադե
ԳԷ - Գևորգ Էմին
ԳՄ - Գուրգեն Մահարի
ԴԴ - Դերենիկ Դեմիրճյան
ԵՉ - Եղիշե Չարենց
ԿՋ - Կոստան Ջարյան
ՀՍ - Համո Սահյան
ՀԽ - Հայկ Խաչատրյան
ՀԹ - Հովհաննես Թումանյան
ՀՇ - Հովհաննես Շիրազ
Մ - Մուրացան
ՆԴ - Նար-Դոս
ՊՍ - Պարույր Սևակ
ՍՋ - Ստեփան Ջորյան
ՍԿ - Սիլվա Կապուտիկյան
ՎԱ - Վախթանգ Անանյան
ՎԹ - Վահան Թոթովենց
ՎՏ - Վահան Տերյան
ՎՍ - Վիլյամ Սարոյան
ՎՓ - Վահրամ Փափազյան
Ր - Րաֆֆի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	3
ՀՆՁՅՈՒՆ ԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	4
ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.....	11
ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	29
ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ.....	61
ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	90
ՏԵՔՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.....	105
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	113

ՍԱՆԹՐՅԱՆ ԼԻԱՆԱ ՍՄԲԱՏԻ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(2-րդ լրամշակված հրատարակություն)

Ստեփանակերտ
2022

САНТРЯН ЛИАНА СМБАТОВНА

СОВРЕМЕННЫЙ АРМЯНСКИЙ ЯЗЫК
СБОРНИК ПРАКТИЧЕСКИХ УПРАЖНЕНИЙ ДЛЯ
СРЕДНЕПРОФЕССИОНАЛЬНЫХ УЧЕБНЫХ
ЗАВЕДЕНИЙ

(2-ое пересмотренное издание)

Степанакерт
2022

SANTRYAN LIANA SMBAT

MODERN ARMENIAN LANGUAGE
HANDBOOK OF PRACTICAL WORKS
FOR SECONDARY VOCATIONAL
EDUCATION INSTITUTIONS

(2nd revised edition)

Stepanakert
2022



Թուղթը՝ օֆսեթ, 80գր: Ծավալը՝ 7,25 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 29.06.2022թ.:
Պատվեր՝ թիվ 55: Տպաքանակը՝ 100 օրինակ: